Բարի



ՍԵՊՏԵՄԲԵՐ 93

gitise

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.— Պ. ՄՆԱՊԵԱՆ . . . . . Գիշերային մահազանգ

24.— ԱՐՄԱՆՏ . . . . . Հոկում

» . . . . . Ցանկն ես երգիս

25.— * * * . . . . . Անտանինա Մահարի

26.— Ա. ՄԱՀԱՐԻ . . . . . Թանկագին գանձը

32.— Գ. ՄԱՀԱՐԻ . . . . . Ռորինզոն Կրուզո

» » . . . . . Հրաժեշտ

» » . . . . . Ես գիտեմ ինչու

» » . . . . . Հարսանիք

» » . . . . . Հասուն մտքով...

» » . . . . . Գուցէ...

34.— Յ. ՕՇԱԿԱՆ . . . . . Սուրէն Պարգեւեան

48.— Պ. ՀԵՐԵԱՆ . . . . . Բերէ՛ք

49.— Ե. ՊԷՐՊԷՐԵԱՆ . . . . . Ժամանակագրութիւն արձակ ստեղծագործութիւն

55.— ԱԽ. ԽՍԱՀԱԿԵԱՆ . . . . . Նամակներ

61.— Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ . . . . . Հայրենի գեղանկարիչ Գ. Խանչեանի հետ

69.— * * * . . . . . Նշմարներ

76.— Ս. Պ. Տ. . . . . Հայկական ձեռագիրներ՝ Ռումանիոյ հաւաքածոներուն մէջ

77.— Շ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ . . . . . Պետրոս Հերեանի «Բառը»

78.— Յ. ԿԱՐԱՊԵՆՑ . . . . . Գալուստ Պապեանի «Հայաստանը»

79.— * * * . . . . . Մշակութային լուրեր

digitised by A.R.A.R.@

433

Բարի

ԱՅՍԱՓԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՍ. ՕԹԹ. ԹԻՒ 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1888 ՊԷՅՐՈՒԹ

Պ. ՍՆԱՊԵԱՆ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՄԱՀԱՋԱՆԳ

*Առտու զուր սպասեցինք դպրոցի զանգին։ Տեղացի ուսուցիչներէն պարոն Փրթին ու ժագը մէջտեղ չէին եւ, տարաձայնութեան մը համաձայն, Խրտրը-Պէկէն եկած Ֆրանսերէն լեզուի ուսուցիչը գաղանօրէն հեռացած էր գիւղէն։ Եկած էր միայն մանկապարտիզպանուհին, որ կիսաբաց դրան կռթնած՝ մելամաղձոտ նայուածքով մը կը հետեւէր փոքրերու շարժումներուն։ Անդին, վերի դասարաններուն տղաքը կը խօսէին ու կը վիճէին նոր անցուդարձերուն մասին։ Գլխաւոր նիւթը Խրտրը-Պէկ այլեւած Ֆրանսացի գրագէտն էր եւ անոր կապուած նոր դէպքերը։ Կ'ըսէին, որ Խրտրը-պէկցիները թագաւորի մը պէս ընդունած են գրագէտը, ծաղկեփունջերով ու ուղերձներով եւ ան յուզումնալից բառերով խօսած էր հայերու մասին, լաւ բաներ ըսած, մեծ բաներ։ Շարունակութիւնը տխուր էր։ Թուրք լրտեսները կրնկակոխ հետեւած էին գրագէտին բոլոր քայլերուն ու, անոր մեկնելէն ետք, ձերբակալած ու խոշտանգած էին հիւրընկալներէն երեւելիները, գիւղապետը, ուսուցիչները։ Ուրեմն, ճիշդ էին ոմանց կասկածները, Ֆրանսացիները ուժ չունէին այլեւս, այլեւս Թուրքերն էին Սանճաքի տէրը, իշխանութիւնը, եւ իշխանութեան ուժով կը վարուէին բնակչութեան հետ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՍՊՕՐԱՆ Гос. Библиотека ՀԱՍՀ-Арм.ССР Մ. Մաշտոցի անվան ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

digitised by A.R.A.R.@

Ջորեպան Ակոյին տղան, որ Անտիոքէն ու չրջակայ գիւղերէն հաւաքած հօրը լուրերով բեռնաւոր կու գար ամէն օր՝ աւելի ծանրացուց մթնոլորտը։ Ըսաւ, որ պաշտօնակ ըրած են չրջանի քաղաքապետը եւ իրենց մարդը նշանակած անոր տեղ։

— Պարա՛պ խօսք, — ըսաւ Մակար։

— Ինչպէ՞ս թէ պարապ խօսք։ Հայրս ըսաւ։

— Ֆրանսայի-պէկցիները կը մեռնի՛ն՝ ատանկ բաներ չեն ընդունիր։ Իրենք չէի՞ն, որ փամփուշտով բզկտեցին Թուրքերուն բարձրացուցած դրօշակը։

Այդպէս բան մը կը յիշէի։ Դեռ քանի մը ամիս առաջ, ոստիկանատան վրայ, Ֆրանսական դրօշակին տեղ Թուրքերը գիշերով պարզած էին Հաթայի դրօշը եւ գիւղացիները, փամփուշտով բզկտելէ ետք զայն, կրկին բարձրացուցած էին Ֆրանսական եռագոյնը։

— Ես դեռ աւելի դէշ բաներ ալ լսեցի, — ըսաւ Ջորեպան Ակոյին տղան։

— Ի՞նչ։

— Թուրքերը կազմած են կասկածելիներուն ցանկը եւ սկսած են խուզարկութեան։

— Որո՞նք են կասկածելիները։

— Թուրքերուն դէմ կռուածները, որո՞նք...

Յօսակցութիւնը մէկէն ընդհատուեցաւ։ Սեմին՝ քահանան, որ զանգը զարնել տուաւ անմիջապէս եւ յայտնեց, որ դպրոցը գոց պիտի մնայ անորոշ ժամանակով եւ աշակերտները պէտք է շուտով ցրուին իրենց տունները։

Արագ մը տակնուվրայ եղաւ ամէն ինչ։ Փոխուեցան մարդոց դէմքերը, գործող անձերը։ Տարիներով հրապարակի վրայ եղողները քաշուեցան մէջտեղէն եւ մինչ այդ աննշմար ապրող աննշան մարդեր սկսան երեւիլ ամէն տեղ։ Հայրս, որ մէկն էր ներքին-վարչութեան անդամներէն, առաջին քաշուողը եղաւ եւ իր տեղը բերին շուրջ երեսուն տարեկան երիտասարդ մը, Ֆիլը, որ առաջին օրէն խոժոռութիւն մը ցուցաբերեց եւ գիւղին մէջ սկսաւ շրջադայիլ ատրճանակը մէջքին եւ ձեռքը միշտ մտրակ։ Հրապարակէն քաշուեցաւ նաեւ քաղաքապետարանի պաշտօնեայ Քելենց Արմենակը, տեղը տալով Դամինուսին, որ Ֆիլին միացաւ շուտով, անոր պէս զինուած, ու խոժոռ։ Անոնք իրենց իշխանութիւնը կը կիրարկէին խստութեամբ։ Առաջին անգամ մտրակ բարձրացուցին Մանեկենց Յակոբին վրայ, յետոյ ծեծեցին Տաթիկին եղբայրը, առուի ափին կոխկրտեցին Արապենց Մարթային պնակեղէնները, սպառնացին աջ, սպառնացին ձախ ու աննշան պատրուակներով սկսան ազդարարութիւններ կարդալ սրտոտ երիտասարդներուն։

Կը տեսնէի այդ բաները, կը լսէի ուրիշներէ, բայց

digitised by A.R.A.R.@

անոնց անդրադարձը չատ չէր յուզեր զիս։ Մանիկենց Յակոբը, արտաս տղայ, արդէն կ'ուզեր գիշեր-ցերեկ, ակռաները կը կճրտէր ամէնուրեք։ Հոգի՛ն պիտի հանէր Ֆիլին, Ֆիլը ո՞վ, որ կր համարձակէր անտինկայի բերել դինք ու մտրակ չաչեցնել կոնակին։ Հոգի՛ն, հոգի՛ն։ Համոզուած էի, որ կրնար հանել հոգին։ Տաթիկն ալ չէր մտրսեր փոքր եղբօրը դէմ գործուած կամայականութիւնը։ Իմ խորագոյն մղձաւանջս կասկածելիներու մասին ջորեպան Ակոյին տղուն հաղորդած լուրն էր։ Անոնց մէջ կը գըտնըւէր նաեւ հօրս անունը, մէկը Մուսա-Լերան հերոսամարտին առաջին գիծերուն վրայ կռուած երիտասարդներէն, չեթէ, որ Արեւելեան բանակին եւս մաս կազմած էր ու մասնակցած Արարայի ճակատամարտին։ Կասկածելիներու ցանկին առաջին անունները ասոնց անուններն էին, չեթէները, կամաւորները։

Վախը չէր փաթաթեր մէջս։

— Ի՞նչ կ'ընեն կասկածելիները, — հարցուցի մեծ եղբօրս։

— Կը կախեն։

— Հայրի՞կն ալ։

— Չեմ գիտեր։

Մեզի տրուած արձակուրդին, եղբայրս մեր պարտէզը կը խնամէր, իսկ ես կովս արածելու կը տանէի, մեր տան կոնակէն բարձրացող Գայրուք լերան մեղի պատկանող բացատը։ Շատ կը սիրէի Սուրբ Սարգիսի մեծազանգուած ժայռակոյտին հարաւ արեւելեան կողմը գտնուող լերան այդ մասը, ուրկէ կ'երեւէր Մուսա-Լերան արեւելեան սահմանը գծող Սեւ գետը, զոր կը պաշտէի ամրան ու միւս եղանակներուն շարունակ երազիս մէջ կը տեսնէի, անոր ջուրերուն հետ վերստին խաղալու հրատոչոր ցանկութեամբ։ Կը հետեւէի հոսանքին, արեւմուտքէն արեւելք, ու աչքերս երկար ատեն կը սեւեռէի կամուրջին։ Մայրս կը պատմէր, որ Ատանայի Ջարդին, Անտիոքի եւ շրջակայ գիւղերու թուրքերը, Մուսա-Լերան գիւղացիները եւս ջարդելու համար՝ մինչեւ հոդ եկած են, իսկ հայրս կ'ըսէր աւելին, նախախնամական բաներ, այդ անյայտող արշաւանքէն բխած արթնութեան դասերուն մասին կը խօսէր, կը պատմէր, որ նոյն շրջանին, մեր հողակտորներէն Ըրզաքէն Դուրոյը հերկած պահուն, իրեն կը հանդիպի որսի ելած եղոնյուղի Հանաեան Պօղոսը եւ նիւթ կը դարձնեն զիրենք տանջող Ատանայի ջարդը։ Հայրս կը պարզէ իր մըտատանջութիւնը։ Թուրքերը մինչեւ սահման եկած ու մեկնած էին առանց յագուրդ տալու ջարդելու իրենց ծարաւին։ Կրնային նորէն գալ։ «Այն ատեն ի՞նչ պիտի ընենք, Պօղոս աղբար, այսպէս ձեռնածա՞լ պիտի նստինք, բան մը պիտի չմտածե՞նք»։ Որսորդը կը զգայ անոր տագնապը, կը հաւատայ անկեղծութեան, կ'առնէ վստահութեան հաւատ-

digitised by A.R.A.R.@

տիքներ ու կը յայտնէ յեղափոխական բջիջի մը գաղտնիքը, ապա կը հրաւիրէ զինք գիշեր մը գաղտնօրէն հանդիպիլ իրեն ու խորհրդակցիլ զէնքերու գործով զբաղող անդամներուն հետ։ Հայրս շուտով կը կատարէ որսորդ բարեկամին թելադրանքը, գիշերով կը ներկայանայ անոր, որ կը ներկայացնէ զինք Գարաճենց Փափազին, Գարաճենց Փափազը՝ նգրուրենց Եիւզպաշին, որոնք կը խօսին իրենց ծրագիրներուն մասին, ցոյց կու տան հրացաններէն նմոյշ մը, յունական կռա, կը յայտնեն զինը՝ երեք օսմանեան ոսկի, քսանրհինգ փամփուշտով։ Այդ վայրկեանին ծայր կու տայ Մուսա-Լերան եօթը գիւղերէն Պիթիասի զինական գործը։ Ամիս չանցած՝ չորս երիտասարդներ կը տիրանան հրացաններու, ինք՝ հայրս, Գրպրանենց Ակիւրը, Զափարենց Գէորգը, Հայտիկենց Գրիգորը, իրարու լաւ ծանօթ, սըրտակից բարեկամներ։

— Այն ատեն, եթէ մէկ փամփուշտ գտնուէր մէկու մը քով, գերդաստանը հունտէն կ՝անցընէր թուրք պետութիւնը, — կ՝ըսէր հայրս, — ատոր համար երդում ըրինք գաղտնիքը դուրս հանողը մահուամբ պատժել։

Զորսը, իրենց միջոցներով, ուրիշ երեք կռա եւս կը գտնեն, ապա կը մտածեն ամբողջ գիւղը զինելու մասին։ Կ՝որոշեն ներկայանալ իրենց վստահութիւնը վայելող երկու անձերու, Մովսէս Զափարեանին եւ Յովհաննէս Ֆիլեանին, որոնք ըմբռնելով չորս երիտասարդներուն կատարած աշխատանքին նուիրականութիւնը, իրենց յարմար դատած անձերը կը հրաւիրեն գաղտնի ժողովի մը, առաջինին տունը, ուր երկու վստահելիները յաջորդաբար խօսք կ՝առնեն, կը գովեն երիտասարդներուն նախաձեռնութիւնը եւ կը շեշտեն գործը ընդհանրացնելու կարեւորութիւնը։ Կը ստեղծուի անսպասելի ոգեւորութիւն մը։ Մէկը կը յայտարարէ ցուր ծախել ու զէնք դնել, միւսը՝ հօտէն մաս մը, երրորդը կը սպասէ չերամին, ուրիշներ ժամանակ կ՝ուզեն։

— Այսպէս սկսաւ ու մեծցաւ գործը, — կ՝ըսէր հայրս, — եւ երբ յեռ բարձրացանք, մեր գիւղը տասնեօթը կռա ունէր։

— Յետո՞յ, — կը հարցնէի անհամբեր։

— Յետո՞յ, — կ՝երկարէր ձայնը, — պատմութիւնը գրուած է, կը մեծնաս, կը կարդաս։

Լուրերը օրէ օր աւելի կը վատթարանային։ Զորեպաններէն ոմանք դադրեցուցին Անտիոք իրենց երթեւեկը, միւսներ՝ Քուրէգը, Ճրյգը, Աճճիքը կը յայտնէին, որ թուրքերը որեւէ պատրուակ կը ստեղծեն ու կը յարձակին հայերուն, յոյներուն, արաբներուն վրայ, նոյնիսկ Ֆրանսացիներուն վրայ կը յարձակին, գրգռիչ ակնարկութիւններ կ՝ընեն, կը հայհոյեն։ Քրիստոնեաներն ու արաբները

digitised by A.R.A.R.@

կը վախնան տուներէն դուրս գալ, կը վախնային քեմալականներէն, որ վերջնական յաղթանակը տարած կը համարէին, կ'ողջագուրուէին իրարու հետ, ցոյցեր կ'ընէին պոռչըտուքներով, հրացանաձգութեամբ։

Իրապէս որքան արագ տակնուվրայ եղաւ ամէն ինչ։ Տարի մը առաջ, Մուսա-Լերան բոլոր գիւղերուն բոլոր տղամարդերը Անտիոք գացին, յոյներուն հետ միացան ապաք Վաթանիներուն ու, մեծամասնութիւն կազմելով՝ յաղթեցին Թուրքերուն, բայց յաղթականը դարձեալ իրենք եղան, — նախագահը Թուրք, ոստիկանութիւնը Թուրք, պաշտօնեաները Թուրք, ամբողջ Անտիոքը Թուրք։

Միտքս կ'երթար Վերի Կալի Թաղէն քիչ մը վերը, Զաղլըղանի ճամբուն եզրին կառուցուած հիւսուածեղէնի գործարանին, «Ոստայն»ին։ Տարի մը առաջ դոցեց անիկա իր դուռները, բայց մարդիկ ամէն յոյս չէին կտրած անկէ։ Կը կարծէին, որ պիտի վերսկսի իր գործին։ Հիմա այդ մասին ոչ ոք կը խօսէր։ Կը մտածէի անոր եռուն օրերուն ու տխրութիւնը աւելի կը ճնշէր սրտիս։ Տասնեակներով երիտասարդներ կ'աշխատէին հոն, մեր եւ շրջակայ գիւղերէն, կրակոտ տղաք, խրտրը-պէկցի չէն ու սրամիտ Թաղէոսը, կնքահայրս, Պէրպէր քեռիս, որոնք դադրած գործին հետ հեռացան գիւղէն ու ա՛լ չդարձան։ Տնօրէնն ալ չվերադարձաւ, Հրաչը, որ լուռ ու խորհրդաւոր մարդ մըն էր, առասպելներու տէր, ամէնքէն սիրուած, ամէնուն Պարոն Հրաչը։ Կը կարծէի, որ Սիմոնին կը վերադառնայ, հանդէսի մը իր խօսքով հոգիները փոթորկած այն հիւանդ ու աղաղուն երիտասարդը։ Ա՛ն ալ չերեւցաւ, ու չերեւցաւ նաեւ միւս երիտասարդը, Գասպարը, որ նոյն հանդէսին մէջ ահեղ ձայնով մը Կովկասը կռիւի հրաւիրեց՝ «Զա՛րկ, Կովկաս»։

— Օրերը լաւ չեն, — ըսաւ օր մը մօրաքոյրս՝ մօրս հետ խօսած ատեն, — մեր տղան կ'ըսէ, որ Թուրքերու իշխանութեան տակ չեմ ապրիր։

Տղան՝ Աստուրեկը, մեծ եղբօր մը պէս էր ինծի եւ նոր Թախիծ մը զգացի, երբ լսեցի իր որոշումը։ Չէի ուզեր, որ ան հեռանայ գիւղէն։ Չէի ուզեր ոչ ոք հեռանայ։ Ոչ ոք, Թուրքերը ի՞նչ կրնան ընել մեզի։ Թող դան։ Նորէն լեռ կը բարձրանանք, կը կռուինք...

Ցաղաղ յեսմիջօրէ էր, ծլարձակման բուռն պահ։ Կաղնիներու եւ խնկենիներու ոստերը կը բուրէին զեփիւռի մը շունչին տակ ու կովս ագահօրէն կը լափէր դալարիքը, իր հետքերէն հողի, խոտի ու ծաղիկներու զգլխիչ բոյր մը տարածելով միջոցին մէջ։

Շուք մը անցաւ վրայէս։ Սուրբ Սարգիսի անմերձենալի կէտին բոյն չինած զոյգ ագռաւներէն մէկն էր, որ գնաց ու միացաւ բոյնին մօտ հսկող իր ընկերոջ։ Ամէն տա-

digitised by A.R.A.R.@

ըի կու գային անոնք, գարնան, կը յարդարէին իրենց բոյ-նը եւ աշնան կը մեկնէին բազմացած ընտանիքով։ Ամէն օր կը նայէի անոնց, եւ իրենց բոյնէն քիչ մը վար փորուած Սուրբին քարայրին, որուն պատերուն պսպղուն գոյներով նկարուած էին Քրիստոսի առաքեալները։

Արու ագռաւը վեր բարձրացաւ նորէն եւ ինձմէ մէկ բլուր անդին կծկուած բացատին վրայ սրաթռիչ խոյացաւ ու կտուցին մեծկակ բան մը՝ սլացաւ դէպի իր ընկերը։ Նորէն կրկայ մը մորթազերծ ըրաւ, մտածեցի ու վազեցի։ Գոտայ թարմ պատեանը։ Քիչ մը անդին՝ ուրիշ մը, երրորդ մը, չորրորդ մը։ Հաւաքեցի բոլորը եւ վերադարձայ կո-վուս մօտ։ Դալարիքին վրայ սկսայ դարձեալ քննել պատ-եանները ու զարմանալ։ Եղբօր հետ քանի՞-քանի՞ անգամ զուր աշխատած էինք կրկայ մը մորթել, մինչդեռ Սուրբ Սարգիսի ագռաւը մէկ հարուածով կ'անջատէր անոնց մի-սը պատեանէն։

Կովս փնչեց ռունգերը ու ընկրկեցաւ։ Ետեւ դար-ձայ։ Գլխուս վրայ կանգնած էին Խաչերենց Հաննէսը եւ Շաքուրը, երկու բարձրահասակ ու թիկնեղ երիտասարդ, զէն ի ձեռին եւ փամփուշտակալները խաչկալ կապած։ Այ-լայլեցայ։ Կարծես Հաննէսը մեր ազգականը չէր ու Շա-քուրը մեր դրացին չէր։ Հեքիաթներուն մէջ նկարագրուած առասպելական տիպարներ թուեցան անոնք ինծի, լեռնէն բխած ոգիներ, քաջքեր։

— Զըլա՛յ որ մէկուն բան ըսես, կը սպաննեմ, — սպառնաց Խաչերենց Հաննէսը։

— Ո՛չ մէկուն, — ըսաւ Շաքուր՝ զէնքին փողը ինծի դարձուցած։

Լեզուս բռնուեցաւ։

Առանց ժամանակ կորսնցնելու, աջին տարածուող մրտենիներու ու մորմենիներու թաւուտներուն մէջ մխրճ-ուեցան անոնք եւ ուղղուեցան Սուրբ Սարգիսի աջին խտա-ցած կաղնիներու անտառին կողմը։

Աչքերս կրկին կամուրջին վրայ կանգ առին։ Թուր-քեր չէին երեւեր հոն, բայց ինծի թուեցաւ, որ կռիւը սկը-սած է։

Անմիջապէս բռնեցի կովուն պախուրցէն ու բարձրա-ցայ այն ամրանիստ ժայռին մօտ, որուն շուրջ եղբօր հետ նոր քարեր շարած էինք ու կազմած ապահով ամրոց մը։ Կռիւի ատեն այդ դիրքէն պիտի հարուածէինք Թուրքերը։ Մարակոցին փոքր բացուածքէն քննեցի տարածութիւնն-երը, արեւմուտքէն արեւելք՝ կամուրջէն մինչեւ Անտիոք, արեւմուտքէն հարաւ՝ Կարմիր-Լեռնէն մինչեւ Ճեպէլ-Աք-բա։ Բանակի ու խուժանի չհանդիպեցայ նորէն։ Գիւղին մէջ ու դիւղէն քիչ մը անդին, Անտիոքի ու Սանտրանկի ճամբաներուն վրայ կ'երեւէին ջորեպաններ միայն, նախ-բապաններ, հովիւներ։

digitised by A.R.A.R.@

Արեւամուտին իջայ տուն։ Դարձեալ չգտայ հայրս։ Մայրս կովը կթելու պատրաստութիւն կը տեսնէր, մեծ քոյրս կաթսային տակի կրակը կը բորբոքէր, պղտիկները ջուրին հետ կը խաղային, իսկ եղբայրս, Թթենիին տակ նստած՝ կը դիտէր դիմացի թաղը, որ կ'երկարէր Զագալենց տունէն մինչեւ Էֆերիմին տունը, իր մէջ առնելով Սէրգենք, Ռէճճապենք, Իշնունենք։ Զատիթափին վրայ, միւսներէն քիչ մը մեկուսի կառուցուածը Մուշտենց Մուսային տունն էր, ու Մուշտենց Մուսային տունը սահմանագլուխն էր Հաննա պապուկի Թթենիի մէկ պարտէզին, որ դահավէժ ընթացքով մը կ'երկարէր մինչեւ մեր աղբիւրներուն ջուրերը հաւաքելով դէպի Որոնդէս ուղղող աղմկայոյզ ձորը։ Քեմալական եւ Վաթանի բառերը մեր գիւղը հասած օրերուն, Հաննա պապուկին պարտէզը նոր պատկերով մը կապուեցաւ մեր յիշողութեան։ Օր ցերեկով բարձրացած զէնքի անօրինակ ձայներ դուրս նետեցին մեզ ու մենք դուշակեցինք կրակողը, որ, մեր դիմացէն դարաւանդէ դարաւանդ ցատկելով՝ մխրճուեցաւ ընկուզենիներով ու սօսիներով կամարուած ձորը, եւ անկէ ոչ ոք իմացաւ ո՛ւր։ Եղելութեան դրդապատճառը իմացանք երեկոյեան։ Երիտասարդը Հաճի Հապալիէն էր. կառավարութեան հետ ունեցած բախումի մը պատճառով հետապնդման առարկայ ու Գիվալիկենց Կարպուշին այդ օրուան հիւրը, որ, զինք անակնկալի բերած երկու ժանտարմները մէկդի հրելով՝ նետուած էր փարախ, ուրկէ նշանի բռնած էր հետապնդումը շարունակող քեմալական զոյգ պաշտօնեաները, Շիւքրին՝ գլուխէն, Տուրմըշը՝ փորէն։ Շիւքրին անմիջապէս փչած էր շունչը, իսկ Տուրմըշը դեռ հիւանդանոց կը մնար։ Ցաջորդ օրերուն որքա՜ն ժանտարմներ եկան մեր գիւղը, ձիաւոր, սուինաւոր։ Հարցապնդուեցան շատեր, ոմանք Անտիոքի բանտը առաջնորդուեցան, բրտութիւններ գործադրուեցան երիտասարդներու վրայ, բայց Շիւքրին ու Տուրմըշը գիտապաստ ըրած երիտասարդին հետքը չգտնուեցաւ։ Եղբայրս ոգեւորութեամբ վերապատմեց դէպքը եւ ապա նոյն ոգեւորութեամբ յիշեց նոյն ձորը յաճախ իրեն թաքստոց ընտրած Պլդէշենց Առաքելը, չէթէ եւ Արեւելեան բանակի կամաւոր Առաքելը, որ, ըստ հօրս վկայութեան, Թուրքաք Գալէի մէջ իրենց վրայ անակնկալօրէն յարձակած թուրքերէն երեքը մէկ վայրկեանէն ճամբած էր միւս աշխարհ։

Շիւքրին ու Տուրմըշը դեռին փուած երիտասարդին ու Առաքելին պատկերներուն հետ մտաբերեցի սպառազէն ու սպառնալից էնքերենց Հաննէսն ու Շաքուրը, բայց դիմացայ գաղտնիքը յայտնելու փորձութեան։ Կը վախնայի, որ կ'իմանան յանկարծ ու կը մեռցնեն զիս։

Կաթը ներս բերած պահուն՝ մայրս կռահեց անհանգստութիւնս.

digitised by A.R.A.R.@

— Դուն հանգիստ չես երեւիր։ Տե՞ղ մը կը ցաւի քեզի։

— Ոչ, — ըսի կտրուկ ու դէմքս դարձուցի մեր վիթխարի դափնիին շուրջ պտըտող ծիծեռնակներուն։ Զկրցայ սակայն անոնց զուարթ թռիչքներուն հետեւիլ։ Ուր որ նայէի՝ խաչերենց Հաննէսն ու Շաքուրը կը պատկերանային մտքիս։

Նոր գիշերին՝ երազիս մէջ տեսայ զիրենք, Հաննէսն ու Շաքուրը, Սուրբ Սարգիսի ստորոտը, դիրքերու ետին, աւելի հակայացած, փամփուշտակալները աւելի խիտ, զէնքերուն փողերը ուղղած դէպի Մինասէն Սըրթը, դէպի կամուրջ ու Անտիոք։

Արթնցայ։

Հայրս չէր վերադարձած տակաւին։

Ցիշեցի թուրքերուն կաղմած ցանկը։

Կոպերս իրարու չեկան այլեւս։

Անձկութիւնս հետզհետէ կ'աճէր։

Մութին մէջ խարխափելէն իջայ գոմ, չոյեցի կովուն գլուխը ու վերցուցի յարդանոցին մէջ պահուած յունական կռա հրացանը։ Տաք հոսանք մը անցաւ մարմնէս։ Առաջին պատանութեան սէրերէս մէկն էր զէնքը, միւսը՝ ջուրը, կը հրճուէր հոգիս, երբ ձեռքս զէնքի մը դպնար կամ մարմինս ջուրին մէջ զգայի։ Փայփայեցի հրացանը։ Վերցուցի ուսիս, լարեցի ու քաշեցի դիւթական բլթակը։ Գլուխը ինծի դարձուցած կովը յանկարծ դադրեցուց որոճալը։ Նորէն լարեցի բլթակը։ Կովը փոխեց դիրքը։ Ոտնաձայն մը։ Վախցայ ու կռան մարմինիս սեղմած՝ կծկըւեցայ անկիւնը։ Ոտնաձայնը մօտեցաւ։ Ճռնչեց գոմին դուռը, բռնկեցաւ լուցկի մը ու հօրս կերպարանքը փայլատակեց դիմացս, ճիշդ խաչերենց Հաննէսին ու Շաքուրին պէս, փամփուշտակալը խաչկապ կապած ու Ֆրանսական երկայն հրացան մը ուսին։

— Հո՞ս ինչ կ'ընես այս ժամուն, — հարցուց հայրս առանց իրարանցումի։

Ձայն չհանեցի։

— Գնա՛ քնացիր։

Գոմէն դուրս ելած պահուս՝

— Կը սպաննեմ, եթէ մարդու բան ըսես։

Գունը նորէն հեռու մնաց ինձմէ։ Անցուդարձերը դժուար կը տեղաւորուէին երեւակայութեանս մէջ։ Առաու կանուխ ո՞ւր կ'երթար հայրս, ուշ գիշերին ուրկէ՞ կու գար։ Ո՞ւր տեղաւորած էր մինչեւ հիմա այդ նոր զէնքը։ Հօրեղբայրս ալ կանուխ կ'երթար եւ ուշ կը վերադառնար։ Խաչերենց Հաննէսը, Շաքուրը, հայրս, հօրեղբայրս։ Միւսներն ալ այդպէս զէնք ու փամփուշտակալներ ունէին ուրեմն, քեռիներս, մօրաքոյրերուս տղաքը, Պարոնը՝ անպայման, Սէլլը Պատանը՝ անպայման, Մաննիկենց Ցակո-

digitised by A.R.A.R.@

բը՝ անպայման, Ֆիլլին, Դամինուսին, Դանիէլին բոլոր հակառակորդները, Էկրբը, Իւրիւցենց Մկրը, Թրթթը Մալլոն, Գրմպը, Սիւլիւքը, Ֆիւչիւքը, Ֆրէնքեանենց Լեւոնը, Աբմենակը։ Անպայման, անպայման, կ'ըսէի իւրովի ու հպարտութեամբ կ'ուռէր սիրտս։ Դեռ ամիս մը առաջ, ու անկէ առաջ, ու նախորդ տարիներուն ասոնք միշտ միասին կ'ըլլային, սրճարաններուն մէջ, հանդէսներուն, խնճոյքներուն, բայց հիմա մէջտեղ չէին։ Մէջտեղ եղողները իրենց հակառակորդներն էին, Ֆիլը, Դամինուսը, Դանիէլը, դիմափոխ պաշտօնատարը, անժպիտ մարդեր, չրջահայեաց, խուզարկու, վախազդու։ Միւս դիւղերէն եկողներն ալ նոր դէմքեր էին ու ասոնց պէս էին, խոժոռ, պաշտօնական, անբարեկամ։

Շաբաթ առաւու մը եկան նաեւ Տիքը եւ Թուրքերուն նշանակած շրջանի նոր քաղաքապետը, բարձրահասակ ու նիհար մարդ մը, չաբահայեաց։ Անոնց ետեւէն՝ երկու ոստիկաններ։ Անոնց ներկայութեան, օրը իրիկուն չեղած՝ մունետիկը սկսաւ շրջիլ թաղերը եւ յայտնեց, որ գպրոցը պիտի վերաբացուի եւ երկուշաբթի բոլոր աշակերտները պարտաւոր են ներկայանալ նոր ուսուցիչին։ Եղբայրս փութաց գիւղին կեդրոնը։ Եկաւ։

— Գիտե՞ս ով է նոր ուսուցիչը։

— Ո՞վ։

— Դանիէլը։

— Դանիէ՞լը։

— Խոզե՛ր, — երկարեց ձայնը քրքջալէն։

Դանիէլը պանդոկ մը ունէր գիւղին կեդրոնը ու մեր տան մօտ գտնուող իր մէկ հողակտորին վրայ խոզանոց մը, ուր կը պահէր յիսուն-վաթսուն խոզեր, որոնք, առանց բացառութեան, ճչացած էին մեր արձակած ամէնօրեայ քարերուն տակ։

— Դանիէլը դպրոց գացա՞ծ է, — հարցուցի եղբօրս։

— Չեմ գիտեր։

— Ո՞վ ուսուցիչ ըրած է զինք։

— Թուրքերը։ Ո՛վ։

Մուսա-Լեռան ըմբոստութեան, փոխանակ լեռ բարձրանալու՝ Դանիէլ ընտրած էր դաղթականութեան ուղին։ Փոր Սաիտէն ու Արեւելեան բանակէն վերադարձողներուն հետ՝ Համայէն փութացած էր գիւղ եւ միշտ կը գտնուէր ընդհանուրին հակառակ դիրքերու վրայ։ Վերջին քուէարկութեան, Վաթանինները ձգած՝ քուէարկած էր ի նպաստ քեմալականներուն եւ աւելի խորացուցած իր եւ համագիւղացիներուն միջեւ բացուած հին խրամատը։ Պանդոկատէր, խոզ պահող ու հակառակորդ մարդ էր Դանիէլը ու Դանիէլը հիմա մեր ուսուցիչն էր։

Եղբօրս ձեռքը տուին մեծկակ գիրք մը, ինծի՝ բա-

digitised by A.R.A.R.@

բակ, խոշոր տառերով։ Ֆրանսերէնի պէս էին տառերը, միայն թէ ոմանց տակն ու վրան զոյգ-զոյգ կէտեր կային ու աղեղնաձեւ նշաններ։ Շուտով վարժուեցանք տարբերութիւններուն ու սկսանք կարդալ։ Առաջին նախադասութիւնները չրջուն վաճառորդներուն բերնին վայլող բաներ էին եւ մենք՝ ես, Մախուլը, Գուրտիշը, միւսները, չրջուն վաճառորդներու պէս սկսանք ճչալով կարդալ.

Սարը էլմա՛, թաթլը էլմա՛,
Պիր թէնէսը օճ փարա։

Հայրս մէկ անգամ միայն, գիշեր մը, լսեց Թուրքերէն մեր ընթերցումը, կճրտեց ակռաները, հայհոյեց ու նորէն սահեցաւ մութին մէջ։

Թուրքերէնը աւելի դիւրին Թուեցաւ ինծի, քան Ֆրանսերէնը։ Տրուածը սահուն կը կարդայի, բառերուն նշանակութիւնն ալ միտքս կը պահէի, բայց պարոն Դանիէլ երբեք գոհ չէր մնար ինձմէ։

— Ֆրանսերէնի պէս կը կարդաս։ Քանի՞ անգամ պիտի ըսեմ քեզի, որ ասիկա Ֆրանսերէն չէ, Թուրքերէն է, Թուրքերէ՞ն, օսմանեան պետութեան լեզուն։

Ամէնօրեայ իր սաստը ու սաստին հետ երբեմն գործածած նոնենի ճիպոտները խորապէս կը վիրաւորէին զիս եւ անպօր կատաղութեանս մէջ վրէժխնդրութիւն մը կը խմորուէր սրտիս։ Եղբայրս ալ նոյն դանդատը ունէր։ Միասին կազմեցինք փոխվրէժի մեր ծրագիրը։ Ամառը, արձակուրդին անմիջապէս ետք, երբ խոզերուն այցելութիւն տար, ձորակէն անցած պահուն, երկու կողմէն քարերու տեղատարափի մը տակ պիտի առնէինք զինք ու քաշէինք լեռ։

— Եկէք նայինք ի՞նչ կը սորվեցնէ ձեզի նոր ուսուցիչը, — ըսաւ երեկոյ մը Տէրտէր, երբ դարձեալ տրխրամած դէմքերով տուն կը վերադառնայինք։

Տէրտէրը վերադիրն էր մեզ կանչողին, որ մեր գիւղին ամէնէն զուարթախոհ երիտասարդներէն էր, կարճահասակ, քիչ մը լեցունկեկ ու մշտաշարժ։ Դպրոցի ճամբուն յաճախ կը հանդիպէինք իրեն, եղներուն հետ կամ առանձին։ Հոգադրած մարդ էր, բայց կը սիրէր մեզ, դըպրոց գացող բոլոր մանուկները։

— Ինչո՞ւ այլեւս չէք երգեր։

Տէրտէրը երգել ալ կը սիրէր, պարել ալ։ Առաջ, երբ բակը կամ գոմին առջեւ հանդիպէինք իրեն, անպայման կ'երգէինք մեր սորված նոր երգը կամ հին երգ մը եւ ինք կը հրճուէր։ Պարոն Դանիէլը նոր երգ չէր սորվեցներ մեզի եւ չեմ դիտեր ինչու չէինք երգեր հին երգերը։

— Սիրուս երգ մը կ'ուզէ։ Բան մը երգեցէք, — ըսաւ։

Ցիշեցի մեր մէկ երգը, իր պարը։ Քանի մը ամիս

digitised by A.R.A.R.@

առաջ էր։ Նոյեմբերի կիսուն, ցրտաշունչ առտու մը։ Ճիշդ իր տան մօտ տեսանք Դանիէլը եւ հետը երեք գիւղացիներ, կիրակնօրեայ հագուստներով։

— Ո՞ւր կ'երթաք այսպէս սաղուած, — բարձրաձայն հետաքրքրուեցաւ Տէրտէր։

— Թաղումի, ծօ, թաղումի, — պատասխանեց մէկը՝ ճամբան շարունակելով։

— Ինոր թաղեցէք, խո՛ր, — պոռաց անոնց ետեւէն Տէրտէր։

Եղբայրս պարզեց ինծի խնդիրը։ Ամթաթիւրքը մեռած էր եւ Դանիէլ եւ իր համախոհները Անտիոք կ'երթային՝ հեռակայ կարգով յուղարկաւորութեան մասնակցելու։ Տէրտէր ուրախ հայհոյեց, եղբայրս խնդաց, իսկ ես զուարթ տրամադրութեամբ սկսայ երգել Տէրտէրին հարսանիքին օրը իր անուան յարմարցուած «Եար կիւլէ»ն, զոր մասնաւոր շեշտով ու կատաղօրէն երգեցին հարսնեւոր երիտասարդները, երբ պսակէն ետք հարսը ոտք կը դնէր փեսայի տան սեմին.

Եար կիւլէ, եար կիւլէ,
Մեր արաղին տիկը, մեր արաղին տիկը,
Հայեր քերին, հայեր քերին,
Տէրտէրին կնիկը։

Տէրտէրը գոմի թին օդին մէջ երերցնելէն՝ սկսաւ պարել։ Կինը դուրս ելաւ եւ խենթ-խենթ բաներ ըսաւ իր խենթ ամուսինին։

— Հարսանիքը այսօր է, կնիկ, եկուր, «Եար կիւլէ»...

Նոյն ուրախ մարդը չէր կարծես հիմա Տէրտէր։ Կը սպասէր մեր երգին, բայց տրամադրութիւնը տեղը չէր։

— Ըսէք նայիմ ի՞նչ սորվեցուց ձեզի նոր ուսուցիչը, — հետաքրքրուեցաւ դարձեալ։

Եղբայրս արագ-արագ կրկնեց իր գիրքին առաջին նախադասութիւնը.

— Ճիւմհիւրիէթ պայրամընա կիտիորուզ, կիւլէ՛-կիւլէ՛, թուրք եավրուլարրզ, կիւլէ՛-կիւլէ՛

— Ճիւմհիւրիէթ պայրամընն մեսեպը..., — հայհոյեց Տէրտէր ու մտաւ գոմ։

Սարը էլմայէն ու Ճիւմհիւրիէթ պայրամէն զատ ուրիշ բաներ ալ սորվեցուց մեզի պարոն Դանիէլ, դէպքեր պատմեց Թուրքերէն լեզուով ու շարունակ Թուրքերը գովեց։ Vive la France, կեցցէ Հայաստա՛ն, Ձայն մը հնչեց, Ծապեց արեւ, ատոնք անցա՞ն, մոռցէք, մոռցէ՛ք։ Այստեղ Թուրքիա պիտի ըլլայ եւ այն ատեն նայինք ինչ պիտի ընեն ձեր հերոսները։

Պարոն Դանիէլ ամէն օր կը կրկնէր այս բաները, դասէն առաջ յաճախ, դասի պահուն, դասէն ետք, սպառնա-

digitised by A.R.A.R.@

լից չեշտով մը, ինքնավստահութեամբ։ Ես չէի կրնար ըմբռնել իր բոլոր ըսածները։ Ինչո՞ւ կեցցէ Հայաստան պիտի չպոռայինք, ինչո՞ւ պիտի մոռնայինք Զայն մը հնչեցը, ոտքի ելլելէ առաջ սորված մեր միւս երգերը, Պանք Օթոման գրուած է, Սթամպուլը պիտի լինի արեան ծով, Ախ, Ֆեռայիներ։ Եւ յետոյ՝ Մուսա-Լեռը Մուսա-Լեռ էր, ինչո՞ւ Թուրքիա պիտի ըլլար, Թուրքերը ի՞նչ ընելու պիտի գային մեր գիւղը։ Հարցումներս կը մնային օդէն առկախ, մշուշը աւելի կը թանձրանար մտքիս, ապա՝ կազմուած ցանկին յաճախանքը կը պղտորէր երեւակայութիւնս, կը յուսաբեկուէի, կը յուսալցուէի անմիջապէս։ Հայրս, Էսքերենց Հաննէսը, Շաքուրը, փողփողուն հրացանները, փամփուշտակալները։ Ո՛չ, Թուրքերը չեն համարձակիր մօտենալ անոնց։ Արեանս մէջ՝ վախը հետզհետէ տեղի կուտար աճող ոխի մը։ Եղբայրս կ'ըսէր, որ արաբներն ալ թշնամի են Թուրքերուն ու մեզի հետ են, Վաթանիները, Իպրահիմ Հանանոն, յոյներն ալ, ալաւիներն ալ։

— Պարոն Դանիէլը Թուրքերուն կը սպասէ, որովհետեւ մեզ չի սիրեր, — ըսաւ անգամ մը եղբայրս, երբ դպրոցէն դարձիս կովս արածելու կը տանէի խոզանոցին վերջը ու ինք ջուրը մեր պարտէզին կողմը դարձնելու կ'երթար, — ղեռ չա՛տ կը սպասէ Թուրքերուն։ Գոլոնել Գոլէն նորէն եկած է։ Ֆրանսացիները որոշած են Մուսա-Լեռն ու Քեսապը Թուրքերուն չյանձնել։

Գոլոնել Գոլէ։ Ամէնուն բերանն էր այս անունը։ Գոլոնել Գոլէն գնաց, եկաւ, ըսաւ, լռեց, որոշեց, խոյս տըւաւ։ Միակտուր տրամադրութիւն մը չկար իրեն հանդէպ, միաժամանակ յոյսի եւ յուսաբեկութեան աղբիւր էր ան։ Եղբայրս անպայման նոր բան մը լսած էր։ Ցոյս մը բոցավառեցաւ սրտիս եւ առուին մօտէն հաւաքած բուռ մը ընտիր խոտը ոգեւորութեամբ երկարեցի կովուս դունչին։

— Ա՛ռ կովդ եւ շուտ հեռացիր այստեղէն, — լսեցի բարկաձայթ ձայն մը։

Պարոն Դանիէլն էր։

Չշարժեցայ տեղէս։

— Քեզի կ'ըսեմ, չո՛ւտ։

Անթարթ նայեցայ աչքերուն, արեանս մէջ զգալով փայլակնային տողանցքը Գոլոնել Գոլէին, Ֆրանսացիներուն, հօրս, Էսքերենց Հաննէսին, Շաքուրին։

— Դեռ տարի մը առաջ, — շարունակեց պարոն Դանիէլ աւելի բորբոքած, — ձեր կաղնիէն ճիւղ մը կոտրած ատենս, հայրդ ահագին խնդիր հանեց հետս, հերո՞ս հայրը դ, չո՛ւտ։

— Ճիւմիւրիէթ պայրամընա կիտիորուզ, կիւլէ՛-կիւլէ՛, թիւրք եավրուլարըզ, կիւլէ՛-կիւլէ՛, — լսեցի քիչ մը անդիէն եղբօրս քրքջացող ձայնը։

Պարոն Դանիէլ ետին դարձաւ։

digitised by A.R.A.R.@

— Սարը էլմա՞, քարը էլմա՞, պիր թեմէսը օն փարա, — ճչացի իմ կարգիս։

Պարոն Դանիէլ քննեց չորս կողմը։

— Գարա տէնի՞զ, — բացագանչեց եղբայրս։

— Ա՛ֆ տէնի՞զ, — արձագանգեցի ես։

Պարոն Դանիէլ մէկ եղբօրս կը նայէր, մէկ՝ ինծի, ու կը թուէր, թէ դժուար կ'ըմբռնէր մեր համարձակութիւնը։ Մեկուսի տեղ էր, վերը՝ անտառ, վարը՝ մեր տունը, ու հայրս՝ ամիսներէ ի վեր անհետ։ Դարձաւ ու անչչուկ բռնեց գիւղամէջի ճամբան։

— Մարմարա տէնի՞զ, — պոռաց եղբայրս հետուէն։

Երկուշաբթի ոչ մէկ ակնարկութիւն ըրաւ պարոն Դանիէլ այդ մասին, նռնենիներու ճիպոտներն ալ ձեռք չառաւ ու ինծի թուեցաւ, որ թուրքերը շատ հեռու են ճէպէլ-Մուսայէն։

Բայց պարոն Դանիէլին ըսածը եղաւ։ Ֆրանսացիները տէր չմնացին իրենց խոստումին, որոշեցին քաշուիլ Սանճաքէն ու թուրքերը սկսան մօտենալ մեզի, քառասուն հազար զօրքով, յիսուն հազար դրօշակներով, բեռնակիրի տարաղ հագած լրտեսներով։ Մօտեցան իրաւատիրոջ պէս, անոպայ ու վայրագ։ Ըսին, որ անոնք կոխկոտած են ֆրանսական դրօշակը, բայց ֆրանսացիները բան չեն ըսած։ Սպաննած են անոնց գինուորները, բան չեն ըսած։ Անպատուած են կիները, ֆրանսացիները նորէն լռած են։ Ըսին, որ Սանճաքի նախագահ Թայֆուր Սէօքմէն Անգարա գոցած ու Իսմէթին յանձնած է Սանճաքի դրօշակը եւ ֆրանսացիները չեն բողոքած։ Բոլոր լուրերը մոայլ էին։ Մէկ ազօտ յոյս կար միայն։ Մեկնելէ առաջ, ֆրանսացիները մեզ պիտի փոխադրէին ուրիշ տեղ մը, թուրքերէն հեռու, Լիբանան, եւ այլեւս հոն պիտի ապրէինք։

Շուտով գոցուեցաւ դպրոցը ու հրապարակէն խորհրդաւոր ձեւով մը քաշուած մարդերը մէջտեղ եկան նորէն, միասին եղան, սկսան նորէն բարձրաձայն խօսիլ, դատել թաւալող դէպքերը, հայհոյել բախտին, թուրքերուն ու, գարմանալի բան, ֆրանսացիներուն ալ, ֆրանսացիներո՞ւն ալ։

— Իմանքը..., — կը մոլտար հայրս, — նորէն ծախեց մեզ։

Ու հօրս հետ ու անոր պէս մոլտալով կը հայհոյէին միւսները, Էկրբը, Գրպրանենց Պօղոսը, Փրթին, Ժաղը, Էսքերենց Հաննէսը, Շաքուրը, բոլո՛ր։

— Կիլիկիոյ պէս ըրաւ գաղփեղէնը։

— Փեղեվէնկին ազգը։

— Փուշտը։

— Թո՛ւ...

Ոմանք, մա՛նաւանդ Համա ու անապատ տեսածները, նուաղ բուռն էին, անոնց մէջ նոյնիսկ երախտագիտա-

digitised by A.R.A.R.@

կան զգացումներ սնուցանողներ կային Ֆրանսացիներուն հանդէպ, որ գոնէ ժողովուրդին մասին կը մտածէին։ Շեպէլ-Մուսան չի փախչիր։ Կարեւորը Թուրքերէն հեռու ապրիլն է, ապրի՛լն է, վաղը ինչ կ'ըլլայ, ինչ չըլլար։ Մէկ բան անվիճելի էր, տեղափոխութիւնը։

— Մուսա-Լեռան միւս գիւղե՞րն ալ մեզի հետ պիտի երթան, — հարցուցի հօրս։

— Բոլորը։

Միւս գիւղացիներէն քիչերը կը ճանչնայի, կ'ուզէի տեսնել բոլորը, մա՛նաւանդ իմ երեւակայութեանս մէջ բացառիկ տեղ գրաւած տիպարները։

— Հանտեան Պօղո՞սն ալ։

— Հանտեան Պօղոսը մեռաւ։

— Գարամենց Փափա՞զը։

— Ան ալ։

— Նգրուրենց Եիւզպա՞շը։

— Եիւզբաշը Թաթար-Այանկի կռիւին զարնուեցաւ։

— Բոլո՞ր քաջերը մեռան։

— Ո՛չ։ Ի՞նչ բոլորը։ Շատերը ճինի պէս են դեռ։ Հապաչենց Մարտիրոսը, Ճանսրգը, Ճռոենց Եսային, Այնթապ Թոմմասը։ Հիմա բոլոր չեմ յիշեր։ Երբ իրարու միանանք՝ բոլորը ցոյց կու տամ քեզի։ ...Ադումենց Միհրանը, Գայուսենց Պետրոսը...

Սկսայ կրկնել անուններ, նորէն ու նորէն. «Հապաչենց Մարտիրոսը, Ճռոենց Եսային, Ճանսրգը, Հապաչենց Մարտիրոսը, Այնթապ Թոմմասը, Ճանսրգը, Գայուսենց Պետրոսը, Ադումենց Միհրանը, Այնթապ Թոմմասը, Ճրոենց... Ադումենց...

Մեկնումի պատրաստութիւնները տեղի կ'ունենային թափով, տխրութեամբ, հայհոյանքի ու անէծքի բուռն ելեւէջներով։

Լեռան բարձունքներուն, Տամլաճըք եւ շրջակայքը բնակութիւն հաստատած Տալաղենց տղաքը եւ Գրպրանենք իրենց արշաւներով վար իջան։ Պիւլբրի նոր-գէրթունցիներն ալ Պիթիաս լեցուեցան, գիւղին շրջագիծէն դուրս չեկան նաեւ հօտ, կով ու յծկան ունեցողները։

Անշարժ կայուածները անձեռնմխելի հռչակուած էին, շարժունները կրնային ծախել կամ մեզի հետ տանիլ։ Կ'ըսէին, որ մեզի համար նշանակուած գաղթավայրը արօտներ ունի, լեռ, դաշտեր, ադրիւր։ Կրնայինք հոն շարունակել մեր գործը, մշակել հողը, կենդանի պահել։

Ոմանք թերահաւատութեամբ դիմաւորեցին այդ տեղեկութիւնը եւ Կարմիր-Լեռան Սանտրանկի Թիւրքմէններուն կամ Զեվլիկէն եկող ալաւիներուն ծախեցին իրենց յծկանները, կաթնտուները, այծերը։ Ուրիշներ չուզեցին,

digitised by A.R.A.R.@

չկրցան բաժնուիլ իրենց անասուններէն։ Քրդենց Սահակը չծախեց իր հօտը, մօրաքրոջս տղան չծախեց իր կովն ու ցուլը։ Սարգիս հօրքուրայրը չծախեց լծկանը, Իւրիւցենք չծախեցին, Տալաղենք, Էշէրիկենք, Քերքէզենք, Պալապանենք, Ընդիշենք ու Մրիսըշանենք ոչ մէկ չունչ պակսեցուցին իրենց նախիրներէն, Աղուէսենք ալ, Թիմպերենք, Ապանըզենք ալ։ Պիտի հաւաքէին բոլորը ու Որոնդէսը ճեղքելով՝ Ճեպէլ-Աքրայի կիրճերէն անցնէին Քեսապի մօտերը, Պասիթ, եւ անկէ՝ Լիբանան։ Հայրս երկընտրանքի մէջ էր տակաւին։ Ալաւի մը եկած-գացած էր մօտը։ Դարձեալ պիտի դար ու այս անգամ պիտի որոշուէր մեր կովուն բախտը։

Եղբօրս հետ ամէն օր կ'երթայինք գիւղամէջ ու կը հետեւէինք անցուդարձերուն։ Մեկնելու կամ մնալու ազատութիւն չնորհուած էր բոլորին։ Մնալու եւ Թրքական հըպատակութիւն ընդունելու յօժար մարդոց թիւը քիչ էր, կը խօսէին քանի մը անձերու մասին միայն, Դանիէլին, Ցիլին, Դամինուսին ու ասոնց համոզած ու համակիր քանի մը ուրիշներու, Խչուրուպին, Զաւուշին։ Սիրոս սկսաւ նորէն անձկութեամբ տրոփել, ճիշդ այնպէս՝ ինչպէս կը տրոփէր առաջ, երբ լսէի մէկու մը մեկնումը...

Տարբեր զգացում մը համակեց զիս, երբ ամէնուրեք ներկայ Պըլլիթը մեծ խորհրդաւորութեամբ մը յայտնեց, որ մեռելներն ալ մեզի հետ պիտի տանինք։ Ո՞վ պիտի հանէր զանոնք գերեզմաններէն, ո՞ւր պիտի դրուէին, ինչպէ՞ս պիտի տանէինք մեռելները մեզի հետ։ Ուշ գիշերին, երբ հայրս տուն եկաւ, ցասկեցի անկողինէն ու հարցուցի.

— Իրապէ՞ս մեռելները մեզի հետ պիտի տանինք։

— Ո՞վ ըսաւ։

Տուի գատարկապորտին անունը։

— Այո։

— Ինչպէ՞ս։

— Բոլորը պիտի չտանինք։ Տամլանըքի մեռելները միայն։

— Ինչո՞ւ միայն անոնք։

— Միւսները հերոս չեն։

— Հերոսնե՞րը միայն կը տանին։

— Հերոսները պէտք են մեզի։

Տամլանըքի գերեզմանատունը տեսած էի, նաւանման յուշարձանին մօտիկը, երբ նախորդ ամառնամուտին հօրեղբօրս հետ որսի գացած էինք այն կողմերը։ Մտաբերեցի պատկերը, յետոյ՝ պատմութիւնը, յետոյ... «Հերոսները պէտք են մեզի, հերոսները պէտք են մեզի, հերոսները պէտք են, պէ՛տք են»...

Երկուշաբթի վաղ առաւօտուն պիտի գային մեզ փոխադրող բեռնատարները ու մինչեւ Շաբաթ օր պէտք է աւարտած ըլլայինք ամէն պատրաստութիւն։

digitised by A.R.A.R.@

Առտու, մրտենիներու մեր բլուրին կողին սարքած մեր նոր թոնիրին մէջ, մայրս ճամբու համար հաց կը թրխէր, իսկ մենք գոմին տանիքին վրայ բոլորուած էինք հօրս շուրջ, որ կը սպասէր մեր կովուն վերջին յաճախորդին։ Եթէ չհամաձայնէին, դայն պիտի յանձնէինք մեկնող նախիրին, որ ճամբայ պիտի հանուէր նոյն օրը։ Հօրքուրայրս հոգ պիտի տանէր անոր։ Ես վստահ էի, որ միւսներն ալ հոգ կը տանին մեր կովուն, միշտ անասուններուն հետ ապրած եւ հիմա դանոնք օտար երկիր տանող այդ բարի հոգիները, Քըրդենց Սահակ ամոն, Տըմեան քեռին, Շեշքէհէն, Ընդէշ պապուկը, Տալաղենց Կիրակոսը, Քերքէզենց Հանէսը, Պալապանենց Սողոմոնը, Մխսըջանը, Իւրիւցենց Մարտիրը։ Բոլորը կը ճանչնայի, կը սիրէի, գիտէի, որ հոգ կը տանէին մեր կովուն, կասկած չունէի, իրենց կովերուն չափ։ Մինչեւ Որոնդէս անոնց պիտի ընկերանային նաեւ սրտոտ երիտասարդներ, Գարոնը, Գրմպը, Սիւլրքը։ Ասոնք ալ հոգ կը տանէին։

Երեւցաւ միջնորդ այրին, հետը՝ յաճախորդ մը։ Առջի օր կտրուած գինէն աւելի գին տուաւ յաճախորդը։ Միջնորդը աչք ըրաւ հօրս, հայրս տուաւ համաձայնութիւնը։ Ես քակեցի մեր հսկայ դափնիին չուքին կապուած կովուն պախուրցը։ Եղբայրս արձակեց տասնեօթօրեայ հորթուկը։ Մայր ու ձագ խառնուեցան իրարու։ Հորթը մխրճեց սեւածիր դունչը մօրը յորդ ծիծերուն մէջ եւ երանական այդ ակնթարթէն ետք քաշքշուեցան վեր։ Գնորդները բռնեցին Հաճի Հապապլիի ճամբան։ Կովս դժկամութեամբ կը հետեւէր անծանօթ մարդոց։ Կը ցնցէր գլուխը։ Իր կողերուն գարնուող ու ետ ու առաջ ոստոստող ձագը կարծես չէր բաւարարեր հոգին։ Կը ցնցէր մարմինը, կը փորձէր դառնալ ետ։ Անկիւնադարձին նայեցաւ աչքերուս եւ երկար ու աղեկէզ բառաչ մը արձակեց։ Սիրտս չդիմացաւ բաժանումին։ Վազեցի վեր, մօրս մօտ։

— Մա՛։

— Ի՞նչ է, հոգիս։

— Պապան կովը ծախեց, — ըսի փղձկելով։

Մայրս առաւ գիս գիրկը ու միասին լացինք, ես՝ կովուս համար, ինք՝ չեմ գիտեր ինչու, երկար պահ մը, բորբոքած թոնիրին քով, թոնիր դարձած սրտերով։

Ոչ ոք յստակ պատկերացում ունէր մեզի համար նշանակուած գաղթավայրին մասին։ Ոմանք կը շարունակէին կասկածանքով դիմաւորել տրուած տեղեկութիւնները, թերահաւատ էին մա՛նաւանդ նախորդ տեղահանութեան ենթարկուածներու։ Կասկած կար, որ իւրաքանչիւրս տեղ մը պիտի նետուին։ Ատոր համար Շրպլրդէյնի մեր թաղեցիները որոշած էին վերջին օրը միասին անցընել, աղրիւրին մօտ, ո՛վ գիտէ, դուցէ վերջին անգամ։

digitised by A.R.A.R.@

Մենք՝ ամէնքս, հօրեղբայրս, կինը եւ իրենց երկու աղջիկները միասին ճամբայ ելանք։ Խոնուեցանք Խենթ քեռիիս տան դրան առջեւ, որ ճամբուն լայնքով կը բաժնուէր Շըպրլդէյնի պարզպաղուն ակէն։ Խենթ քեռիիս տան աջին կանգնած էր մեծ քեռիիս տունը, անոր կից՝ Զելըկենց տունը, աջին՝ Տըմբեանենց, յետոյ՝ Աննոյշ հօրաքրոջս տունը։ Դուրս եկան բոլորը, եկան նաեւ աղբիւրէն քանի մը քայլ վեր ու վար ապրող միւսները, Գոչոնենք, Դոդալիզենք, Գօյաճենք, քիչ մը հեռուէն՝ Բրդենք, Տրրաղենք, Ծաղրանենք, բոլորը, մեծով-պզտիկով։ Տօն էր օրը, Վարդավառ։ Ամէնուն վրայ ջուր նետուեցաւ։ Ամէն ոք սիրով ընդունեց ջուրը, ջուրը այն աղբիւրին, որմէ խըմողը խենթ կ'ըլլար։ «Շրպրլդէյնէն ջուր խմած է», կ'ըսէին անոր թաղեցիներուն համար, խենթ կ'ըլլար, Տէր Յովակիմին պէս խենթ, Տէր Յովակիմէն աւելի Թունդ Տէր Կարապետին պէս...

Աղբիւրը իր առջեւ ունէր չորս ճամբաներու հանդոյց փոքր հրապարակ մը, ուր թաղեցիները ամէն օր կը հանդիպէին իրարու։ Հոն տեղի կ'ունենային մեծ խրախճանքները ու հարսանիքներու պարային ծիսակատարութիւններուն ամէնէն առինքնող արարները։ Խենթ քեռիիս հարսանիքին, որ վերջինն էր Շըպրլդէյնի հարսանիքներուն, այն իրոք պար էր Գեմուսենց Գերորին պարը։ Սովորութիւնն էր յարուած պահու մը կանգ առնել բոլորակին կեդրոնը ու թմբկահարին թրթռացուցած թմբուկին հետ բազկատարած թրթռացնել ոգի մարմինը, երկար վայրկեաններու վրայ։ Խենթ քեռիիս հարսանիքին ալ նոյնը ըրաւ, աւելի ուժգին, դողաց՝ փոթորիկէ բռնուած ծառի մը պէս, պարային իր այլակերպութեամբ աւելցնելով բոլոր հարսնեւորները։ Գերորին յաջորդեց Զելըկը՝ իր դանակով, ապա Ըզդիրը նետուեցաւ բեմ եւ միասին յարուցակեցին դանակներու պարը, Կիրակոսի թմբուկէն արձակուած յափշտակող նոր եղանակին ներքեւ, յափշտակուած իրենց կարգին, ողողելով հարսնեւորներուն ակնարկները անճառելի հրճուանքով։ Նախամերջին հարսանիքին ալ պարեցին անոնք, Մեսէի հարսանիքին։ Մեսէն քանի մը օր առաջ ունեցաւ իր առջեւնէ զուակը, աղջնակ մը, որ հոս է հիմա, շրպրլդէյնցիներու վերջին հաւաքոյթին, առարկայ՝ ամէնուն խանդաղատանքին, եւ վաղը մօրը թեւերուն մէջ դաղթական պիտի ելլէ մեզի հետ։

Անծանօթ ուժ մը դրդեց մեզ ու մենք՝ ես, եղբայրս, շրպրլդէյնցի մեր հասակակիցները հեռացանք աղբիւրի շրջափակէն ու բռնեցինք գիւղամէջի նոր ճամբան։ Նախ Սեւ աղբիւրի ջուրով ողողեցինք մեր մարմինները, մաղբեցեցանք Ոսկերերանի աւերակ տաճարին հաստամէջ քարերուն վրայ, զովացանք Սուրբին ակէն, անցանք էնտեքենց թաղը, դարձանք ձախ, Ծրենկին աղբիւրէն զովացանք

digitised by A.R.A.R.@

դարձեալ ու մանաւանդ Աստուածածնայ եկեղեցիէն ներս, որ ճիշդ մեր առունին պէս էր, տխո՞ւր։ Վարագոյրը հանուած էր ու խորանը մերկացած վարշամակներէն։ Կենդանութեան չունչ կը մատնէր միայն մկրտութեան աւազանը, որուն եզրերուն, շնչասպառ բոցերու տակ՝ կը հալէին վերջին աղօթողներուն վերջին մոմերը։ Եկեղեցիին կից, գերեզմանատան մէջ աւելի սրտաճմլիկ էր մոմերուն պարզած տեսարանը, երկար, հաստակեկ, մեղրագոյն ու սպիտակ մոմեր, հանգած, դեռ պլպլացող, բազմաթիւ հողակոյտերու մօտ, նորերուն մօտ՝ աւելի, այդ ձմեռ համաճարակի պէս եկած սաթլրնանին զոհ իմ խաղընկերոջս՝ Ըլլոյին գերեզմանին վրայ, Քերքէզենց օրիորդ Մաղիկին, Առագուշին հօրը։ Սիրտս որքան կ'ուզէր, որ անոնք ալ մեզի հետ ըլլային, տանէինք մեզի հետ բոլորը, հօրս առաջին դինակից Գրպրանենց Ակիւրը ու մեր մանկութիւնը քաղցրացուցած միւսները, դինեմոլ Սեւուկ պապուկը, ծըխամոլ Գարդուբ պապուկը, զուարճալի ասացուածքներու աղբիւր Ճումիկը, տանէի՞նք՝ գողերը պատուհասելու համար կազմուած Օնիֆիլերի դատաստանի մէկ նիստին, տասներկու դատաւորներէն տասնըմէկին հետ գողութիւն ըրած ըլլալը հռչակած հռչակաւոր գող Փամպուքը, պատմութիւն ունեցող բոլոր մեռելները, Տէր Յովակիմը, Տէլը Կարապետը...

Թեթեւ հպումներով ճչացուցինք դարաւանդին գըլուխը, երկու ձողերու արանքէն առկախ եկեղեցւոյ զանգակը ու կանգ առինք անոր մօտ ոտրապտոյտ ձեւով մը բարձրացած ծեր կաղնիին առջեւ։ Մեր դէմ էր գիւղին ողջ համայնապատկերը ու մենք փոխ առ փոխ վերաքաշը ընինք անոր բաղկացուցիչ մասերուն, բլուր առ բլուր, պարտէզ առ պարտէզ, ձոր առ ձոր, ճամբաները, ծառերը, տուները՝ իրենց տէրերով ու առջի տարի ու անկէ առաջ Հայէպէն, Պէյրութէն, աւելի հեռուներէն, Եգիպտոսէն օդափոխութեան եկած վարձուորներով։ Ամառները՝ որքա՞ն մարդ կու գար հոս, ինչպէ՞ս կը խռնուէին փողոցները, սրճարանները։ Սլացիկ աղջիկներ, տղաք, թեւ թեւի, խումբերով, տիկիններ, պարոններ, մաքուր-մաքուր հագուած, մանուկներ, զուարթ, երգեցիկ։ Անցեալ ամառ մարդ չեկաւ։ Այս ամառ, ահա, մենք կը պատրաստուինք մեկնիլ։ Քանի մը հոգի միայն պիտի մնան հոս, ու սիրտս կը ցաւի թէ՛ վաղուան ամայութեան եւ թէ ամայութեան մէջ մնացողներուն համար։ Ինչ պիտի ըլլայ վերջը։ Թուրքե՛ր...

Բռնեցինք Վերի Կալ թաղին ճամբան, առաջացանք Սարքանենց պանդոկին մօտէն եւ յիշողութեանս մէջ դարձեալ պայծառացաւ անոր կապուած մեծ դէպքը, Էֆէնտիին հարսանիքը։ Բոլոր ճամբաները խճողուած էին եօթը գիւղերէն փութացած հպարտաւոր հարսնեւորներով։ Մինասէն

digitised by A.R.A.R.@

Սրբին վրայ զոյգ թմբուկներով դիմաւորեցինք Անտիոքի կողմէն բերուած հարսը, որ երբ հոս հասաւ, փեսային եղբայրը պատշգամէն դրամ տեղացուց անոր վրայ, ոսկի, արծաթ, չլսուա՛ծ բան, կիներու ու մանկամարդ աղջիկներու բուռ-բուռ սփռած ցորենին ու բրինձին հետ՝ բուռ-բուռ դրա՛մ։ Հիմա չունչ չկար պանդոկին մէջ, շուրջը։ Հեռացանք արագ։

Աւելի խենթ եղանք եւ այցելեցինք «Ոստայն»ը, որ տարի մը առաջ գոցեց իր դուռները ու ստեղծեց առաջին սրտաբեկութիւնը։ Բոլորուեցանք անոր աւազանին շուրջ։ Ընկերներով քանի՛-քանի՛ անգամ գաղտնօրէն լողացած էինք անոր մէջ, որ հիմա ցանցառ ու ողմուտ ջուրի մը գամբարանը դարձած էր։ Առաջին անգամ հոս էր, այս բակին մէջ, որ չարժապատկեր տեսած էի, նկարահանուած մեր գիւղին մէջ, մեր գիւղի տեսարաններով, պատկերներով, պատատին վրայ՝ ծանօթ հովիւներ, հողագործներ, մանուկներ, ես՝ կովուս հետ։

— Երթանք մեր ազգականներուն մնաք բարով ըսենք, — յիշեցուցի եղբօրս։

— Ո՞ր մէկուն երթանք։ Հիմա տունն ալ չեն ըլլար։

Ո՛ր մէկուն, իրապէս։ Ութ հօրաքոյր ունէի, երկու քեռի, երկու մօրաքոյր, հօրեղբայր մը, ուրիշ մօտիկ-մերձաւորներ. հօրս քեռիները կայլին տակաւին, մօրս մօրեղբայրները՝ խենթութեան հակամէտ ամբողջ տոհմ մը, ասոնց զաւակները, թոռները, ամէն քայլի հարազատ մը, աջ՝ «հիքքէս», ձախ՝ «հիքքէս», հոգի էր իւրաքանչիւրը, հոգի էինք ամէնուն, ու տարբեր չէին ոչ-արենակցական կապերով մեզի ծանօթները։ Միայն թէ նոյն տեղը երթանք, նո՛յն տեղը, կ'ըսէի շարունակ ինքն իրենս։ Կը կարծէի, որ չունչը պիտի պակսի մեզի, կեանքը անտանելի պիտի բլլայ, եթէ միասին չբլլայինք։

Երկու նոր-գէյթունցիներ անցան մեր մօտէն։ Հետեւեցանք անոնց ու հասանք հսկայ ոսրիին տակ կառուցած բոզոքականներու աղօթարանը։

Անասուններու ճամբու հանած հովիւներէն ու ապրանքները Սելեւկեաններուն նաւահանգիստը փոխադրած խումբին անդամներէն դատ, հոն էին միւս թաղերուն բոլոր տղամարդիկը, ոմանք խումբ-խումբ կանգնած, ուրիշներ՝ տենդոտ եռուզեռի մէջ։ Երջեցայ աղօթարանին բոլորտիքը ու կարօտով մը նայեցայ անոնց անձկալի աչքերուն։ Երկրորդ անգամ փնտռեցի ու գտայ իմ մասնաւոր հետաքրքրութեանս առարկայ դարձածները, իր պարզամտութեամբ ամէն քայլի ու խօսքի զուարճալի պատմութեան մը առիթ տուող Էֆերիմը, անուանի վախկոտ, այլ ատոր-անոր մականուն կնքելու վարպետ Հայտուտը, թուրքերէն լեզուով տեսթաններ հիւսող Արնաւուտը, առակախօս Քաջ Առաքելը, սրաթռիչ ձիավար Օսմանը, զուարթա-

digitised by A.R.A.R.@

խօս Լէնթէօյը, Տիարը՝ որ նշանաւոր էր ժողովի մը նախագահած ըլլալու իր հանդամանքով, առաջին սաստով. «Սիլա՛նս, մեդէիմեսզ իտամ, այլէսը սիւրկիւն, երը՝ Վագրֆ», անյաղթելի գօտեմարտիկ Պորկէզը, կռիւին՝ Պիթիասի մէջ բռնուած ու պախուրցով կապկապուած առաջին թուրք դերին պտըտցուցած Զագէօյը, ամէնքը։

Եռուզեռը աւելի տենդագին դարձաւ։ Լսեցինք, որ հոն է Գոլոնել Գոլէն։ Եկած է մեկնումի վերջին կարգադրութիւնները ընելու։ Աղօթարանի ձախ պատին կանգնած էին զինուորներ, թո՛ւրք, սուինաւոր։ Քանի մը քայլ անդին, սուր հայեացքներով անոնց կը նայէին մեր դպրոցին մեծ տղաքը, Ֆալէն, Սուրէնը, Թագուորը։ Եղբայրս միացաւ անոնց։

Ես մօտեցայ տարեցներու խումբի մը, իմ սիրածներուս, հովիներ, հօտաղներ, որոնք իրենց մէջ առած էին Որոնդէօէն արդէն վերադարձած Պարոնը եւ հարցումներ կ՚ընէին անոր, կը հառաչէին։ Ամէնքը ցնցուեցան, երբ Պարոնը նկարագրեց Տալաղենց եղներուն տագնապը.

— Ամէնէն աւելի անոնք յամառեցան ջուրը իջնել, եւ երբ բռնի միւս ափը հանեցինք զիրենք, ետ դարձան, դունչերնին վեր տնկած լիաթոք ընչեցին դիմացէն եկող հովը, բառաչեցին ու իրարու ետեւէ կրկին նետուեցան ջուրը, եւ ան ալ եւ սկսան վազել դէպի լեռ։ Հազիւ կրցանք իրենց ճամբան կտրել եւ անցընել միւս կողմը։ Քիչ մնաց Շեչքէհէն կը խեղդուէր։ Տեսնէիք ինչպէ՛ս կը բառաչէին, կը փնչէին, կարծես չէին ուզեր բաժնուիլ լեռնէն։

Տալաղենց Վէնիսը սկսաւ լալ։

— Անասունը չի՞ զգար միթէ բաժանումը, — փիլիսոփայեց նախրապան Կրպոն։

— Ա՛խ, Քելէշս։

— Ա՛խ, Պալապանս։

— Ա՛խ, Սագարս։

— Ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ։

Չկրցայ զսպել արցունքս։ Ո՞ւր տարին արդեօք իմ կովս։ Ինքն ալ չկարօտցա՞ւ ինծի։ Ո՞ւր կապած են հորթուկը, մո՞ր քով, թէ հեռու։

Երեւցան Հայրս ու Շաքուրը ու հրամայեցին շուտով Շըպըլդէն վերադառնալ։

Այս անգամ բռնեցինք զոյգ ջաղացքներու ճամբան, որ հին ճամբան էր, կորուկը, խորտուբոտ ու նեղլիկ։ Մասնաւորաբար ձմեռը, դպրոց գացած պահուս շատ կը սիրէի այդ ճամբան եւ բուք ու բորան օրերուն ընկերներուս հպարտութեամբ կը նկարագրէի անոր արեւմտեան պատերուն պարզուող հրաշքը, իրենց անկումին մէջ սառած ջուրերը, սուրերու պէս, բարակ, հաստ, կոտրածներու, անկոտրումները։

— Գիտե՞ս ինչ լսեցի, — ըսաւ եղբայրս։

digitised by A.R.A.R.@

— Ի՞նչ։

— Ֆիլը հոս պիտի չմնայ եղեր, մեզի հետ պիտի գայ։

— Ֆի՞լը։

— Դամինուան ալ։

— Իրա՞ւ, — ճչացի ուրախութենէս։

— Քեմքեճենք ալ։

— Իսկ պարոն Դանիէ՞լը։

— Պարոն Դանիէլը չ'ուզեր մեզի միանալ։ Իւչուրուպն ալ, Զաւուշն ու Արապենց աղջիկներն ալ չեն ուզեր։

Ի՞նչ պիտի ընէին սոնք հոս, ինչո՞ւ չէին ուզեր մեզի հետ երթալ։ Ես կ'ուզէի, որ բոլորն ալ միանան մեզի, ոչ մէկը գիւղ մնայ, Թուրքերուն մէջ, Թուրքերը կը մեռցնեն զիրենք, չէի ուզեր, որ մեռնին անոնք, ո՛չ մէկը, նո՛յնիսկ պարոն Դանիէլը։

Շըպըլդէյնցիները ուտելիքները փռած էին գետին, Խենթ քեռիին մեծ թթենիին շուքին, բայց բերանը բան դնելու արամադրութիւն ունեցող չկար կարծես անոնց մէջ։ Տխուր էին ամէնքն ալ։ Ցրուեցանք մեր հարազատներուն մօտ ու այլեւս Ջուրին հետ չխաղացինք։

Երեկոյեան դէմ, Շըպըլդէյն ալ եկան Թուրք զինուորներ, երեք հատ, մէկը՝ ուսադիր նշանով ու ատրճանակ մը մէջքին, միւսները՝ սուինակիր։ Կանգ առին աղբիւրին մօտէն բարձրացող Գոչոնենց ճամբուն սկիզբը ու խստաբիր հայեացքներով սկսան հետեւիլ մեր շարժումներուն։

— Քալեցէ՛ք, — ըսաւ հայրս իրար անցած՝ խօսքը ուղղելով մեզի եւ հօրեղբօրս պարագաներուն։

— Ո՞ւր, — զարմացաւ մեծ քեռիս։

— Տուն։

— Տո՞ւն ինչ գործ ունիք։ Գիշերը հոս կ'անցընենք, միասին, — ըսաւ Խենթ քեռիս։

Հայրս պնդեց։

— Հոս մնացէք, — աղաչեց Աննոյշ հօրաքոյրս, — սանկ օրով ի՞նչ կայ այդ ամայի տեղը։

Հայրս յամառեցաւ։

Ճամբուն վրայ զգացի, որ ան չէր կրնար տանիլ Թուրքերուն ներկայութիւնը։ Նորէն հայհոյեց անոնց, աւելի չատ՝ զանոնք հոս բերողներուն, Ֆրանսացիներուն. «Թո՛ւ, տինընը-իմանընը»...

Թեթեւ ծածկոցներու մէջ փաթթուած՝ երկնցանք դատարկ տան անկիւնները։ Կը ջանայի քնանալ, բայց չէի կրնար աչքերս գոցել։ Սարսափ մը կար հոգիիս մէջ ու սարսափ մը կար դուրսը։ Մեր կատուն ներս կը մտնէր, պատէ պատ կը զարնէր ինքզինք, կ'արձակէր սուր ճիչեր, դուրս կ'ելլէր, նորէն կու գար։ Վայրենացած էր բոլորովին, կ'ողբար անընդհատ։ Ուրիշ կատուներու ճիչեր ալ կը լսէի, մօ-

digitised by A.R.A.R.@

տէն, հեռուէն, ու գիւղին շուները եղերական կաղկանձով մը կը լեցնէին տարածութիւնը։ Նման ձայներ կը զգայի նաեւ իմ հոգիիս մէջ։ Մեր կովէն բաժնուած վայրկեանէս սկսեալ անորոշ սարսուռ մը կը գալարուէր արեանս մէջ ու մեծ կորուստի մը նախազգացումը ուժգնօրէն կը հարուածէր զիս։ Կը մտածէի մեր նորաւարտ քարաշէն տան մասին, ուր ուրիշներ պիտի բնակին, մեր վիթխարի դատինիին մասին, որուն շուրջ պտոյտ եկող երամներով ուրիշներ պիտի զուարճանան, խնձորենիներուն մասին, իր բեղուն ոստերէն մէկը պատուհանէն ներս արձակած սալորենիին մասին, ցախսարիկներով յորդող մրտենիներուն, խնկենիներուն։ Ուրիշներ պիտի վայլեն զանոնք այլեւս, ուրիշնե՛րը, ուրիշնե՛րը, ուրիշնե՛րը։ Կրկին մտքիս յաճախեցին թաղային մեր վերջին հաւաքոյթը քանի մը քայլ անդիէն դիտող դինուորները, թուրքերը, թուրքե՛րը...

Տա՞նկ...

Ցատկեցի ոտքի։

Տա՞նկ։

Մայրս սկսաւ լալ։ Քոյրս սկսաւ լալ։

Աստուածածնայ եկեղեցիին զանգակին ձայնն էր, մեռելազանգ, կէս գիշերին, համատարած լռութեան մէջ՝ տա՞նկ... տա՞նկ... տա՞նկ...

Հայրս խուժեց դուրս։

Հասանք ետեւէն, գոմին տանիքը, ուրկէ կ'երեւէր ամբողջ գիւղը։

Գիշեր առեն սովորութիւն չկար մեռելազանգ հնչեցընելու, հին աւանդութիւն էր, չկար։ Բայց բեռնատարները առտու կանուխ պիտի գային, թաղումի համար ուրիշ ժամանակ չունէր մեռելին տէրը, եկեղեցին ստիպուած էր խախտել աւանդութիւնը։

Տա՞նկ...

Մէկ–մէկ վառեցան ճրագները։

— Գիւղին մէջ հիւանդ չկար։ Տղաքը անպայման թուրքերուն հետ կռիւի բռնուեցան ու մէկը զարնուեցաւ։ Երթամ նայիմ, — ըսաւ հայրս ու ամապարանոց ելաւ ճամբայ, պատուիրելով, որ մինչեւ վերադարձը հօրեղբայրս հսկէ բլուրին վրայ։

Տա՞նկ...

— Տէ՛ր, փորձանքէ հեռու պահէ մեզ, — աղօթեց հօրեղբօրս կինը։

Ամենապահար յայտնուեցաւ Շաքուրը։ Բանէ մը լուր չունէր։ Շտապեց հօրս ետեւէն։

Հայրս զէնք չունէր հետը։ Շաքուրն ալ առանց զէնքի էր։ Բայց այդ պահուն դժուար էր ինծի առանց զէնքի պատկերացնել զիրենք։ Տեղ մը չեղեցան անպայման, կը մտածէի, հաւանաբար դէպի Սուրբ Սարգիսի անտառը, վերջուցին ժայռերու խոռոչներուն պահուած իրենց զէնքերը եւ ապա շարունակեցին ճամբան։ Այդպէս կը պատկե-

digitised by A.R.A.R.@

բացնէի գիրքերնք ու սրտատրոփ կը սպասէի պայթիւններու։

Մահազանգը իր ողբը կը սփռէր նոյն կշռոյթով, ոչ մէկ մեռելի օրով հաստատուած տեւողութեան մը վրայ.

Տա՛նկ... տա՛նկ... տա՛նկ...

Իւրաքանչիւր զարկին հետ հօրս ակնարկած տղաներէն մէկը կը պատկերանար մտքիս, Էկըրը, Պարոնը, Գըմպը, Սիւլքը, Թըթը Մալլոն, Լեւոնը։ Ասոնցմէ՞ մէկն էր արդեօք զարնուողը։ Ո՞վ։ Կարծես մէկը կը կողոպտէր սիրտս։

Տա՛նկ...

Մթնշաղին հայրս եւ Շաքուրը վերադարձան, բարձրաձայն խօսելով։

— Ի՞նչ է, — հարցուց հօրեղբայրս փութով։

— Բան չկայ, — ըսաւ հայրս անտարբեր, — Քրեղիին գործն է։

— Ինչպէ՞ս։

— Ֆմեր է կուչտ մը ու մտածելով, որ այս գիշեր գիւղը կը մեռնի՝ սկսեր է գարնել զանգը։

Հաւաքեցինք ձեռքի առարկաները, — թեթեւ ծածկոցներ, հագուստ, քանի մը պնակ, դաւաթ, նախատեսուած պաշարը ու պատրաստուեցանք վերադառնալ Շրպըլէյն, ուրկէ պիտի առնէին մեզ Ֆրանսացիներուն վարձած բեռնատարները։

— Ասո՞նք, — հարցուց եղբայրս՝ մատնանշելով պատուհանի եզրին դրուած մեր նոր դասագրքերը։

— Զգեցէք հո՛ղ, — պոռաց հայրս, — իրենց թող մնայ։

Սարը էլմաները եւ Մարմարա տէնիզները առանձին ձգած՝ դուրս ելանք տունէն, մի՛ր տունէն, ուր ծնած էինք բոլորս, մեծ քոյրս եւ մեծ եղբայրս, ես, պզտիկ քոյրս եւ պզտիկ եղբայրս, մեծ հօրմէս ու անոր հօրմէն ժառանգ մնացած մեր տունէն...

Տա՛նկ...

Մթնշաղ էր տակաւին ու մթնշաղային էր ամէն բան, ճամբան մեր ճամբան էր ու մեր ճամբան չէր, երկինքը մեր երկինքն էր ու մեր երկինքը չէր, լեռը նոյն չէր, ձորը նոյնը չէր, Սուրբ Սարգիսը նոյն չէր...։ Կարծես կը քալէինք մղձաւանջային աշխարհի մը մէջէն։ մենք մեզմէ անջատուած, մառախլապատ հոգիներով։

Տա՛նկ... Տա՛նկ...

— Զվերջացուց ալ, — տրանջաց մայրս սրտապատառ, — բնաւ մէկը չկա՞ր ,որ այս ըրածը արգիլէր այդ խենթին։

— Զեմ դիտեր։ Զեն ուզած արգիլել, — վերջացուց հայրս։

Տա՛նկ... տա՛նկ... տա՛նկ...

ՊՕՂՈՍ ՄՆԱՑԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՀՍԿՈՒՄ

●

Արդ՝ ջերմուքեան մի կարօտ
Մրսում է քո ափերում,
Եւ շուրթերիդ՝ մի կոյսի
Շուրթի հպումը փխրուն:

Մօտենում ես ինքդ քեզ,
Կռնկում բանկոնդ կապոյտ.
Վառ է ակուքը հրկէզ,
Բայց սառոյց կայ մէջն հոգւոյդ...

Սպասում ես, որ գայ նա,
Նստի քեզ հետ զրոյցի,
Քեզ մօտ նստի ու մնայ,
Ցուշերիդ տեսորը բացի:

Թող գա՛յ, թող գա՛յ միայն թէ՝ գա՛յ
Ու քո կողքին նա նստի,
Ջիւնի՛ թող դուրսը ապա,
Ջիւնի՛, որքան որ կ'ուզի...

Թեհրան, 1970

ՅԱՆԳՆ ԵՍ ԵՐԳԻՍ

●

Հիմա յանգն ես դու իմ երգի,
Զանգը հոգուս,
Որ մաքրում է ժանգը սրտիս
Ու զօրանջում:
Արդեօք, ե՞ս եմ արդ երգում քեզ,
Թէ դո՞ւ ես ինձ
Երգում այսպէս մրրկայոյզ:
Մենք իրարու տէր ու գերի՝
Անցնում եմ ես
Լանջիդ հասուն արտով բերրի,
Եւ դու՝ սրտիս մարգով կանաչ
Ու զեղգեղում.
Ինչպէս մի վիթ ջուր ես խմում
Հոգուս ակից սիրակարկաչ,
Ու մենք իրար բոյրն ենք շնչում
Առանց հառաչ:
Հիմա յանգն ես դու իմ երգի,
Զանգը հոգուս, —
Որ մէկս է երգում այսպէս
Ու խլրտում.
Անցնում ենք մենք այնպէ՛ս արբուն, —
Ես՝ այգիով հասուն լանջիդ,
Դու՝ իմ սրտի դաշտով կանաչ,
Ու մենք իրար բոյրն ենք շնչում
Առանց հառաչ:

ԱՐՄԱՆՏ

Թեհրան, 1981

digitised by A.R.A.R.@

Լիբանանի տաղնապի վերջին փուլին, բակին մէջ ինկած ռումբի մը հետեւանքով, «Բագինի» խմբագրատունը գաղթեալ տակնուվրայ եղաւ։ Փոթորիկին մեղմացումէն ետք, մեր հին եւ նոր թուղթերը վերադասաւորելու ատեն, հայուհաշ պահպանի մը մէջ գտանք Անտոնինա Մահարիի «Թանկագին գանձը» գրութեան թարգմանութիւնը եւ հետագայ դանդաղութիւնը։ Թարգմանիչը, որ Հայաստանի կեանքին ու գրականութեան լաւատեղեակ անձ մը կը թուի, չէ ստորագրած իր աշխատանքը։ Կու տանք թէ՛ մէկը եւ թէ միւսը՝ ըստ ինքեան իրենց ներկայացուցած չահեկանութեան համար։

«Թանկագին գանձ»ին մթնոլորտին մէջ երկնրուած մահարիական բանաստեղծութիւնները մէկտեղուած են խմբագրութեան կողմէ։

Անտոնինա Մահարու մասին մտածելիս՝ դժուար է խուսափել դեկադրիսներէն կանոնց զուգահեռը ամենուց։ Այն տարբերութեամբ, որ դեկադրիսների կռնայմ, իրենց սարսափելի ամուսիններին դէպի Սիբիր հետեւեցին ազատ կամքով, իսկ 19դարեայ լիտվուհի Անտոնինային՝ համալսարանի նստարանից պոկեցին ու քշեցին Սիբիր՝ ժամանակի անորամանական տրամաբանութեամբ...

Դաժան է հնչում, բայց գուցէ նախախնամական էր նրա կեանքի խաղաղ ընթացքի այդ բիրտ ընդհատումը, որովհետեւ նրան էր սահմանուած փրկել մի կեանք։ Մի կեանք, որը չափազանց լուսաթացով եւ մայրամուտով, մինչեւ որ տարբերուեցաւ գիշերուայ մէջ...։ Եւ մի այլ կեանք ես, որի վախճանը անիմանալի է, բանի որ գրքի կեանքը ժամանակի սահմանափակում չի նանչուում։

Աւստրի սեւ օրերին, սեփական կեանքը վտանգելու գնով, Անտոնինա փրկեց Գուրգէն Մահարու կեանքը... այծի կաթ գոգանալով ու հացնելով բռնախտից հալչող գրողին։ Վերջինս խոգեր էր տաքուում, որոնցից զէր իր համար օգուտ չկար...

Վերադարձից յետոյ, Անտոնինան մէկ այլ կեանք նուիրեց Մահարուն, այսինքն՝ մի Գուրգէն անունով որդի։ Ու միշտ, իր անդադար խնամքի ջերմութեամբ, հալածեց սոսկի սառնամանիքների շնչով բոյն դրած ապառողջութիւնը, մաքառեց իր ամուսնու կեանքի համար՝ բանի դէռ հնարաւոր էր։ Իսկ երբ Գուրգէն նանը հետեւեց մանկանացումներին վերապահուած ուղուն, Անտոնինան կրկին՝ վերսկսեց իրագործել իր առաքելութիւնը, այս անգամ... անմահութիւն նուիրելով Մահարի–գրողին։

Անմահութեան գրականը արթուն յիշողութիւնն է, եւ դա շատ լաւ գիտակցեց Անտոնինան, երբ ձեռնարկեց Մահարու կեանքն ու ստեղծագործական ուղին արտացոլող տուն–թանգարանի ստեղծմանը։ Այն՝ ինչ կը պահանջէր մասնագէտներ, գրականագէտներ, պարզապէս աշխատող ձեռքեր, երկար տարիներ, յանկարծ կերտուեց գրեթէ հրաշքով։ Հրաշք, որի հիմնական բաղադրիչներն են ազնիւ նպատակը եւ նուիրումը։

Հենց այդ նուիրումն է, որ անսահման յարգանք է ներշնչում ու ճաշ ուժգին ցանկութիւն, որ Անտոնինա Մահարին դեռ երկար տարի եւ իր բազմաչարչար անցեալը արհամարհող աւիւնով շաղուռնակի իմաստ ու շունչ տայ անմուիրութիւն հասկացողութեանը։...

digitised by A.R.A.R.@

Ա. ՄԱՀԱՐԻ

ԹԱՆԿԱԳԻՆ ԳԱՆՁԸ

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Անոնիմներին

Ես հարուստ եմ, աւելին,
Ես կարող եմ ինձ համար
Տեղալ իմ ոսկի երգերի
Մարգարիտները անթիւ,
Գտակել քո ճակատը
Սոնետներով անհամար,
Կարող եմ ինձ ուիրել
Ամարաթներ բալլադի...

Քեզ իմ ժպտուն արծակի
Այգեստաններբը շատայլ,
Ու իմ գաւարթ հումորի
Շարժաշուղներբը թռվիչ,
Որ չմնաս դու անիրդ,
Որ չմնաս անկրակ,
Որ չմնամ ես հոգով
Անօթեւան, անօթի...

Թափուի՛ր որպէս խնդութիւն,
Որպէս անձրեւ ու արեւ
Հոգու վրայ իմ յոգնած,
Հարստութեան բեռան տակ,
Ու թող անձրեւդ չրէ,
Ու թող արեւդ այրէ
Քո երկիրը՝ իմ երգը,
Էութի՞ւնն իմ բովանդակ...

1953 Գ. ՄԱՀԱՐԻ

Հին, փայտէ, բաւականին մաշուած, անցեալում երեւի չագանակագոյն, մեծ ու ծանր։ Վրան՝ փոքր, ժանգոտած կողպէք։ Իր ողջ կերպարանքը որոշակիօրէն ապրեցիկ է, ասրօրինակ, անսովոր եւ յիշեցնում է անցեալ դարերի ուղեւորներին, բայց ոչ երբեք քսաներորդ դարի։ Բայց մի՛ զարմացէք, երբ ձեզ ասեմ, որ այդ ճամպրուկը հենց քսաներորդ դարի սահմանումն է։

Իսկ ի՞նչ կայ մէջը։ Ահա զգուշութեամբ հանում ենք կողպէքը։ Մեծ ակնածանքով ու մարող սրտով բացում ենք ճամպրուկը... Իսկ այնտեղ մի ամբողջ

digitised by A.R.A.R.@

ժառանգութիւն կայ։ Թանկագին դանձ եւ... ստալինեան ամբողջ դարաշրջանը։

Ահա հին, բամպակէ բանկոնը՝ անոթոշ գոյնի, շատ քնքոյշ աքսորեալներին։ Բամպակէ տաքատը նոյն ծագումն ունի։ Ջմեռնայրին դղակը, չզիտես թափառաշրջիկի՞, տասնիններո՞րդ դարի կը պատկանի, թէ ռուս բուրլակի...։ Այդպէս եւ կեպին — չես հասկանայ, թէ ի՞նչ գոյնի է, որտեղի՞ց սերուած ու ի՞նչ ազգի...։ Մաշուած, մոխրագոյն շապիկը ունի հինգ կոճակ եւ... բոլորն էլ տարբեր տեսակի, դանազան գոյների։ Այդպէս է եւ հին, կարկատուած, կոպիտ, երկարաճիտ կօշիկը, կարծես սեւ...։ Վերջապէս հնամաշ բարմանները, որ կարծես աշխարհ մորթուց են կարուած, էսքիմոներին են յիշեցնում...

Ահա եւ վե՛րջ։ Այս է հին, փայտէ ճամպրուկի ողջ պարունակութիւնը, որը եւ մենք համարում ենք թանկարժէք դանձ։

Հիմա եկէք հետաքրքրուենք, թէ ոյն որտեղի՞ց եկաւ մեր կողմերը. ի՞նչ ընդհանուր բան ունեն բամպակէ բանկոնն ու երկարաճիտ կօշիկները մեր շոգ կլիմայի հետ։ Եւ, ընդհանրապէս, այս ճամպրուկի պարունակութիւնը, անկասկած, ուսումնական ու խիստ կասկածելի ծագում ունի...

Որքան էլ տարօրինակ թուայ, բայց այս փայտէ ճամպրուկը Հայաստանի՝ համար է արժէքաւոր։ Այն երկա՞ր տարիներ ուղեկցել է բազմաչարչար բանաստեղծին՝ սիբիրեան ճամբաներով։ Այդ փայտէ ճամպրուկը չէ՞, որ տասնեակ օրերով ճամբորդել է բանաստեղծի հետ բեռնատար կառքերով, կամ էլ հարիւրաւոր կիլոմետրեր է կտրել ոտքով՝ սիբիրեան դաժան սառնամանիքին, կալանաւորների հակայ բանակի հետ։

Ճիշդ է, ճամպրուկի համար աւելի հեշտ էր, քան բանաստեղծի. այն չէր քայլում, այլ բանաստեղծն էր կրում իրեն։ Փխրուն ու նիհար բանաստեղծն իր ուսերին կրում էր ո՛չ միայն ծանր ճամպրուկը, այլեւ... իր ծանր, դժխեմ ճակատագիրը։

Ահա մեր երկու ճամբորդներին՝ փայտէ ճամպրուկն ու տառապեալ բանաստեղծին տեսնում ենք ուղեւորման կէտում(1)՝ Կրասնոյարսկի շրջանի Մարինսկ քաղաքում։ Ուղեւորման կէտ. մի կէտ, որը քսաներորդ դարի հազարաւոր սորուկներին, ստալինեան դարաշրջանի կալանաւորներին, նրա «իմաստուն» քաղաքականութեան զոհերին ճանապարհ է դնում։ Եւ ինչ չա՞ռ են այստեղ այդպիսի զոհերը։ Նոյնքան շատ են նաեւ ուղեւորման կէտերը, — բոլորը չես կարող թուել։ Օր ու գիշեր այնտեղ եռում էր աշխատանքը։ Եւ մեզ թւում էր, թէ ամբողջ աշխարհն է զբաղուած այդ կինոդանի ապրանքը՝ աշխատանքային ձրի ուժը տեսակաւորելով։ Նրանք մեզ «տեսակաւորում» էին ու... նետում ո՛ւր որ մշակներով անցնէր։

Ինչ դէմքեր ասես չես տեսնի այնտեղ։ Մեր եղբայրական հանրապետութիւնների բոլոր ազգերից։ Այո՛, բոլոր 14ը(2), ազատագրուած դանազան լծերից։ Բնական է՝ կապիտալիզմից...։ Ահա բարձրահասակ, խարտեաշ եւ կապուտաչեայ լիտուացիները եւ... նրանց քոյրերը։ Բոլորն էլ մաւյլ, տխուր, մտածկոտ...։ Ահա եւ բաց-սակեգոյն մազերով լատիշները, լատիշուհիները։ Եւ նոյնպէս բարձրահասակ հպարտ էստոնացիներն ու էստոնուհիները...։ Այս երեք մերձբալթեան հանրապետութիւններն այստեղ միաւորուեցին. նրանք փորձում են իրար մօտիկ գտնուել...

Ահա մեզ եւ հայկական ՍՍՀն՝ դանդաղաքայլ, սեւաչ... շարունակ լսում է. «Աչո՛ւ, բարե՛ւ, Բարեւ, Գուրգէն ջան, դո՞ւ էլ այստեղ», «Ինչպէս տեսնում ես, Թանկագին Աշոտ։ Իսկ որտե՞ղ կարող էի լինել այսօր, եթէ ոչ այստեղ։ Գիտե՞ս, Գրիգոր Զուրաբեանն էլ է այստեղ... Ես արդէն տեսայ նրան», «Իրո՞ք», — զարմանում է Աշոտը։

(1) Աէրոդրոմ կամ բանտարկեալ՝ այստեղ բանտում էին քսան ուղեւորման տեղի խմբագրումների։

(2) Այժմ՝ 15։

digitised by A.R.A.R.@

Իսկ այստեղ էլ բեղաւոր եւ ինքնավստահ վրացիների խումբն է։ Այս էլ նրանց թանկագին հարեւան ազգբեկանցիներն են...։ Կովկասեան այս երեք հանրապետութիւններն էլ միաւորուեցին ու բարեկամական էին, ինչպէս... երբեք դրանից առաջ։

Ահա եւ հրէական «միացեալ հանրապետութիւն»։ Մեր եղբայրական հանրապետութիւնների թւում այն չկայ(3)։ Բայց ուղեւորման կէտերում եւ տիրիրեան ճամբարներում զոյացաւ հրէական հանրապետութիւն։ Հինաւուրց ազգի ներկայացուցիչները մեծ խելքի տէր մարդիկ են։ Ոմանք արդէն ալեհեր, ուրիշները՝ դեռ սեւամազ, երիտասարդ եւ նոյնիսկ պատանի՝ մոայլ, ինքնամփոփ...

Հաբազաւ Բելոռուսիան էլ է այստեղ։ Եւ ինչո՞ւ չլինի, երբ մեր եղբայրական հանրապետութիւնների կազմի մէջ է։ Մեծամասնութիւնը երիտասարդ են, կան նաեւ «փոշոր խաղաթղթեր», ի հարկէ։

Ոսկեայ Ուկրաինան էլ ետ չի մնում միւսներից...։ Նա էլ է իր լաւագոյն երիտասարդներին ուղարկել Սիբիրի ուղեւորման կէտերը։ Կան նաեւ «վեհաերանները»...

Ահա եւ ասիական հանրապետութիւնների ներկայացուցիչները՝ նեղ աչքերով, լայն այտոսկրներով, ազնիւ, համեստ, համբերատար...

Եւ այստեղ են մեծն ռուս ժողովրդի ներկայացուցիչները։ Մեր աւագ եղբայրներն ու, ի հարկէ, քոյրերը նոյնպէս... յիրաւի, ի՞նչ հաճելի հանդիպումներ։ Տարբեր դէմքեր, տարբեր լեզուներ, տարբեր մանագիտութիւններ, տարբեր աշխարհահայեցքներ...։ Բայց այնտեղ նրանք բոլորը համախմբուել էին մէկ բարեկամական ընտանիքի մէջ ու մտածում էին մէ՛կ բանի մասին...։ Իսկ թէ ինչի՞ մասին, թող առայժմ գաղտնի մընայ։ Ահա թէ որտեղ է իսկական ինտերնացիոնալիզմը։ Կեցցէ՛ Ստալինի իմաստուն քաղաքականութիւնը, որն այսպէս միաձուլեց մեզ բոլորիս։ Շնորհակալ ենք նրան եւ... ուռռա՞։

Ճիշդ է, այստեղ դեռ պակասում են ամերիկացի, ֆրանսիացի ներկայացուցիչները (գերմանացիներն արդէն այստեղ են), չուէյացի եւ այլք։ Ինչո՞վ են նրանք մեզնից լաւ։ Բայց, աւաղ, աւա՞ղ, այդ պատիւը դեռ չի տրուած նրանց...։ Գուցէ հետագայում, երբ նրանց էլ... կ՝ազատագրեն կապիտալիզմի լծից։

Սկսում են ներկայացական, ստուդում, հօ փախչող չի՞ եղել։ Ներսն ու դուրսը լներ կան, չորքոտանի լներ, նաեւ՝ երկոտանի, որոնք հսկում են մեր իւրաքանչիւր քայլին...։ Կարդում են՝ «Ամեմեան Գուրգէն Գրիգորի», «Այստե՛ղ», փայտեայ ձայնով պատասխանում է փայտէ ճամպրուկը։ Այժմ հայկական հանրապետութիւնը իրարանցման ենթարկուեց. «Եղբայրնե՛ր, ախր, դա մեր Գուրգէն Մահարին է, մեր տաղանդաւոր բանաստեղծը, Զարենցի ընկե՛ր...»։

— Դեվուդէյտիս Իոզաս։

— Այստե՛ղ, — պատասխանում է մի ցածր ձայն։

Հիմա էլ յուզուեցին լիտուացիները. «Դա մեր նշանաւոր պրոֆեսորն է։ Հիանալի, բիւրեղեայ մարդ։ Ինչո՞ւ է այստեղ»։ Բայց այդպէս էլ պատասխան չըստացան...

— Թէյֆ Մոխէյ։

— Այստե՛ղ, — պատասխանում է ձայնը հրէական զգալի շեշտով։ Հրէական «միացեալ հանրապետութիւնը» աղմրկեց, փոթորկուեց. «Մայն Գոթ... մեր Թէյֆը, հրէական բանաստեղծը։ Մեր մի՛ակ հրէական բանաստեղծը»։ Հրեաները յուզուել ու կարծես թէ ուզում էին ծափահարել Թէյֆին, բայց ուշքի եկան... այստեղ չի թոյլատրւում։

— Շտերն Սոֆիա Մարկովնա։

— Այստեղ եմ, — պատասխանեց կանացի նուրբ ձայնը։ «Դա զօրավար Շտերնի կինն է», փսփսում են հրեաները...

— Ցվոդդեւ։

— Այստեղ եմ, չեմ փախչել, — պատասխանում է մի տիրական ձայն։ «Մի՞-

(3) Այժմ կայ Բիրոբիջանի ինքնավար շրջան։

digitised by A.R.A.R.@

թէ դա հենց ա՛յն Ցվոզդիան է, կոմկուսի ակնառու գործիչը, Լենինի զինակիցը, կոմիսարը», հետաքրքրուեցին ռուս մեծ ժողովրդի ներկայացուցիչները։ Այո՛, հետագայում պարզուեց, որ նա նոյնինքն Ցվոզդիան էր, որ հաստատել էր խորհրդային իշխանութիւնն ու... կոմունիզմ էր կառուցում։

— Զուբար Գրիգոր։

— Այստե՛ղ, — պատասխանում է առոյգ ձայնը։ «Մա մեր Զուբարն է՝ նշանաւոր իրաւաբանը, Հայաստանի հպարտութիւնը», կրկին վրդովում են հայերը...

— Սանամեան Աշոտ։

— Այստե՛ղ, — պատասխանում է բարձր, զայրացկոտ ձայնը։ «Մեր Աշոտի՛կը...։ Նկարիչ...։ Ախր, հրաշալի մարդ է...։ Արդէն տասնըհինգ տարի դեղերում է բանտերում ու ճամբարներում», ծանր հոգոց են հանում հայերը։

— Սկրիչան Եանկա։

— Այստեղ, — ակամայ պատասխանում է մի մեղմ ձայն։ «Տէ՛ր Աստուած, բելոռուս արձակագիրը, մեր Սկրիչանը», աղմկում է բելոռուսական հանրապետութիւնը։

— Վլա՛սով։ Ռափինո՛վիչ։ Ալկո՛նիս։ Մարկեւիչո՛ւտեւ։ Լուտկեւիչո՛ւտեւ։

Եւայլն, եւայլն։ Կանչում են, կանչում ու շարքեր կազմում՝ մի շարք ձախ, մի շարք աջ։ Ետանում ու խառնում են շարքերը։ Զուում են ու զուում։ Իսկ մեր բանտարկեալը, իր փայտէ ճամպրուկով աջ կողմումն է։ Նրանք միասին յայտնուեցին ապրանքատար կառքում՝ լցուած տարբեր ազգերի, տարբեր մասնագիտութիւնների ներկայացուցիչներով։ Նրանց կրկին ինչ-որ տեղ են քշում, իսկ ո՞ւր՝ ոչ ոք չգիտի։

«Ի հարկէ, այս բոլորը շատ հետաքրքիր է իրաւաբանի համար, բայց շատ երկար տեւեց, արդէն... տասներկու տարի։ Ինչ արած, ես այստեղ կը սովորեմ մարդու իրաւունքները իրականում, ոչ թէ թղթի վրայ», չգիտես լո՞ւրջ, թէ կատակով ասում է հայ նշանաւոր իրաւաբան Գրիգոր Զուբարը։

Հայկական հանրապետութեան բոլոր ներկայացուցիչները նստում են յատակին, ծալապատիկ, հնարաւորին չափ խրար մօտիկ, յիշում են անցեալն ու... լուծում հայկական զանազան հարցեր...

Իսկ մերձբալթեան հանրապետութիւններն էլ իրենց հարցերն են լուծում։ Զէ՞ որ նրանք նոր են ԽՍՀՄ կազմի մէջ, կարելի է ասել՝ «նորելուկ» են, միամիտ։ Նրանց չարժուձեւի եւ խօսելակերպի մէջ դեռեւս զգացւում են բուրժուական դաստիարակութիւնը եւ... կապիտալիզմի մնացուկները։ Նրանց համար այս ամէնը նոր է, առեղծուածային եւ ոչ միանգամայն հասկանալի։ «Երկա՞ր է տեւելու այս դժոխային իրաւունքը», հարցնում են միմեանց։ «Մա դեռ միայն սկիզբն է», պատասխանում են աւելի աւագները։

— Երեւի աշխարհի վերջը մօտեցել է։

— Է՛խ, ես յիմար էի, ինչո՞ւ ժամանակին չմեկնեցի Նուէյցարիա, հնարաւորութիւն ունէի, — դատում է մի երիտասարդ ձայն։

Վրացիները, չնայած իրենց տխուր վիճակին, իրենց երգն են երգում.

— Ընկեր Ստալինը այսպէս ասաց...։ Նա մեր մասին մտածում է։

— Դա վնասաբերութիւն է։ Ա՛յ, կը տեսնէք, նա մեզ բոլորիս ազատ կ'արձակի։

— Հա՛, մեր մասին է մտածում...։ Կ'ազատի, կ'ազատի՛...։ Արդէն տասը տարի է լսում եմ այդ մասին, — արձագանգում է աւելի տրամաբանող մէկի ձայնը։

Հրեաներն էլ իրենց լեզուով են փըսփրսում...։ Հասկանալի չէ, թէ ինչ հարցեր են լուծում նրանք...։ Միայն մէկ բան է բոլորին հասկանալի՝ «Ամիսոտիա, ամիսոտիա»։ Այո, երկաթ սպասուած ներում...։ Արդէն վաղուց է այս բոլոր կալանաւորները սպասում են դրան եւ սպասումը չի արդարանում...։ Բայց եթէ հրեաներն են խօսում ամիսոտիայի մասին, ուրեմն հնարաւոր է, որ այն կը լինի...

Իսկ մեր ազնիւ ու համեստ ասիական

digitised by A.R.A.R.@

ներկայացուցիչները, մեր դժբախտութեան ընկերները, նոյնպէս ինչ-որ կարեւոր հարցեր են լուծում...

Իսկ երեք մեծ ալաւոնական հանրապետութիւնները՝ Բուսատանը, Ուկրաինան ու Բելոռուսիան միահամուռ երդում են ուկրանիական ժողովրդական երգ.

...Ա՛խ, Աստուած դու իմ լաւ,
Ինչո՞ւ ես պատժում մեծ ժողովրդիս:
. . . . . .
. . . . . .
Ո՞ւմ սիրեմ՝ չկան, ո՛չ մայրս, ո՛չ
հարազատներս,
Մենակ եմ, ինչպէս թռչնակ հեռաւոր
երկրում:
. . . . . .
. . . . . .

Այո, նրանց ոչինչ չի մնում անել՝ երգելուց բացի, իսկ հարցեր քննարկելուց նրանք վաղուց են ձանձրացել եւ դա համարում են.. անօգուտ:

Գնացքը դնում է ու դնում...: Իսկ տարօրինակ ճանապարհորդները քննարկում ու քննարկում են իրենց կացութիւնը: Բոլորը փնտռում են մեղաւորներին ու... չեն կարողանում գտնել, կամ՝ չեն համարձակւում ասել: Ոմանք քննարկում են, ուրիշները՝ երգում, իսկ գնացքը սըլանում է դէպի ինչ-որ անյայտ երկիր...: Անիւները թրխթրխում են, օրերը դալիս են ու անցնում, կեանքը... նոյնպէ՛ս:

Ահա եւ ժամանեցին: Կանակ քաղաք: Իսկ այդ կանակից բոլորը ստիպուեցին 90 կիլոմէտր հետիոտն անցնել: Հաճելի եւ օգտակար գրօսանք: «Շնչուի՛ր եւ քայլ առ»: Գնում են Զերժինսկու շրջան՝ մըլատական բնակութեան վերջին վայրը: Բոլորը յոգնած, ֆիզիկական ու հոգեկան տանջանքներից քայքայուած: Գնում են ու կրում իրենց ուսերին ճամպրուկներ, պայուսակներ, կապոցներ եւ... իրենց ծանր ճակատագրերը: Արդէն չա՞տ են յոգնել, կ'ուզենային նստել, հանգստանալ, բայց հսկիչը գոռում էր. «Քայլէ՛ք, չտապէ՛ք: Բերանբացութեան ժամանակը չի՛: Այնտեղ՝ մշտական աքսորում կը հանգստանաք: Ապա՛, արագ-արագ: Դո՛ւք՝ այսպէս-այնպէսներ, թէ չէ հիմա՛ ձեզ հանգիստ ցոյց կը տամ», — գոռում են ատալինեան դարաշրջանի խեղճ գոհերի վրայ «հոգատար թիկնապահները», նրանք մի ասանեակից աւելի են: Շներ էլ կան եւ նրանք էլ են հաչում: Ահա թէ ինչ հաճելի է ապրել, բոլոր կողմից շրջապատուած ատալինեան հոգատարութեամբ...

Ցանկարծ աքսորեալներից այդ կարաւանը մօտենում է մի մեծ լրտեսի (գիշերը ռաստիկ անձրեւել է), փորձում են շրջանցել, բայց «թիկնապահները» գոռում են. «Գառկե՛ք» եւ բոլորը պէտք է ուղղակի ցեխաջրի մէջ պառկեն: Սակայն հրամանը հրաման է — ո՛ւր որ մեր հայրն ու ուսուցիչը ուղարկի, այնտեղ էլ պէտք է դնալ: Միայն ընկեր Ստալինի իմաստուն քաղաքականութիւնը կարող է նման մտքի յանգել: Կեցցէ՛ նրա իմաստուն քաղաքականութիւնը: Ուռռա՛: Եւ նրանք պառկում են առանց երկմտելու, միահամուռ, միաձայն...: Հինգ բոպէ անց՝ նորից հրաման. «Ոտքի՛», եւ բոլորը վեր են կենում... ու հիմա կեղտոտուած, թաց՝ չարունակում են ճանապարհը, անիծելով իրենց ճակատագիրը եւ իրենց տանջողներին, իսկ հսկիչները հեղնանքով ծիծաղում են. «Ահա եւ հանգստացաք»:

«Ինչպիսի՛ ծաղր. ինչպիսի՛ անմարդկային վերաբերմունք», զարմանում է փայտէ ճամպրուկը: «Ինչպէս նրան, որ ինքս փայտից եմ եւ ծնուել եմ դիւղում, բայց նման ք... կեանքումս չէի տեսել: Կարգին մարդկանց այսպիսի ծաղր ու ծանակի ենթարկե՛լ...» Նոյնիսկ փայտէ ճամպրուկն էր զայրանում:

Այս բոլոր դժբախտ ճամբորդներին ճամբարներում տասը տարի ծանր աշխատելուց յետոյ, իրենց ճամբարային շրջանը աւարտելուց յետոյ, փոխանակ ազատ արձակելու, հիմա էլ քշում են մըշտական բնակեցման եւ դեռ ճանապարհին էլ ծաղրի ենթարկում: Իսկ նրանք, այդ ճամբորդները, ոմանք՝ մշակոյթի, ու-

digitised by A.R.A.R.@

րիչները՝ գրականութեան, այլոք՝ գիտութեան, արուեստին նուիրուած մարդիկ էին, կային նաեւ քաղաքական ակնառու գործիչներ եւ զինուորական երեւելի ծառայողներ...

Մեր բանաստեղծը լռում է, լռում...։ Իսկ ճամպրուկը շարունակ մըտածում է, մտածում եւ ոչինչի չի կարողանում յանգել։ Ելք չկայ...։ Մտածելն իսկ անօգուտ է, բոլորը մռայլ են, յոգնած, այլեւս ոչ ոք չի ուզում խօսել։ Իրենց խրոխտ գլուխները կախած՝ նրանք գնում են երգելով ռուսական հին «Թուխտաշրջիկը» երգը, փոքր-ինչ փոփոխուած ձեւով.

Սիբիրի վայրի ատփատամներով,
Ուր քամառուած տմբում է մեր եղբայրը,
Ամիսներով իր դառն ճակատագիրը,
Փարշ եմ գալիս՝ մեռնելու։

Չկայ տուն, չկայ ազատութիւն, չկայ բախտ —
Ցառապամբ, բախիծ ու տխրութիւն...
Մեմ մի տխուր երգ եմ սկսում,
Հայրենիքի մասին մեմ ինչ-որ երգ ասում...

Հայրս վազուց է գերեզմանցում,
Գառկած Սիբիրի հողում,
Եղբայրիկս էլ Սիբիրում
Վազուց է շղթաները գնգցնում...

Չկա՛յ եղբայր, եւ եղբայրս է ամազոն,
Ու ես, տես, բռնուում եմ տարտարխոս...
Ա՛խ, ինչպիսի բաժին, Աստուած,
Ոգի աշխարհն եմ կանչում [որպէս] գաղուստ...

«Դադարեցնե՛լ քաղաքական երգերը, լռե՛լ։ Զմտորե՛լ։ Տես թէ ի՞նչ ապերախտ են, Խորհրդային կարգերն իրենց ազատագրեցին, իսկ իրենք դեռ դժգոհ են։ Մի սրա՞նց նայէք», գոռում են հսկիչները եւ...։ Չներն էլ են հաչում...

Վերջապէս բանաստեղծին ու փայտէ ճամպրուկին բերեցին Կուրա աւանը։ Ճամպրուկն այստեղ հանգստանում էր երկար ճանապարհներից յետոյ, իսկ նրա բանաստեղծը խոզերի ետեւից էր գընում.... կամ գիշերը պահակ էր կանգնում։

Այնպէս որ, մի՛ զանգատուիր, փայտէ ճամպրուկ, քեզ համար աւելի հեշտ էր, քան բանաստեղծի...։ Դու նրա պէս չտառապեցիր, այլ պարզապէս վկայ եղար, դէ, ասենք, մի ամերիկացի դիտողի պէս։

Մեծ ճանապարհորդ փայտէ ճամպրուկ, դու կարող ես հպարտանալ քո ճակատագրով։ Դու առաւելական բանաստեղծի, մեծ գրողի ու մեծ տառապեալի ընկերակիցն էիր, դրա համար էլ ահա գրուած ես նրա տուն-թանգարանի ամենապատուաւոր տեղում, այցելուներին ցոյց ես տալիս քո պարունակութիւնը եւ պատմում սարսափելի հեքիաթ-եղելութիւնը, Սիբիրի ճանապարհների, ապրանքատար գնացքների, ուղեւորման կէտերի մասին...։ Եւ շա՞տ բաներ ես յիշեցնում այն դաժան դարաշրջանի, նաեւ՝ քո տիրոջ սանջալից ճակատագրի մասին...։ Չէ՞ որ դու եւ քո պարունակութիւնը այն ահաւոր օրերի կենդանի վկաներն էք, կենդանի ապացո՛յցը։

Այցելուները նայում են այս բոլորին, յուզւում, լալիս եւ... անիծում մեղաւորներին։ Դա նշանակում է, որ դու քո առաքելութիւնը գերազանցօրէն եւ կատարում։ Իսկ այսօր մեզ պէտք չէ աւելին...։ Աւելի յոյս չեն տածում...

Ու գրուած է Գուրգէն Մահարու Թանգարանում փայտէ ճամպրուկը՝ լուռ վկան ու ընկերակիցը նրա սիրերեան համբաների, եւ պատմում է տակաւի հեքիաթ-եղելութիւնը բանաստեղծի դաժան ճակատագրի մասին...

ԱՆՏՈՆԻՆԱ ՄԱՀԱՐԻ

Երեւան 1971 թ.

digitised by A.R.A.R.@

Գ. ՄԱՀԱՐԻ

ՌՈԲԻՆԶՈՆ ԿՐՈՒԶՈ

Ապրում ես դու անընկեր
Օրերով անձուկ,
Գրում ես դու երգեր,
Ջուսնես ընթերցող:

Երանգներով, յոյզով
Կարա՞ծ դու պոետ,
Դու Ռոբինզոն Կրուզո
Ուրբաթ՝ երգիդ հետ...

1951

ՀՐԱԺԵՇՏ

Մնաք բարո՞վ, դա՛շտ, անտա՛ռ,
Իմ գոնիներ չար, կայտառ,
Մնաք բարով, պարկ, մահակ,
Գնում, կանգնում եմ պահակ:

Ներէք, եթէ ո՞վ գիտէ,
Մեռանչել եմ ես ձեր դէմ,
Մեղմ խօսքերով չեմ ուսել,
Մէկ-մէկ փայտով եմ խօսել...

Կամ ձեր վարքին անգիտակ՝
Քաշուել եմ մի թփի տակ,
Թողած գործս հիմնական
Շարժել մատիս քիմիական:

Մի դէպք էլ է պատահել,
Որ ձեզ ձորը չեմ տարել,
Քշել դաշտը չորայնի,
Որ հանդիպեմ Տոնհայնի...

Մնաք բարով, չա՛ր, կայտա՛ռ,
Իմ գոնիներ, դա՛շտ, անտա՛ռ,
Թողնում եմ պարկ ու մահակ,
Գնում, կանգնում եմ պահակ...

1952

ԵՍ ԳԻՏԵՄ ԻՆՉՈՒ

Ես գիտեմ ինչու ինձ սիրեցիր,
Եւ ոչ թէ խարտեաշ այն յուսալին,
Նա ե՛ւ ջահել էր, ե՛ւ գեղեցիկ,
Նա ե՛ւ խոհեմ էր, ե՛ւ յուսալի:

Ունէր աշխատանք շահութաբեր,
Գիտէր կառուցել, տաշել, չափել,
Բեռնել կարող էր, բեռնաթափել,
Ցանել, ցանքը ցանկապատել:

Իսկ ես... ինչ եմ ես՝ այս ցուրտ հոգում,
Թիւրիմացութիւն մի անհեթեթ,
Վախում եմ ձիուց, կացնից դողում,
Դուք-ով եմ խօսում սազերի հետ.

Նրանց փշրոցը սարսում է ինձ,
Սատանում առնոցը շների,
Ելնում է լուսինն Օձի բլրից,
Իսկ Ուսուկայում ոչ մի փերի:

Ես գիտեմ ինչու ինձ ընտրեցիր
(Ինձ հետ չես տեսնի ո՛չ մի եղեմ)
Որովհետեւ ես ե՛րգ եմ անծիր,
Որովհետեւ ես... ես պոետ եմ:

Ու երգել գիտեմ, հմուտ եմ ես
Երգի, խօսքերի, վանկ ու յանգի,
Ես, ճաղատ կախարդ, դիւթեցի բեզ,
Ու դու կորցրիր քուն ու հանգիստ:

Միամիտ աղջիկ, անմիտ աղջիկ,
Ինչի՞ դ են երգերիս մանեակները,
Զմրանը՝ լաւ է տաք մորթն արջի,
Քան թէ ոսկեհիւս ժանեակները:

Բալլադներից եւ սոնետներից
Ջես կարող եփել ոչ մի խորտիկ,
Նավելը հաց չէ, ոչ էլ երինջ.
Նաբ տարուն պահմը չես մորթի...

Իսկ դու ժպտում ես... գիշե՛ր լուսին,
Դու հաւատում ես իմ երգերին.
...ելնում է լուսինն Օձի բլրից,
Իսկ Ուսուկայում ոչ մի փերի...

1952

digitised by A.R.A.R.@

ՀԱՍՈՒՆ ՄՏՔՈՎ···

Հասուն մտքով գրուել են լոկ
Իմաստութեան գրքերը,
Կեանքի հասուն Օգոստոսին
Զարթնում են վեհ երբերը,
Մի՛ վախենայ իմ աշունից,
Գո՛նե է փառքը մեծ հնձի,
Գանգի աշունն է հասցնում
Ամենաբաղցր մրգերը···

1953

ՀԱՐՍԱՆԻՔ

Ահա իմ վերջին հարսանիքը
Ու հարսնացուն իմ ահա վերջին·
Հայելում ժպտում է վարսաւիրը·
— Հազիւ չմեռար, հայոց երգիչ···

Իմ հարսանիքը··· մլլիոն հիւրեր
Թափուեցին երկնքի կապոյտ փոնին·
Ու գարնանային ծիր շրջերը
Երգեցին մահու ու կենաց հիմն:

Իմ հարսանիքը··· Լիտվան պայծառ
Բացեց սեղան նոխ ու համադամ·
Ու լուսնի դէմքով, երկնում արծակ
Զարենցը կանգնեց՝ վեհ թամադա···

Ահա իմ վերջին հարսանիքը,
. . . . . .
Մռայլ նայում է վարսաւիրը,
Ցանկապատի մօտ մահն է, ինքը:

1953

ԳՈՒՅԷ···

Գուցէ վաղ թող կարդաս թերթերում
ու ժպտաս, — հանգաւ ի Տէր···

Վ. ՏԷՐԵԱՆ

Օ՛, ոչ մի թերթում դու չես կարդայ,
Որ հանգաւ ի Տէր քո Մահարին·
Ու ոչ մի ծաղիկ, ոչ մի քանդակ
Չի՛ գեղազարդի շիրիմը իմ:

Ո՞վ գիտէ, գուցէ այս է փառքը,
Մեռնել Կամիշում, Կուռայում կամ
Մոռանալ կրած անարգանքը,
Պնդել, որ ես եմ, եղել եմ, կա՛մ:

Ու հիմա մեռնել··· — ոչ մի քանդակ
Չի՛ գեղազարդի շիրիմը իմ·
Ու ոչ մի թերթում դու չես կարդայ,
Որ ի Տէր հանգաւ քո Մահարին:

1953

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

digitised by A.R.A.R.@

Ց· ՕՇԱԿԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

Անիկա հազիւ կարողացաւ շարժել թեւը, զոր կը զգար երկաթէն ալ ծանր, բերելու համար ալքի սահմանին։ Ժամացոյց նայելու այս փոքր ճիգը ցնցեց անոր ողնայարը։ Կը տառապէր անսովոր վախ մը գլուխին մասին, զոր բռնել կարենալու համար կոթնցուցած էր քանափէին անկիւնափայտին։ Իր վա՞խը։ — Իրեն այնպէս կու գար, թէ այդ գլուխը հանած էին իր արմատէն, ու դրած, խախուտ, ուսերուն փոսին։ Ժամը՝ տա՛սը։ Ուրեմն, քառորդ մը չէր բաժներ զինքը իր այն վիճակէն, որուն մէջ անիկա կրնար սա տղան կրել, ինչպէս ըրեր էր այնքան տանէ ի վեր։ Քառո՛րդ մը։ Որքան շատ կը թուի մեզի տեւողութիւնը, երբ դայն կը չափենք մեր սիրտին բաժակովը, ու գնովը՝ մեր ամէնէն սիրելի պատրանքներուն։

Մինչեւ ինքզինքը լիովին դանէր, անիկա չխօսեցաւ գրեթէ։ Նուազում ըլլալէ աւելի՝ թուլացո՞ւմ մը, պատահած դէպքը։ Անոր տառապեալ ջիղերը չէին կրցած հանդուրժել վերջին պարպումը ու լքած զինք։ Երբ եկաւ ոտքի, անիկա կը նմանէր նոր աշխարհ մը մըտնող օտարականին, որուն ոտքերը կը վարանին, բայց աչքերը կը խուզարկեն։

Անիկա բսաւ.

— Ուրկէ՞ որ եկար։

Ինչո՞ւ, երբոյզ անգամ ըլլալով, այս նախադասութիւնը։ Մենք կը խօսինք մենէ վեր ձայներու ունկնդիր։

Ու անմիջապէս, կուլ տալով մարմինը, միջուկը իր մատներուն մէջ, որ թաքուն յարդարիչը եղած է ամբողջ այս տեսարանին, անիկա նետեց գետին անոր կեղեւը.

— Ինչ հարկ աւելորդ բառերու։

Զէր անդրադառնար, որ իր բառերը էպարպուած պատեաններն էին ու ցաւ, ցաւ էր իրեն չլսել, բան չըլլալ ինչ որ իր խորագոյն

digitised by A.R.A.R.@

տագնապը եղաւ տարիէն ասդին։ Մեղքին դէմ ծառանալու վիպական հերոսութիւն մը այդ բացուելու, արձակուելու պահանջը իր մէջ։ Անիկա կրօնական խղճահարութիւնը չէր իւրացուցած, Քոյրերու վարժարանէն, վասնզի անոր մարմինն էր, որ ապրեցաւ, քան հոգին՝ այդ աղջիկներուն դալկացած կուսութիւններուն հետ չփոխելով։ Անիկա չունէր կրկին մեղքին ալ խղճահարութիւնը, մեղքին՝ որ կը ներկայանար այնքան թշուառ, քրտնած, եսապաշտ կոծանումով, մաշած մարմինի մը աղբիւրներէն։ Զղուանքի՞ հարկ, — բայց ատիկա հիմնական, դասական բարեխառնութիւն մըն էր անոր մէջ, անոր ազատ ժամերուն Քոլոդին։ Ուրի՞շ։ Այո, ուա՛ղ, ուրիշ, անանուն մղում մըն էր զինքը լարողը, չարչարողը, ընդարձակողը։ — Անանուն այն կարօտը, որ մեր սիրտին է, որբունքէն անդին ու չի դադրիր մահուան դուռները մինչեւ։ Կարո՛տը անոր, որ կայ ու չկայ։ Որ ինկած ճամբայ, դէպի իրեն դալու։ Բայց կը յամենար։ Մ՚վ։ Երբ դայ, կ՚իմանաք։ Անոր մեղքին դաշտը ողողուեցաւ անճառ արտմութեամբ։

Զայն դիտող մը, որոշապէս կ՚առնէր անկէ ապաւորութիւնը մէկու մը, որ կը հեռանար, կը քակուէր իր կապերէն՝ փնտռելու համար հեռուի բաներէն։ Հիմա, ուրդ, այդ հասակէն ի՞նչն էր, որ կը թափէր վար, գինքը ձգելու չափ մերկ։ — Սեպհական ամօթին վարչամա՞կը, զոր կրեր էր տարի մը, դատապարտուած բեկումով թէ անմեղութեան տուին անոր վերջին գլգլեակը, որ փոշի դարձած՝ կ՚իյնար ուրքերուն։

Գերման խարտիւթեամբ կին մը, քոտաք մը ձեռքին, կեցաւ անոնց դէմ։

Անոնց բաժանումը եղաւ աւելի թեթեւ, քան ամբողջ տեսարանը։ Ամբոխին մէջ կորսուելէ առաջ, Սոնան չափեց խանդավառ, միամիտ տղան Գարգեւեանին կշիռովը։ Ի՞նչ ուրիշ բան է սէրը, բաւ անիկա մտովի ու մեղքցաւ պատուական երիտասարդին, որուն ճակատագիրը պիտի ըլլար թաւալիլ կիներու ոտքին ու արհամարհուիլ։ Այդ մտածումը զինքը առաջնորդեց ուրիշի մը, — ամուսին։ Ու չեման այդ շատ պարզ, գեհիկ յղացքին ու Արտակ Գասպարեանին մատապտակերները հաչա էին իրարու հետ։ Երբ մեր օրերը կը բռնբուին հրդեհով, այն առեն կը դատենք միւս մարգերը, ուր հոմն ու կանանչ գարունը կը տիրեն։ Կեանքը կա՞յ տագնապէն, արիւնէն, կրակէն գուրս։ Հարցում է ասիկա անոր բերնին, որ կուրծքին մէջ դուեղ մը ասեղ կը հառաչէ։ Միամիտ տղան, դժբախտ ամուսին։ Ի՞նչ հեռու էր, կրնար ըլլալ, անիկա իր տիրտին։

Գարէգին մուտքին, ամբոխին հոսանքէն պահ մը վախնալով, վարանում մեաց։ Սեւամորթ ըսուելու չափ թուխ երիտասարդ մը, որուն դէմքին դեղնորակ աչքեր «հրաշունչ» բան մը կը յայտնէին վրան, դրեթէ բռնի, քսուեցաւ ուժգին մերկ իր թեւերուն։ Տարօրինակ սարսա՛ւռ մը անոր ողնայարն ի վար։ Անկիւնում անոր այտոսկրերները սեսաւ այդ սարսուռէն հաքը։ Ու չարչարագին բռնութիւնը, ծակող, ուղղ, ակող բռնութիւնը անոր նայուածքին ամչցուցինքը։ Փախաւ դրեթէ։ Մայթն ի վեր անոր կը հետեւէին ամերիկուհիներ, մէկը գեղանի, բարակ, ոունդերը չատ լայն։ Միւսը՝ անանուհի, մէկը գեղանի, բարակ, ոունդերը չատ լայն։ Միւսը՝ ան-

digitised by A.R.A.R.@

տանելի ուշադրութեամբ, մազերէն ճերմակ։ Նոյն սեւամորթ երիտասարդը, որ անցաւ քովէն։ Ի՞նչ կը փնտռէր։ Միծաղեցաւ իր հարցումին ու թողուց իր միտքը թափառիլ անոր եռեւէն։

Մինչեւ Սիլանտիտ փալաս անիկա հազիւ կարողացաւ ազատել իր միտքը սեւամորթ այդ բռնութենէն։ Ի՛ապրէր գլուխը էջի մը, որուն մէջ ճերմակ կիներու ակարութիւնը կը պատմուէր սեւերուն հանդէպ։ Սեռին հզօրագոյն բռնութեամբ վառուած ու վազած Ամերիկայէն Ափրիկէ մինչեւ։

Հրապարակ մը։ Մարդկեղէն հոսանքը հոդ կը տարտղնուէր իր յուսահատիչ, աղի հոծութենէն։ Կեդրոնէն արմաւենիներու գարդմանակաւոր սանդուխները, Ու արեւադարձային պտուտուքեամբ թաւուտներ չատրուանի մը եզերքը։ Սեւամորթ արձան մը ջուր կը թափէր այդ աւազանին։ Ամէն բան լայն, արձակ, մինչեւ հսկայական շէնքերը, որոնք եւրոպական ոճը կը պատմեն ու տարբականը կը պատրեն։

Սա բացութիւնը եղաւ օգտակար։ Թրամվայներ ու օթոներ անդադար ուշադրութիւնը կը պահէին պիրկ։ Անոր միտքը ստիպուեցաւ լքել սեւամորթ հունը ու դառնալ իրեն։ Հիմնական գո՞րծը։ Անշուշտ, ու անչեռամգելի՛ն։ Գտնել Մարանը ու «կործանել» զայն, բառ՝ զոր կը սիրէր գործածել, հետեւելով դրագէտին հեշտութեան, երբ գայն կը փակցնէր յարմար հասցէին։

Անիկա ինքզինք զգաց ուժով, քան որեւէ ատեն։ Ուրուացաւ, բայց չեղաւ սիլուէթը Արտակ Գասպարեանին, անկիւռ արարա՛ծ։ Ճենուեցաւ ու հաստատ եղաւ տարբերութեան որոշ զգացում մը, որուն վրայով իրարու կը կապուէին պարտէզին ակարութիւնն ու այժմեան վճռականութիւնը։ Շատ չփնտռեց զոպանակները այս փոփոխութեան։ Զգաց ակռաները, որոնք բան մը կը ծամէին։ Զգաց իր սրունքները, որոնք իր ոտքերը կը ճնշէին ու կը հրէին։ Գանդակին պատշգամ՝մը, որ իրեն յիշեցուց վերջապէս օրուան առաքելութիւնը, ուստ իշխանուհին ու միւսները։

Ելաւ մայմարեայ սանդուխը։

Պատշգամին վրայ, թիկնաթոռներու խորը ընկողմանած էին չատ մը մարդեր, աւելի ձեւ, քան թէ անհատականութիւն։ Մենք մեր դէմինը կը չենենք պզտիկ ճիգով մը։ Երբ մեր ուժերը յատկացուած են ուրիշ աշխատանքի, այդ ձեւաճշդումը կը կատարենք թերի ձեւով մը։ Մենք կ՝անցնինք, առանց տեսած ըլլալու։ Ու այդ հրաշքը կը փրկէ մեր միտքի մեքենան խորտակելէ։ Երկար չտեւեց սակայն այս տարտամ հոգեվիճակը։ Անիկա ոդոդուեցաւ իր գայրոյթէն ու առաքելութեան բեռէն։ Թիկնաթոռները եւան գոյնի, կշիռի։ Ինչո՞ւ՝ ոմանք պայծառ ու ամբողջ, ուրիշներ՝ թերի։ Կիներ էին, զանազան տարիքի ու աշխարհի։ Ու գլո՛ւխ միայն։ Ինչո՞ւ չէր տեսներ անոնց թեւերը, գլեսաներուն կտրուածքը ու կօշիկնե՛րը մանաւանդ, որոնք ամէնէն առաջ աչքի զարնող մասերն են կին դիտողի մը համար։ Ցարտեաչ, խարտեաչ ղէ՛մք մը, տարօրէն հաճ ու խաղաղ։ Կաթի, զառմէնի, ցորենեան ոսկեգոյնի, ճերմակի ու կապոյտի գեղեցկական խառնուրդէ մը կազապարուած։ «Մուս իշխանուհի՞ն», մտաբերեց անիկա։

digitised by A.R.A.R.@

բութեամբ մը, որ իրենց անհուն երկրին կէս բոլորակ ընդլայնումը

Ռուսերը ճանաչելի են հիւսիսեան միւս ցեղերէն գիծերու կոկը յիշեցնէ դէպի հարաւ։ Այդ դաշտաշխարհին խարտեաշ բերքը, ցորե՛նը, որուն հոգին տեղաւորուած է անոնց դէմքերուն, տարօրէն խաղաղ, մածուցիկ ու կշտացնող։ Իշխանուհիին քովն էր մանուկ մը, աթոռակէ մը իր գլխիկը հասցուցած հաւանական մօրը ծունկերուն։ Խմոր ու կորուա՛ծք՝ նոյն։ Թարմ, սուտ, պուպրիկ, ա՛յնքան՝ որ Սոնային աչքերը դժուար հաւատացին անոր իրականութեան։ Ցոգնած ժպիտով մը իշխանուհին կը խաղար պզտիկին ճակտի գալարքովը ու չէր տեսներ խաժամուժը ձեւերուն, որոնք իրմէ չորս-հինգ տէջ վար, կը բղխէին գիրար, անընդհատ աւրուող ու չինուող ալիքը մայթային հոսումին։ Ցանկարծակի, անոր մտքին ուրուացաւ Իշխան Գօղոս Արծրունին, խորտուբորտ, ճմուռ-ճմուռ, որուն ճակատի նեղ արտը ակօսաւոր էր գանգէսեան տելդային բրնձանոցներուն փեռեկաւումովը։ Ու Ռիթա Ձիվանզատէն։ Երկու անունները ինչո՞ւ նոյն բոպէին ներկայացան մտքին։ Դառն, ծամուած, փուտ պտուղի դառնութեամբ, պղտոր բան մը, յոգնութիւնը մտապատկերին, ծուռ-ելեալ իր ջիղերէն։ Ըռես անոր մարմինը ըլլար մորթաղերծ ու արբուէր աղջուրի։ Բաներ կան, որոնց ծրագրումը մեզ կը սպառէ արդէն, գործադրումէն առաջ։ — Ապատակե՛լ բորենին։ Բորենի՞ն։ — Իշխան Գօղոս Արծրունին։ Անչուշտ, ոսկին գերեզման մըն է շատ մը կենդրու։ Գայթակղութի՞ւնը։ Ինչ որ լուած էր քիչ առաջ։ Ցանիքով դերեզմանուած մեղքին բացուի՛լը դուրսին։ Շատ մտածելուն թերիներն են ասոնք։ Արեւը սկսած էր ծանրանալ դէպի չուքերը, որոնք աստքցեր էին ալ ու տարբերութիւնը հապիւ զգալի բացագիր հովանիներուն։

Անցաւ ներս։ Ու քրտինք ունէր, այն աղտոտ ու փոշոտ քրտինքը, որ չշինուած երեսները կը նուազէ այնքան դիւրաւ։

Սովորութիւնն էր միշտ, գործի կամ ծանօթութեան համար, մտնել ամէնէն առաջ քարտուղարութեան բաժինը, առանձին կազմած մը, մէկ անկիւնով մը մխուած մեծ սրահին, ու խրանալով հեռագրհեռէ դէպի ներս։ Մինաս Մարանին բազմապիսակ գործերը պէտքը ունէին այսպէս մէջէ մէջ խորացող ու հեղհեղէ անթափանց դարձող մանրանկար լաբիւրինթոսի մը։ Գարգեւեանին հետ Սոնան պտըտած էր այս կամարակապ ու կոյր հովանոցները, կահաւորուած աթեւելեան ճաչակներով, ամենապէս ու ճիշտ դեղօրներու հանդէսով մը։ Մարդ մորթէր, դուրսը կ'իմանար ոչինչ։

Քարտուղարութեան դիւանին մէջ Սոնան կ'երեւար յանախ, ա՛լ գործածութենէ ինկած մեքենայի մը վրայ գրելու համար նամակներ, վաճառելի թուղթեր, — Գարգեւեանին նորութիւնն էր ատիկա, այցովի եգիպտոսէն անցնող քիչ-շատ ունեւոր ու թերթ կարդացող ճամբորդները բուրգերու աշխարհէն ձօն-յիշատակով մը բախտաւորելու, անոնց դրկելով մեքենագրուած էջ մը Պարգեւեան, սուր ու ճչուն մտածումներ, բոլորն ալ ներկուած հասարակ տեղիք, — երդեր, նշանաւոր թատերախաղին տեսիլները։ Հոն ունէր անիկա ծանօթներ, բոլորն ալ պաշտօնեայ, օգնական դիրքէր. կամաւորներ՝ որոնք իրենց հսկայ հասակները տրամադրած էին պատուական աղ-

digitised by A.R.A.R.@

գայլերին ծառայութեան, հեղ մըն ալ Ամերիկա գտնալուն, մեքենաստան թուքին ու ծուխին նախամեծար համարելով հազնել պանդոկին ոսկեկոճակ համազգեստը ու տիկիններին առաջնորդել եղիպտական պտոյտներու, այս զբաղումը գտնելով խորապէս չահեկան, վասնզի ամէն տարի պատմութիւն կար կիներուն ու արար գավազներուն մէջը, ազի ու անպատմելի գրուագումով։

Շրջապատեցին զինքը։ Մշեցի հասա տղայ մը, կտոր մը փախուկ, որ սիրահարն էր Սոնային. եղաւ մռայլ, երբ տեսաւ օգնական քարտուղարները, որոնք ձգեցին իրենց գրիչները, բարեւելու համար թէ՛ գլխով, թէ՛ ձեռքով։ Մրաւ, որ ինքնաշարժ կը կրէր պառկները, մշեցիի իր գլխուն մէջ տեղ չէր կրնար տալ ձեռքով բարեւին։ Անիկա կ՝ատէր այդ տղաքը, այդպէս թեւաւորուած, անոր ոտը սեղմելու հաճոյքին չափ, անոր աչքին մէջ մտէն նայելու ցանկութեամբ։ «Հերն անիծած», «չան ձգնած» լակոտներ, քոթոթներ էին բոլոր առոնք։ «Իրանց էրկիրդ որանք փոքիկ կը հանէր»(*), Սուրբ Կարապետ վկայ։ Աղջիկի մը հետ առանձին խօսելը որքան քաղցր, Ոյնքան դառն բան է հիւրասրահի մը մէջ անոր հետ խօսելիք դտնելը։ Երիտասարդները հարցուցին անոր առողջութենէն, արամադրութենէն, դասերէն, կազմուելիք դիւթահանդէսին իր մասնակցութենէն, Պարգեւհանէն։ Խօսեցան անոր Իշխան Պողոս Արծրունիի նոր մէկ ժեսթէն, որով Նեղոսի վրայ նաւ մը կը վարձուէր առաջին փոքձերուն համար ու այդ գիշեր իսկ նաւը կը յարդարուէր՝ ընդունելու համար արթխտները։ «Բանալիներու ասպետ» որակուած ուրիշ գրագիր մը, թուխ ու հալած ու յաւիտենական սիրահար եկող-գացող բոլոր գեղեցկութիւններուն ու հասկնալի է անշուշտ՝ նաեւ Սոնային, անոր կարծիքը ուզեց առնա իշխանուհիէն, որ «կը գահակալէր» պատշգամին վրայ։ Թուն վիճաբանութիւն էր ստեղծուած անոր հմայքին վրայ։ Ու տղաքը ծաղրած էին թուխ սիրահարը, որ ստանաւոր էր գրեր, ամբողջ գիշերը անքուն մնալով, ու փառաբաներ «օրհնածիր աչքերը ձիւնածնունդ պատկերին»։

— Ո՞ւր է քերթուածը, — ձայնեց արկղակալը, որ հետեւեր էր այս փոքր ժխորին, ապակեպատ իր սենեակին խորէն, սպասելով Սոնային։

— Հո՛ն, — ցոյց տուաւ ուրիշ մը։

Թուղթի կտոր մըն էր, մաքսատան կնիքով։ Սինաղ։

Ցղան, մռայլ, կախեց գլուխը աջին։

Սոնան, իր սովորութեան համաձայն, անտարբեր էր այս զբաղմունքին, տրտում ազմուկին, չհնուած հաճոյքին ու ցաւին անհերքելի յարաղրումովը, — կեանքին տուրքը մեր բոլորին, մա՛նաւանդ մեծ վաճառատուներու սպասարկուներու չրջանակէն։ Զտնելու դարձին այլուրութիւնը անոր դէմքին։ Զէ՞ որ, ըստ թուխ ասպետին, անիկա «օղէն քաղցր» աղջիկն էր «սա մեր ճանաչածներ» աշխարհին, «գեղեցիկ հուրի՞»։

Անիկա ուղղուեցաւ անտուկ։

(*) Ցիկ համնել — մարդը մորթազերծ ընել։ Մորթը ուռեցնել ու տիկ ընել։

digitised by A.R.A.R.@

Արկղակալը, «Հնդիկ իշխանուհին», — պանդոկներու մէջ շատ ընթացիկ այս տիտղոսները ծիծաղելի կը դառնան անոնց սպասաւորուներէն, որուն տիրակալութեան, ըստ հայկական քերթողին (որ իրը հայ բանաստեղծ ի պատուի էր մարանեան աշխարհին մէջ), պայազատութեան շրջանն էր հիմա։

Որ ժպտադին ու կարմրած դիմաւորեց զինքը, ուրքի հլլելով իր գահէն — ճոխ թիկնաթոռ մը — ու երկարելով ձեռք։ Տիկին իշխանուհին քիչերու կ'ընէր այդ «պատիւը»։

Նեղ, բայց տարօրէն գրաւիչ դէմքով այդ իշխանուհին, հանդարտ ընդհանուր սպասումին, ամուր էր իր գահոյքին, հեռուելով մարանեան շրջանակին անվրէպ իմաստութեան, քանի որ ամուսնացած, ըլլալով ըստ մարանեան օրինադիրքի, երկու ամիսէն պարտաւոր էր զինել իր գահը ուրիշին, աւելի թարմ, նոր, ամուսնանալիք աղջկան մը։ Այդ շրջանակը չատոնց նշանակած էր հաւանական ընտրեալին, Սոնային անձին վրայ, դեռ տարի առաջ։ Դէպքերը կը յամենային պատկել այդ գուշակութիւնները։ Ու երկուքին մէջտեղ ամէն բան, ձեւ, ակնարկ նիւթ էր մեկնութեան, քննադատութեան։

Տիկին Ալիքեան, հնդիկ իշխանուհին, որ կինն էր եղած մարանեան Լուքսորի մասնաճիւղը վարող երիտասարդի մը, կու գար մարանեան արահետէն ու կը տարբերէր նախորդներէն իր ախորժակներուն ընդարձակութեամբ։ Այս ճշդումները կ'ընէին մարդիկ, որոնց զրաղումը գիշերը կը սկսի ու հետապնդումն է, հեռուէ հեռու, բոլոր այն կիներուն, որոնք լաւ կը հագուին, շոայլ կ'ապրին ու կը բնակին առանձին, քիչ մը աչքէ տար տուներու մէջ, մօր մը կամ մօրաքրոջ մը հետ, էրիկով, աւելի յաճախ՝ առանց էրիկի — պաշտօնեայ, համբարդ, շրջուն վաճառորդ — ներկայացուցիչ զանազան մեծ տուներու, ընկերութիւններու սանկ ու նանկ դուզէններով, մօրեղբայրներով, հօրեղբայրներով։

Տիկին Ալիքեան, իր արտայայտութեան ու շարժումներուն մէջ կը պահէր նիհար ու չփայած իր խռովքը, ինչպէս նաեւ սնուցեալ ու Մարանին սիրտը, պալատական կիներու վայել աչալրջութեամբ ու շահագրգիռ, ցանկայարոյց, «իշխանական» մնալու դիւային դիտութեամբ մը։ Եղած էր խռովայոյզ աղջիկ, դարպասած հասնողին ու խրատած, Մարանը կատարեալ պարզութեամբ, դեռ դպրոցը չաւարտած ու «փաղցած» անոր գլխուն մէկը իր շահեկան խաղերէն, ինքզինքը քշելով իրր «անչամանդաղ կուսութիւն», ճագարի արիւնով «կուրցնելով» ցնդած աչքը Սաթիրին։ Ու կը տիրէր դեռ այսօր։ Որքա՞ն էր տեւելու շրջանը այս զգլխանքին։ Պանդոկին ընտանի դատաւորները, հանոյքի ընկերներ, հիմնուելով իրենց մօտաւոր փորձառութիւններուն, բաւական մօտ կը տեսնէին «վախճանը», նկատի ունենալով Պարդեւեանին յայտնի ծերացումը, Նիւթապէս աղօտացումը ու Սոնային հեռզհեռէ յաճախուող այցերը, վիլլայի դատերը, ամէնէն աւելի Մարանին յափրացող բնաւորութիւնը։ Անոնք խելացի էին այս սիրապետութեան իրր թաքուն զսպանակ ընդունելու նաեւ տունի աղջիկը, Մելինէն, որ հաւանաբար կը հիրքէր մարդուն արիւնը տունէն տակաւին, պանդոկ դրկելով սէրէն ինկած դոնդողբան մը։ Մարանը անտարբեր էր Մանիլակ Ալիքեանով, ու կը թո-

digitised by A.R.A.R.@

դուր, որ անիկա բռնէ անուկը։ Մրցարան էր ինկած տարի մը առաջ ժամանող առաջ երգչուհի մը, որ արեւելահայ երիտասարդի մը ուսերէն ինկաւ պանդոկ, աշխատեցաւ մեծ ոճէ ոճքլամով մը ինքզինքը արժեւորել իբր կայսերական «Թատրոնի» երգիչ ու մեծ փոր երեսփոխանի մը ազարակը պարտաւորուեցաւ բնակիլ, իբր ամուսնանք, ընդարձակ վոնտուելով Գէյին կինեբէն, որոնք ծեծելէն աւելին ըրին, զինքը կապած յանձնելով ազարակին Ատոնեբուն անյազուրդ լկումին. գիշեր մը ամբողջ։ Երգչուհին չբողոքեց։ Երեսփոխանը ազդեցիկ էր ու զգուած «Հիւսիսէն»։

— Ո՞ւր է պարոն Մարանը։

Ինչո՞ւ իշխանուհիին, սա հարցումը, երբ միւսները հոգի կուտային իրեն հետ խօսելիք գտնելու։ Բոլոր հարցումները հոգեբանական պարզումներ են ու մատնութիւն։ Գուցէ այս է պատճառը, որ արարողութեան պէտք մը կը միջամտէ, «նախ քան խօսակցութիւնը» պայմանը։

Մաղձակուռ այս հարցումը ո՛ր հրաշքով եղաւ, ելաւ այնքան պարզ ու թեթեւ, որպէսզի իշխանուհին կճուէր անկէ՝ ինչպէս օձի մը ժանիքէն։ Նախանձը պարզ բառ մը չէ։ Անիկա թաքուն, ապահով, անվրէպ զգայարանք մըն է, հզօրագոյնը ո՛չ միայն սեռային, այլեւ՝ ամենական մարդերուն։

— Դեռ չէ եկած։

Ճեղքուած ու նեղ, խուսափում աւելի, քան պատասխան, հերքելու չափ համբաւով քաղցրութիւնը, բռնակալ հմայքը անոր խօսուածքին, որով կը վառէր ան սիրտերը այրերուն։ Անոր այդ զգայարանքը Մշեցի Մրատն որակած էր «օձի իշխանութիւն»։

Տպաւորուած, յուզուած, վերյիշելով պարտիզեան տեսարանը, արցունքները, Մարանին գուգորդ իր սիրտ խառնող զգուանքը, մատները տարաւ շրթներուն։ Զխօսելու նուրբ փախուստ մըն էր ատիկա։ Հազ մը, բռնի, հեռացուց խօսքին համբան։ Անիկա մնացեր էր լուռ։

Տաքը սկսած էր ճնշել ու պանդոկին աղմուկը խուլցած՝ մութ բաներէ։ Գոլը, յոգնութիւնը, թեթեւակի քրտինքը կ'աւելնային խարու դէմքէ ու սիրտէ։ Բան մը կը հեւար սրահին խորերը մինչեւ։

Հեռաձայն։

Խօսող-պատասխանող պարոնը, բոպէ մը մտիկէ վերջ, դարձուց գլուխը իր, անդամ մըն ալ աչքով հաստատելու ներկայութիւնը մէկուն, Սոնային — իբր թէ տեսած չըլլար — ու խօսեցաւ գործիքին մէջ, հաստատակամ։ Ցեռոյ անցուց թեւը իր կեռին ու աւելցուց.

— Օրիորդ Սոնա, մէկը քեզ կ'ուզէ։

— Իշխան Արծրունի՞ն։ — Հարցնողն էր թուխ ու հալած երիտասարդը, բանաստեղծ ու ասպետ ու «փատ կոտրող»։

Սոնան կարմրած էր։

Ամէնքը, լուռ չափեցին չոչորթ երիտասարդը, որ կռնակ դարձուցած բազմութեան, բանալիներ կը տեղափոխէր, անտարբեր քաջին ու ըրածին։

Հեռաձայնողը հերքեց։ Խօսողն էր Անգա Միրզեան։

Տեսակ մը ամօթով խաղաղութիւն «փակեց» այդ միջադէպը։

digitised by A.R.A.R.@

Սպասումը եղաւ քիչ հետաքրքիր։ Անգա Մխրոմնան իշխանուհի չէր, ու չէր երիտասարդ։

Երկու վայրկեան չանցած՝ ներս մտաւ կին մը։

Քառասունէն վեր, յոգնած, խաղաղ։ Ցատկանշական էին աչքերը. բաց, չափազանց բաց կապոյտ, այնքան՝ որ կաթոտած ծովու կաւրներու կը նմանէին, հրաշքով ինկած անոր ակնակապիճներուն։

— Անգա Մխրոմնա։

— Սոնա Գոհարեան։

Տեսակ մը չուարում՝ երկուքին ալ դէմքին։ Սոնան յիշեր էր Գարգեւեանը, անոր երիտասարդութեան Անգա Կէօրկէօճեան, ուրացուած զաւակը ու քաղցր, հեզ պատկերը անոր յիշատակին։ Օտարուհին փոթեց անկնեռ իր ճակատը։ Ձիգ մը կ'անցնէր անոր ուղեղէն։ Զէր հասկցած։ Սարսռուցաւ կրկնել.

— Սոնա՞ Գարգեւեան։

Սոնան չհերքեց ու ժպտեցաւ։ Տիկին Ալիքեանի միջամտութեամբ հարթուած էր թիւրիմացութիւնը.

— Սոնա Գոհարեա՛ն։

Օտարուհին բացաւ մեծ ու քաղցր իր աչքերը։ Հասկցա՞ւ, թէ կ'ուզէր հասկնալ։ Կը խօսէր կամաց ու վախկոտ, տարուած խարտեաշ այն բանէն, որ պատանութիւնն էր դէմի։ Իրենց ցրտութեան մէջ, Հիւսիսի կիները իրենց ջիղերուն կ'ապաստանին ու ժպիտ, միտի խաղին, մարթի փայլին կը վստահին ինչ որ Արեւելքի կիները կը հանեն իրենց միսերուն մեծ կաւրներէն։ Դէմք ըլլալէ առաջ, Արեւելքի կիները հեշտութիւն են, հառուն ու հեւուն այն իրութիւնը, որ դէջ է ու արտաուչ։ Եթէ արդուզարդը յաւելում մը է, ապահովաբար կեղծ բան մը կ'ունենան Հիւսիսի ու Արեւմուտքի կիներուն վրայ, զանոնք ընելով պուպրիկ ու տեսիլք, քիչ էդ։ Արեւելքի ու Հարաւի մէջ ոսկին ու մետաքը կիները կ'ընդարձակեն, կը խրատցնեն։ Հինան ու ծարիրը երբ վայելչութեամբ զետեղուին, նոր զգայնութիւններ կը դիզեն անոնց միսերուն։

Անգա Մխրոմնան, մեծ նկարիչ մը, դէմքերու յօրինիչ ու մեծ հասկցող, տասնչին իսկ ակնարկին զուշակեց խոր ձգողութիւնը Սոնայի։ Ցեռայ արամեցաւ։ Ու անոր աչքերուն մէջ արամութեան սա տարակոյսը վարակիչ ալ էր, վասնզի Սոնան ալ ամփոփուեցաւ իր ներքին շնորհներուն վրայ։

Անոնց խօսակցութի՛ւնը։

Տիկինը կը խօսէր շատ սահուն ֆրանսերէն մը, առանց ազդային լեզուին։ Փարիզ ուսած ու կեանքը անցուցա՛ծ՝ մեծ ոստանները բազմաբազմաբնակ ոլորտին մէջ, անիկա արտայայտութեան ճշգութիւնը կը միացնէր թաքթին ու դիտողութեան։ Արուեստագէտները երբ կը ճամբորդեն, կը տրվին համալսարանի մը ուսիլ. մեծ պանդոկներու ներքանցքներու մէջ ինչ որ չունին տարվելիք մասնաւորաբար քարքառած տրքաները։ Հաստատութիւն ու լիութիւն։ Անիկա հետաքրքրուեցաւ Օրիորդին զբաղումովը։ Արեւմուտքի մէջ տունի աղջիկները դաստիարակուած են տունի ապրանք նկատուելէ։

— Դաչնա՞կ։

digitised by A.R.A.R.@

Հանոյք ինկաւ անոր ամբողջ դէմքին։

Այդ մէկը լաւ էր։

— Ինչո՞ւ, — հարցուց Սոնան, դիւր զգալով ստոր այս գնահատումը զբաղումի մը մասին, որ Գոլոյ, Իզմիրի՝ ինչպէս Գահիրէի մէջ ենթարկուած էր որոշ արհամարհանքի։ Փիլ էր մնացեր, որպէսզի արուեստագէտն ու դպրոցի մանկապարտիզպանուհին նոյնանային հասարակաց այդ արհամարհանքին մէջ։

— Աբմանն ալ դաշնակահար է։

Ո՞վ՝ այդ Աբմանը։

Հարցումը ըրաւ մաքէն Սոնա Գոհարեանը։

Բայց կ'երեւի չէր ծածկած զայն ամբողջ։ Վասնզի նկարչուհին աւելցուց.

— Տղան։

Ու անոր քաղցր աչքերը ողողեցին անսահմանելի բանով մը ներիտասարդ աղջիկը։

— Ժամը տասնի քրէնով հոս կ'ըլլայ։

Սոնան զգուշաւոր — չէր դիտեր, թէ ինչ բանէ կը վախնար — սահեցուց աչքերը Թեւին։

Տասը քսան կ'անցնէր։

— Ուշացած է Քրէնը կէս ժամով։

Հեղինակութիւնը, դիմացինին մտածումին թափանցելու այս դիւրութիւնը նո՞ր կը տեսնէր Սոնան, որպէսզի զարմանախառն անձուկով մը լեցուէր անոր դէմ։ Ո՞վ էր այս կինը։ Ուրկէ՞՝ անոր տիրապետող հոմը։

Ծառակցութիւնը, նեղուած ան վախէն, ինկաւ իր շահեկանութիւնէն։ Սպասումը, իր կարգին, հոգեկան իրողութիւն, կ'աղդէ մը-նացեալ իրողութեանց վրայ։ Ամէն սպասող պակաս է իր մէջ, երբ կը խօսի կամ կը գործէ։ Սոնա՞ն։ Ամէն աղջիկ սպասող մը՝ է։ Միտվանկ անոր պատասխանները՝ չկամութի՞ւն, թէ երկիւղ։ Անիկա հեռու էր պահէն, ինչպէս խօսակիցէն։

Նշմարե՞ց այս ճարտարանքը նկարչուհին։

Շրջանակ մը, մեծ մասով երիտասարդ, ցանցառ մը կը բոլորէր զանոնք։ Տիկին Միրովնայէն համբա՞ւը, թէ Սոնայէն հրապոյրը հեղինակն էին այս հետաքրքրութեան։

Նկարչուհին փոխադրեց խօսակցութիւնները օրուան շահեկան նորութեան, դիւթահանդէսին վրայ։ Ուրկէ՞ դիտէր անիկա Սոնայէն մասնակցութիւնը այդ ներկայացման։ Ձշդեց անոր կաղապարին մարմնական դերը պատկերներու հոլովոյթին մէջ ու դասաւ շղարշին երանգները, որոնք անոր դէմքին հետ ամէնէն աւելի «հաչտ կ'իյնային»։ Ցետոյ լայնօրէն տուաւ իր գիտութիւնը, գոյներուն աշխարհէն։ Անիկա կը մասնակցէր խաղին, ծրագրած ըլլալով «հիւսել» դիւթական պարտէզ մը, մեսրոպի ու բեհեզի, կին, ծառ, աւազան, կենդանիներ՝ բոլորն ալ կազմելով շղարշէ ու վառէ։ Արեւելեան այդ պարտէզին մէջ տեղի էր ունենալու գործողութիւնը խաղին։ Իր նը-կարագրութիւնը կենդանի ըլլալու էր շատ, վասնզի հապիւ բեռնակիրի մը բաւող իր Ֆրանսերէնով Մշեցի Մրտոն խակ, հիւսը ծռած, չփախցնելու համար համը ասումին, կը լեցէր շրթները, ականջին փըլ-

digitised by A.R.A.R.@

Քակը քերելէն, աչքերը գամած Սոնային ծոծրակին, աղուամազ ու «նշխարք», «տաքուկ ձիւն» ու «փոր վիրապ», — փոսիկը։ Հաստկզակ բեռնակիրը մասնաւոր տկարութիւն ունէր այդ «վիրապին» հանդէպ։ Քաղքի էժան աղջիկներուն հետ իր ապարկութեանց առեն պայման կը դնէր այդ «փոսիկը», ԸՐՇԸ ԱԱՂ(*) մը յօժարեցաւ ասկէն դուրս վճարումին ու իր առջու քիթը գետեղած արդէն յիմար այդ թշուառուհիներու ծոծրակին, հոտուրտալով ու մռլտալով արջու նման, կը շարշարէր զանոնք իր բեռին ներքեւ։

Մէ՞կը մտաւ ներս։

— Արմա՜ն։

Տիկին Միրովնան նստուած էր ոտքի։

Ամէնքը դարձան եւ, դէպի դուռը։

Դիւանի մուտքին քիչ մը գունատ, բայց զմայլելի ճակատով, որմէ վեր, չես դիտեր ինչ շնորհով յարդարուած բացութեանը վերայ գանկին մազի զուգահեռական զոյգ թելեր կը դալկանային ընտանի վայելչութեամբ մը, կարծես իրենք իրենց չինուած, կեցողն էր Սահակ Գարդեւեան, ինքը կատարելապէս, վրայ տուած եգիպտական գունաթափ պատառը դէմքին, ինչպէս եւ ուռեցքը փորին։

Ապշութիւն։

Նմանութիւնը այնքան հզօր, չէր խուսափած ոչ ոքէ։

Նման պարագաներու, անդիմադրելի բացագանչութիւնը հաչկական երանգի, ճչուն եւ աղմկոտ, զպուեցաւ հազիւ այն առեն, երբ մայրը ու տղայ իրար ողջագուրեցին։

— Զաւակս... Արման...

Ինչո՞ւ այս տիկինը կը մոռնար մականունները։

Ցեռոյ դառնալով աղուն.

— Հայեր։

Նորեկին տրամադրութիւնը թուեցաւ այլայլած։ Դէմքին վերայ տեսակ մը տհաճ բան ուրուացաւ, զոր կիները զգացին այրերէն առաջ ու աւելի խոր։ Գարշ զգայնութիւնները ինչո՞ւ տարբեր կ'ապրին սեռէ սեռ։

Մայրը, նեղուած, մթնամուց.

— Սոնա...

Կեցաւ, կմկմալով։

Մոռցա՞ծ էր մականունը։

— Գոհարեան, — լրացուց բանալիներու ասպետը, եղերական իր արտասանութիւնը հազիւ պարտկած։ Այնքան վարժ էր մռայլ չափով քերթուածներ կարդալու, որ սովորական խօսակցութեան իսկ կլոր ու ողբական բան մը փոխ կու տար։

Երիտասարդը, որ այրերուն համար ունեցեր էր «անկնճիռ» կեցուածք, ոչ աջ ու ոչ ձախ, յառաջացաւ դէպի աղջիկը «հաւուոր» համարձակութեամբ. զէթ այդպէս տեսան ներկաները։ Բնական, խրաւունք մը ունեցողի ընտանութեամբ, որուն մէջ երիտասարդները զգացին սեռային հոսանուտ ու գոլ, առաւ անիկա աղջկան ձեռքը ու,

(*) ԸՐՇԸ ԱԱՂ — ՀԱՅ ԴՈՒՐՈՒՇ մը, տասը միլիոն։

digitised by A.R.A.R.@

բոպէ մը անոր աչքերուն խորը ինքզինքը սեւեռելէ ետք, ծռեցաւ խնձոր ու համբուրեց այդ ափը։ Արուեստագէտի հով, շարժումի շնորհ, հասունութիւն, խանդաղատանք, հմայք ու շրթներու անհուն իմաստութիւն իրարու աւելցան կարճ այդ բոպէին մէջ։ Սոնա՞ն։ Դալկացած ու խեղճ։ Ամ ալ զղացին հայ տղաքը։ Թուխ բանաստեղծը եղերգութիւն մը յղացաւ, ուր ողբալու էր մեր ազգիկներուն օտարամոլութիւնը եւ ցեղին ոգին հանդէպ անոնց անարգրելի մեղքը։ Բայց աւելի չահեկան եղաւ Մրատն, որ չէր դիմացած ու քիթին տակէն, մոլտալէն, Թող տուած իր սիրական առածը.

— Արդեն էլ ապասէ, հասնի...

Ցաւարտեց առածը, վասնզի ամէնուն ծանօթ էր պակսող բառը, իր հաստ թրքերէնովը։ Սրամտութիւնը կը ծաղրէր յիմար ու յամառ ապառամները, անոնց հեղինակներուն հագցնելով արդու կերպարանք, որ արդու իրենց խելքով կը գտնային տարիներ, ազգիկներուն փէշին, մինչեւ որ աչքը բացին մէկը ափափէր պտուղը։ Անառուն առաջին ծաղկող ծառին ներքեւ Թող տեղուէր ու պառկէր հաստ կենդանին, ապասելով, որ հասնին կարմրուկ պտուղները։ Մինակ արդն է, որ կ'անդիտանայ, թէ էն առաջ ծաղկող ու էն ուշ պտուղի հասնող ծառը հոյնն էր։

Թէթեւ ծիծաղ մը դիմաւորեց առածը։ Նոյն ատեն տղոց նախածքը ինկած էր բանալիներու ասպետին, անմիջապէս յետոյ՝ Սոնային, որ իր սաթէ գալկութենէն ետքու բեհեղ ոսկեղուրին։ Արեան այս խուժումը մատնող էր արդէն։ Փակեց աչքերը, ինքզինքը տեսնելու, թէ ուրիշները չտեսնելու համար։ Արման... Միրոմեան, կիսաժպիտ ու թեթեւ հակեցաւ ալին։ Հանողն էր հնդիկ իշխանուհին, որ ձգեր էր ապակեայ իր խցիկը ու վազեր սրահ։

Խորունկ զոհունակութիւն, որ կ'արտածորէր հնդիկ իշխանուհիէն։ Ինքզինքը ներկայացուց, ծեքծեքումի մօտ շնորհով մը։ Ան արդէն ծանօթ էր դաշնակահար մեծ արուեստագէտին, դէթ իր համբաւէն, մօրը եւ եւրոպական թերթերու տեղեկութիւններով։ Ան ալ երկարեց իր ձեռքը մեծարժէք համբոյրին։ Գահ մը դժգոհ անոր աչքերը — Անդա Միրոմեան մոռցած էր զինքը, Սոնայէն ետքը — այդ համբոյրով, դարձան խոր ու հրապուրիչ։

— Երկու նամպազ... — մոլտաց Մրատն, բայց դարձեալ չաւարտեց նախադասութիւնը։ Խորապէս կ'ատէր վերջդիր էզը, որ զպատառ մը միսովը աշխարհքը կը կառավարէր։

Տիկին Ալիքեան, ազգիկութենէն, վարժուած էր քիչ բան լսելու ու շատ ալ չլսելու։ Իմացաւ բեռնակիրին ակնարկութիւնը, բայց շարունակեց ժպիտ ու խօսիլ։ Գայմանագրական ու տափակ հարցականները, օդէն, ծովէն, տաքէն կամ հովէն, որոնք շարշարագին պահ մը կ'ընեն մեր առաջին բոպէները նոր քաղաքի մը։ Սառած, քայքայուած, բերան բանալու խակ վախնալով, Սոնան հագիւ ուժ կը գտնէր իր մէջ, խօսակցութեան հետեւելու։

Կարգը եկաւ այլերուն։

Երիտասարդները դատ-դատ թօթուեցին ձեռքը Արման... Միրոմեային, իրենց անունները արտասանելով վճռական ու յստակ ա-

digitised by A.R.A.R.@

ուղանութեամբ, ինչպէս կը պահանջէր պանդոկին տէրը։ Օտարնե-
րը դժուար կ'ըմբռնէին մեր բառերը։

— Մրսո Ջրդոնենց, Խուլթիկ գեղից, — ներկայացուց ինք-
զինքն ալ Սոնային պաշտօնական սիրահարը, անայլայլ ու փարթամ,
ինչպէս էր արդէն իր կեցուածքը «Հաղուկ-տուզուկ» կնիկներու սե-
մին, պայուսակները ինքնաշարժ փոխադրելու համար, պաշտօնական
«դիրք առած» պահուն։ Քանի տարի է, այդ դիրքը խեղ չէր բերած
իր արշու սպառումին, վանդի ուրիշ պանդոկներու բեռնակիրները
կ'ախորժէին գրգռելէ անոր միամտութիւնը, հնարելով «կանանչ
պատմութիւններ, հերո՞ս դերակատարներով, որոնք այդ բարակ
մէջքով կնիկները զոյգ-զոյգ իրենց անուններէն, մրջիւնի պէս, ճիշդ
«մէջտեղունս» կախելով՝ ճիս-ճիս կը ճուացնէին։

— Քամբախտ ինչ, վալլահ, քամբախտ... — վանդի իր ար-
ջու թաթերը դեռ բախտը չէին ունեցած այդ մէջքերը օղակելու ի-
րենց Թելին(*) մէջ։

Որքա՞ն էր տեւած այդ տեսարանը։

Երբ եկաւ ուրբի, Սոնային մարմինը դեռ չէր ազատած առաջին
դողէն։ Անիկա անկարող էր այդ վախին պատճառ մը գտնել ու այդ
անստուգութիւնը, անգիտութիւնը նոր զրգիռ մը կու տար անոր
ապշնային։ Միտքը՝ կակուղ, ջերմէ նոր անցնող հիւանդի մը չափ,
արդէնի մտածէր։

Անապարեց դուրս։ Հեռը կը քալէ՞ր իր ծրագիրը՝ Իշխան Արծ-
րունին տեսնելու։ Իրականին մէջ անիկա առտուկ պէտքն ունէր
առանձնանալու։ Փոքրց տանող մեծ գուռին խոնուա՛ծ՝ բնիկներ, ո-
րոնք իրենց կեղծ Բղէշները, սֆինքսի մանրանկարներ ու արձանիկ-
ներ, բոլորն ալ ճարտար նմանութիւններ, կ'աշխատէին քշել միա-
միտ կիներու, ամերիկացի, բայց ա՛լ վարժուած տուա այդ վաճա-
ռումին նկարագրեալ կեղծիքին։ Անոնցմէ վանուած այդքան հեռուէն,
Սոնան դարձաւ կրունկին։ Պանդոկին մեծ նրբանցքն էր, որ կը խո-
բանար, կը խոբանար, վուտիկանեան տաճարամասի մը պատրանքը
ճարելով աչքերուն։ Փակ, թանկագին գորգերով սեւաւոր դուռներ,
ճակատնուն բոժոժը եւեկարական լոյսին ու թուանշան։ Անոնք կը
թուէին հսկել օրուան մեռելը, սա ճնշող պահուն։ Ջերմ խոնաւու-
թիւն մը, ուելի ճիշդ՝ մարդկեղէն հոսանուտին անտես մշուշը բը-
ներ էր տարածութիւնը, այն դէջ ու սերմ ու ծուխ ու շունչ համա-
խառնուրդ թելադրող կծու բանը, որով կը տարբերի բնակուած տեղ
մը ամայի պարզ չորութենէն։ Նրբանցքի վարի յատակին, ապակե-
ղէն յարդարանքով մեծ, բազմակարան ագոյզը դուռին, ուրիշ կը
սկսէր պարտէզը։

Ան անդրադարձաւ, որ տարուած էր դիւանէն, առանց մնաք-
բարովի, յանկարծակի, զարմանք առթելով իր ամապարանքին՝ ինչ-
պէս տկարութեան համար։ Ու բաժանումին այդ հուրքը կրկին պա-
ղուրեց գինքը։ Ի՛նչ գօրաւոր՝ այդ վախը, ու անոր իբր կեղրոն՝ ե-

(*) Թել-քել = բայց բրամատեն ու ցուցամատեն յօրինուած։

digitised by A.R.A.R.@

բիտասարդ դաշնակահարը։ Ուզից այդ զգայութիւնը փնտռել իր միտքէն։ Ի՞նչ կար երկիւղալի այդ նմանութեան ու իր յուզումին մէջ։ Ցանկարծ մտածում մը հասունցաւ իր մէջ, ինկաւ իր սիրտը՝ ինչպէս պտուղը ծառէն։ Ուրիշներ Գարգեւեանին ատուերը տեսած էին երիտասարդին վրայ։ Ի՞նչ։ Ու եղաւ իր մէջ նուազման մտիկ այն վիճակը, զոր ստեղծեր էին աղուն շրթունքը ձեռքի միսերուն, անկէ ալ ուրիշ խորունկ տեղերուն, ճիշդ՝ ծաւալման, կսկծման, թիթեռ նոյն ալիքով, որով որ կը քալէր երբեմն, ոչ միշտ Գարգեւեանին համբոյրը, ՀԱՅՐԵԿԱՆ իր մարմինէն։ Ներքանցքին հատնելուն մօտ, պատի լուսաւոր մէկ կէտին իւղանկար մը, ինչպէս ուրիշ անգամներ, գրաւեց իր ուշադրութիւնը։ Արեւելեան քոլորիով այդ նկարին մէջ, ՀՐՀՈՐԻ մը գլխուն իրար կը սպաննէին երկու մարդ, մէկը՝ մօրուք, ճերմկած մազերով, միւսը՝ սեւահեր ու մատաղ։ Դէմքերը կատարելապէս նոյն։ Քարի մը վրայ, անտաբեր, սոփորը կուչտին աղջիկ մը հանդիսատես էր այդ փողոտումին, ու կը մնար թեթեւ յուզումով։ Ո՞վ էին երկու մարդերը։ Անիկա մտածեր էր շատ նկարին իմաստին։ Ցանկարծ պարզ եղաւ հանելուկը։ Բայց այդ թափանցումը զանակի պէս ցաւցուց իր սիրտը։ Անիկա ուզեց ուրիշ տարազուող գաղափարը։ Դուռ մը բացուեցաւ ու խարտեաշ աղջիկ մը, կիսամերկ, բացուածքէն քննեց երկարութիւնը, առանց վախի տեսաւ զինքը ու քաշուեցաւ ներս։ Անոր եւեւէն Սոնային մեղքը, որ ՀՐՀՈՐԻՆ մօտ նստող աղջկան մը զգայութիւնները կը թելադրէր իր մարմինին։

Ներքանցքի յատակին, ապակեղէն ագոյգէն, գունաւոր լոյսի խորհրդաւոր ազաւաղում մը կը թրթռար, ըսես լսելի։ Երիտասարդ ապակիներէն այն օրն ալ կը պղտորուէր նոյն յուզումէն, որուն նիւթական ալիքը կարդ մը հոգիներ կը յաջողին սեւեռել իրենց ՀԻՂԵՔՈՎ։ Համազգեստով պատանեակ մը, որ պաշտօն ունէր, ամէն ոտնաձայնի բուսնելու մեղմով, դուռը բանալու, անցք տալու համար այցելուին։ Հատած, քիչ, բայց խոովիչ այդ պատկերին միշտ կը գտնար Սոնան, Գարգեւեանէն իմնելով դէպի այդ մատաղ տրոմութիւնները, ըղձաւոր ու հիւանդ, որոնք քանը չողջունած՝ հոգ կ'ինչնեն կամաց, առանց նեղելու աչխարհը հիւանդանոցի մը անկիւնէն։

Ամէն անգամուան նման, Սոնան իմաւ պարտէզ։

Արեւոգարձային առատութիւնը, յաղթութիւնը բոյսերուն ու կծիկի, վաչխառու անտեսութիւնը մեծ քաղաքներու հոգին կ'ապրէին արտում հակադրութիւն մը։ Զեմ ծանրանար պանդոկի մը մուրացիկ պարտէզին։ Դրէք Սոնան հովանոցակէ մը ներս։ Ու թող բանայ անիկա ինքզինքը, իր գաղտնի մասը՝ երեւցող իր մասին։ Աղջիկները գոնէ չեն տառապիր երազէն։ Սոնանե՛ր՝ որոնք ո՛չ կին են, ո՛չ աղջիկ։

Անիկա չինեց երիտասարդը։ Բայց զարհուրած՝ ուրեց պատկերը։ Վասնզի չեմ գիտեր ո՛ր ալքերէն բուսաւ Գարգեւեանին հեռաւոր աղան, լքուած աղան, որուն վրայ, գրագէտը՝ այնքան մը-լաւ, տուեր էր պատառիկ գիծեր։ Անգա Միրովնա՛։ Բայց Անգա կէօկէօրնա՞ն։ Ակռաները ցուցան, այնքան հզօր էր զարկած այս մտածումը անոր ուղեղին։ Բաներ կան, որ դուրսէն կը մխուին մեր միտքին, յանկարծակի, դամի պէս։ Լուծուած գաղտնիքին հետեւող

digitised by A.R.A.R.@

լայնքի, հանգուցի զգայութիւնը չէր առիկա Սոնային մէջ, այլ սկը-սող տրամի մը ալաքը, որ կը մտնէ առաջին ճօճումին։ Ու ասկաւին կան ուրիշ բաներ, որոնք կիները կ'ապրին, առանց բլալու։ Մէկը ըսաւ անոր եկլել վեր, բայց չըսաւ ինչուն։ Ցետոյ պարզուեցաւ ամբ-նին խմասը, — եկլել վեր, չտեսնել տղան, բայց կանչել մէկդի ա-նոր մայրը։ Ռնել դասակէն — բռներ էր իրը — նայէր աչքերուն, բայց վար, չատ վար։ Փնտռա՞ծը։ Գիտէր ասիկա։ Գտնելի՞քը։ Քա-նամեայ աղջիկը, որ օր մը եղած էր այդ կապոյտ բարձունքներուն մէջը փրփուրէ ծնած տրլանին նման ու եղեր ինչ որ ինքն էր քիչ առաջ, շրթներուն ասակը անոր զաւակին։ Քառորդ դա՞ր։ Ահաւոր չանմարա՛ն՝ ուր դիզուած էին, փոչի խակ ըլլալու բախտէն զրկուած բիւր-բիւր դիակները մարդոց օրերուն։ Քառորդ դար առաջ։ Այսին-քը՝ երբ ինքը չկար։ Ու իր տեղը, իր հիմկու խռովքովը, տարտու-նեռովը, ճերմակ կրակին ամբողջական փաղաղումը, կար այդ օտա-բուհին։ Անոր աչքերը եղան թաց, վասնզի այցելած էր իր խորունկ ցաւը, — զգուանքին, գրեթէ ատելութեան հասնող այն զգացումը, որուն կապուած էր իր մէջ ժառանգակերը սեռային զգլխանքին։ Այդ օտարուհին, որուն մէջն էր լոգցած հրխտատրդ մարմինը, այդ անորակելի ալիքը մեծատաղանդ թշուառականին։ Կիները հետաքրք-քիր են։ Բայց ուելի՞ն։ Այսինքն՝ ինչ որ պարտաւոր են ճշդելու, պահելու այդ զկծումէն, պահելու խորունկ, որպէսզի փրկեն տրբա-մագին բաներ։

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

(Շար. 16)

digitised by A.R.A.R.@

ԲԵՐԷՔ...

Բերէք, օ՜, բերէք, Ադամի որդիք,
Զարչարանքը ձեր, զրկանքներն ամէն,
Թռիչքի պահուն հրացանազարկ
Ձեր երազներուն եւ մեծ յոյսերուն ճիչը ազեկէզ,
Եւ ռումբի նման ձեր սրտին պայթած
Անարատ սիրոյ փերթերը սուրսայր,
Օ՜, կայնեկցանքի արժանի հպարտ որդիք Ադամի,
Կեանքի դժպիի խաղերէն սերած բարդոյթները ձեր,
Իրարու հանդէպ ի զուր արձակած՝
Ի՞նչ–ի՞նչ պատճառով
Սեւցած գամերը հոգիներուն ձեր — զուցէ դեռ բարի —
Բերէք, օ՜, բերէք, Ադամի որդիք,
Խրեցէք ամուր եւ սպառսպուռ
Իմքնաբզկտում իմ հոգիին մէջ,
Դրախտ խոստացող աշխարհի գժոխք պատերուն վրայ
Դուք զիս գամեցէք, ազատագրեցէք,
Այն պահուն երբ դեռ աշխարհը համայն
Իբրեւ մարախի երամ անոպայ
Իմ երթին վրայ այսպէս կը տեղայ...

Մինչ իբրեւ պատիժ ես դեռ կը կրեմ,
Ոչ մէկ պսակով,
Ոչ մէկ ժպիտով չբաւարարուող,
Այս փո՜քր երկրին մէջ չպաբիակուող
Անկշտում կրակ՝ գոյութիւնն իմ այս ցմահ ճարճատող...

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@



Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՁԱԿ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

●

Հակառակ նոր անուններու բացակայութեան՝ արձակի մարզը որոշ աշխուժութիւն կը ցուցաբերէ վերջին տարիներուն։ Հաւաքական կենցաղի մը բացակայութեան պատճառաւ՝ անշուշտ դժուար է սիւրէալիստական ինքնայատուկ, առանձին մթնոլորտով վիպական սեռ մը պատկերացնել։ Այս առումով՝ տուեալ ժամանակագրութեան մէջ քննարկուած հեղինակներէն մեկնած՝ կը տեսնենք, որ Յակոբ Կարապետեանց կը փորձէ ամերիկահայ մարդու տագնապը բերել, այն մարդուն, որ կը տուայտի իր ծննդավայրի աշխարհով (այս պարագային՝ Պարսկաստան), և բարդ ու բազմամակարդակ հարցադրումներ կ'արծարծէ(1)։ Անշուշտ այս մէկը Ամերիկայէն հանող համատեղեան այն բարի ու միամիտ աշխարհահայեացքը չէ այլևս, որ երկրի կարօտով կ'ապրի եւ չատ ալ շրջապատով չէ հետաքրքրուած։ Ընդհակառակն, այս մէկը իրեն հետ կը բերէ ամերիկեան ամբողջ քաղաքակրթութիւնն ու ապրելակերպը։

Քննարկուող երկրորդ հատորը կը պատկանի Գէորգ Ահեմեանին(2), որ, ինչպէս իր նախորդ գործին մէջ, իր լուսարձակը կը կեդրոնացնէ Լիբանանի եւ Լիբանանի քաղաքացիական պատերազմին մէջ բռնուած ժամանակակից հայ մարդու տագնապներուն վրայ։

Շահեկանը այն է, որ երկու հեղինակներն ալ կը փորձեն թափանցել ըս-

(1) Յակոբ Կարապետեանց, «Ադամի գիրքը», Նիւ Եորք, 1983, 255 էջ։

(2) Գէորգ Ահեմեան, «Ցարդզոզի ժառանգները», Գէյլուք, 1983, 528 էջ։

digitised by A.R.A.R.@

փիւռքահայու ներկայի տագնապներուն մէջ, ուր կը դրուին Խորհրդային Հայաստանէն արտադրեալ սկսեալ մինչեւ ահաբեկչութիւն երկարող հարցեր, երբեմն օրէ մը վերացական կամ չատ սկզբունքային կերպով։ Եւ ճիշդ այս գործերուն արժարծած որոշ չափով ընդհանրական հարցերուն համար՝ պիտի կեդրոնանանք անոնց վրայ։

Անշուշտ կարելի էր յիշել Մովսէս Պէլաքեանը, որ վերջին տարիներուն Լիբանանէն փոխադրուած է Ֆրանսա, եւ իր պատմուածքներուն մէջ իր նոր շրջապատէն տիպարներ կամ կացութիւններ կը ներկայացնէ։ Տուեալ հատորը՝ «Կեռասի ժամանակէն վերջ եւ առաջ» (1983), 8 տարուան բաց մը կը նշէ իր նախորդ գործին («Բարի՛ւ, Հայաստան») հրատարակութեան թուականէն։ Ճիշդ է, որ առանձին չենք անդրադառնար այս հատորին, սակայն կ'ուզենք նշել, որ մեզի կը թուի , թէ Պէլաքեան կորսնցուցած է իր տիպարներու («աշխարհի») բնական շրջապատը, որոշ «ծանրացում» մը զգալի է իր սնին մէջ, եւ երբեմն այն տպաւորութիւնը կ'ունենանք, որ կարծէք դրժուար կը զարգանայ գրողական արարքը։

Կայ տակաւին Իսթանպուլէն հասնող Բաֆֆի Գէպպաճեանի «Խարտակուած խառիկը», որ երախայրիք մը ըլլալով հանդերձ, ընթերցողները որոշ չափով ծանօթ են երիտասարդ հեղինակին պատմուածքներուն («Բագին» ամսագիրի եւ երբեմն ալ «Հայրենիք» օրաթերթի էջերէն)։

Եթէ նկատի ունենանք, որ յիշեալ չորս գործերն ալ այս տարի լոյս տեսած են՝ հասկնալի կը դառնայ, թէ որ աշխուժութեան կ'ակնարկէինք սոյն գրութեան սկզբնաւորութեան։

Այստեղ կ'ուզենք քանի մը կէտ եւս արձանագրել։

Նախ՝ հակառակ յիշեալ եւ կարգ մը հեղինակներու ստեղծագործական-արտադրողական ճիգին՝ յաճախ անհեթեթ կացութեան մը մէջ կը գտնուին հեղինակն ու ընթերցողը։ Օրինակ, քանի՞ հոդի Լիբանանի մէջ տեսած են Կարապետեանի վերջին երեք գործերը, կամ՝ քանի՞ ընթերցող, Ամերիկայի կամ Ֆրանսայի մէջ, ծանօթ են Լիբանան հրատարակուող արձակ կամ չափածոյ հրատարակութիւններուն...։ Կարծէք գրականութիւնը կը դեգերի 40–50 գրողներէ, խմբագիրներէ կամ գրասէրներէ բաղկացած շրջանակի մը մէջ, ինչ որ աշխուժ կամ ուժական երեւոյթ չի կրնար նկատուիլ...

Այլ մտահոգութիւն մը՝ Կարապետեանի եւ, մանաւանդ՝ Անեմեանի գլխաւոր հերոսներուն մօտ նարկիսականութեան տասող ինքնահիացումի եւ ինքնավստահութեան խառնուրդն է (ինչ որ նկատելի էր նաեւ Անեմեանի նախորդ հատորին՝ «Ապուգայի հետքերով»ին մէջ), որ, ըսելու համար նուազագոյնը՝ կ'անհանդիստացնէ ընթերցողը։

**

Ի՞նչ կը փորձէ ըսել Կարապետեան իր «Ադամի գիրքը» անուն վէպով, կամ ո՞րն է իր բերած աշխարհը։

Ադամ, այսինքն՝ առաջին մարդը, կամ՝ նոր մարդու, նոր հայու կամ պարզապէս մարդու բնորդը։

Առաջին գլուխները Ադամի համար ինքնաքննարկման նկարագիր ունին։ Այն տպաւորութիւնը կ'ունենանք, որ ճոյներեան ձեւով, մէկ օրուան մէջ, Ադամ իր շրջագայութիւններով, հանդիպումներով, յուշերով եւ մտածումներով իր աշխարհը պիտի բանայ, սակայն վէպը տարբեր զարգացում կը ստանայ։

Երկրորդ կարելի դիծի մը զարգացումին կը պատրաստուինք — ինչ որ վստանդաւոր պիտի ըլլար այս պարագային — երբ հերցոկեան յղումներու կամ նմանութիւններու կը հանդիպինք։ Այսինքն՝ երբ Ադամ, Սօլ Պելլոյի հերոսին պէս, կը սկսի մտքին մէջ խմբագրականներ գրել (Հերցոկ նամակներ կը գրէ), կամ Ջելդայի ամառնային բնակավայրը կ'երթայ

digitised by A.R.A.R.@

(նոյնպէս բաւական մեկուսացած վայր մը), ներքին հարցերը յստակացնելու եւ իր աշխատասիրութիւնը աւարտելու։ Անշուշտ կայ նաեւ Ադամի ամուսնալուծումը եւ իր կնոջ Մելինէի հետ կապուած հարցը, որ Գելլոյի հերոսին հետ այլ զուգահեռ մըն է, որովհետեւ ինչպէս Հերցոգի կինը հրէական կրօնքի եւ կաթոլիկութեան միջեւ ընտրանքի հարցեր ունի, հրեայ կամ ամերիկացի ըլլալու, նոյնպէս Մելինէի հաւաքական դիմագիծը՝ հայ թէ ամերիկացի ըլլալու միջեւ՝ հարցեր կը ստեղծէ։ Սմէն պարագայի՝ կարտպենց դիտակիցն է այս նմանութիւններուն, եւ քանի որ զուգահեռները կը մընան ձեւական սահմաններու մէջ՝ մեզ չեն նեղեր։

Վէպին առաջին գլուխները սփիւռքահայու ներքին հարցերը մէկ-մէկ կը բերեն լուսարձակի տակ։

Վահանին հետ հանդիպումը՝ Հայաստանէն արտագաղթի երեւոյթը կը նշէ։ Վահան՝ Պարսկաստանէն անցած է Խորհրդային Հայաստան եւ այժմ դուրս եկած, եւ իր զաւակներուն ապագային առումով փաստարկուած արդարացումը ամբողջութեամբ անհեթեթ կը դառնայ՝ ամերիկեան շրջապատին մէջ զաւակներուն ապրած ողբերգութեամբ։

Ադամի հանդիպումը մօրաքրոջ հետ՝ կապ մըն է հերոսին անցեալին, ծննդավայրին հետ, այսինքն՝ Թաւրիզի եւ քիչ մըն ալ աւելի անդին՝ ընտանեկան անցեալին, Ղարաքազի հետ, որ կ'երկարի մինչեւ ժանկութիւն, մինչեւ հայրը։

ՄԱՅի չէնքին դիմաց՝ թրքական զբօսաշրջիկութեան գրասենեակին պայթումը, որուն զուգադիպաբար ներկայ կը գտնուի Ադամ, եւ անոր յաջորդող ամերիկացի պատասխանատուի մը հետ զրոյցը, անդրադարձներ են հայկական զինեալ պայքարի ներկայ փուլին։

Այս բոլորին դիմաքը՝ արտագաղթ, ծննդավայր, Ամերիկա, ներքին տագնապներ, հայկական ահաբեկչութիւն, տակաւին Ադամի երկու ճամբորդութիւնները Հայաստան՝ ամբողջ քարտէսագրծումը կը կատարեն սփիւռքահայու ներքին թէ արտաքին հարցերուն։

Զելդայի ադարակին մէջ Ադամի ինքնամեկուսացումը միմիայն իր ուսումնասիրութիւնը աւարտելու չի ծառայեր։ Ան կ'ուզէ յստակացնել իր վերաբերումը կրօնի՝ Մելինէի եւ անոր սիրահարին՝ Մուրհէդի նկատմամբ, եթէ կ'ուզէք՝ Ադամի փորձը, ձեւով մը արտաքնացումի, էքսոբսիզմի ճիգ մըն է՝ Մուրհէդի ներկայութեամբ զգացած ատելութիւնը կամ բրտութիւնը վանելու։ Մելինէի եւ իր զաւակներուն հետ հանդիպումը պիտի ծառայեն իր ներքին ապրումներու բիւրեղացման։ Հետաքրքրական է նաեւ վայրկեան մը կենալ Ադամի ուսումնասիրութեան կամ հատորին վրայ։ Կը տեսնենք մարդ մը, որ կը գրէ զանգուածային հաղորդակցութեան միջոցներուն մասին, երբ չէ յաջողած իր կնոջ հետ, կամ անհատական մակարդակի վրայ՝ հաղորդակցութիւն հաստատել...

Սակայն երբ կը կարծենք, որ ամէն ինչ յստակացած է եւ իր հունին մէջ մըտած, որովհետեւ յաջողած է Ադամ-Զելդա յարաբերութիւնը եւ Ադամ կ'աշխատի այս անգամ ստեղծագործական երկի մը վրայ՝ Ադամի գիրքին, աղջկան անակնկալ մահը ամէն ինչ կը խանգարէ։ Անկարելի երա՞զ մըն է նման յարաբերութիւն մը, անիրականանալի՞... Որովհետեւ Զելդան հայերէն պիտի սորվի, հայերէնով պիտի կարդայ Ադամի գիրքը եւ միասին պիտի երթան Խորհրդային Հայաստան՝ հոն բնակելու։ Այս բոլորը չատ գեղեցիկ կը թուին... իրական ըլլալու համար։ Փաստորէն, Զելդայի արկածը լուծում մը չէ՞ այս բոլորին, իսկ ո՞ւր կը գտնուի այլեւս Ադամ՝ սիրած կնկան մահէն ետք. ամէն ինչ սկիզբէն չի՞ սկսիր։ Նոյն կէտին չէ՞ վերադարձած։

Գէթաք է նշել, որ Կարապենցի նախորդ գործէն՝ «Միջնարար»էն երկու պատմուածքներ իրենց ներկայութիւնը զգալի կը դարձնեն տուեալ վէպին մէջ։ Առաջինը՝ «Եւ նա խաղաղութեան...»ը, հօր-զաւկի, ծննդավայր-երկրորդ արտագաղթի գծով, այստեղ՝ Թաւրիզէն Ամե-

digitised by A.R.A.R.@

րիկա, միւսը՝ «Ուշացած պրատրոս»ը, ուր Սիլվա-Ռիչմոնդ յարաբերութիւնն ու Սիլվայի եւ իր ամուսնին տագնապը՝ Ադամ-Մելինէ-Մուրհէդ եռանկիւնը կը յիշեցնէ։

Ամէն պարագայի, որքան ալ Ադամի Զելդայի յարաբերութիւնը համոզիչ ի թուիր, կը կարծենք, որ վէպը կը յաջողի մարդկային կացութիւն մը փոխանցել, մանաւանդ այն բաժիններուն մէջ, ուր Ադամի ներքին-անձնական տագնապները կը դրուին, եւ դէպի անցեալ ու ծերունդավայր հոգեվիճակը կը բացուի։ Իսկ հոգնիկ պէյզաժական ձեւական նեմանութիւնները, վիպական ըմբռնողութեան նորոգումին ու թարմացումին կը ծառայեն։

⁂

Գէորգ Աճեմեանի «Ցարդգոի ծառանգորդները» երկ մըն է, որ Լիբանանի եւ լիբանանեան քաղաքացիական կռիւներուն ընդմէջէն (իբրեւ աշխարհագրական շրջապատ) կը փորձէ քննել ժամանակակից հայ մարդուն տագնապները՝ քիչ մը ամէն մակարդակի վրայ։

Ինչպէս վէպի սկզբնաւորութեան կը նշուի առանձին նոթով մը, սոյն երկի հերոսներուն հանդիպած ենք (կամ անոնց կարեւոր մէկ մասին) Աճեմեանի «Ակամայ ծուղրածուն եւ այլ դերասաններ» անուն գործին մէջ։ Սակայն այս մէկը նախկինին շարունակութիւնը չէ։

Ժաղ Առաքելեան վերադարձած է Հայաստանէն. ինք եւս դժուար կրնայ բացատրութիւն տալ այս առընչութեամբ։ Պարապէս վերադարձած է, որովհետեւ իր տեղը չէ, եւ կամ՝ Արեւելահայաստանը կամ ներկայ Խորհրդային Հայաստանը արեւմտահայուն հայրենիքը չէ։ Անմիջապէս կը ճշդուի տարին՝ 1973. ժամանակաշրջան մը, երբ լիբանանահայութիւնը զէնք կեանք մը կը վարէ, հակառակ շրջապատի մէջ կազմաւորուող բարդութիւններուն եւ վառօդի հոտին։

Աստիճանաբար կը ներկայացուին եւ հետ կ'առնեն վէպին հիմնական անձնաւորութիւնները — Գեղամ Տարօնեանը՝ նախկին հայերէնի ուսուցիչը կամ ներկայիս անգլիատառ թերթի մը խմբագիրը. Արամ Սարգիսեանը՝ Ժաղի գործատէրը, որ իր կազմաւորումով, ապրելակերպով եւ համոզումներով աւանդական սերունդին ներկայացուցիչն է. Մուշեղը՝ Սարգիսեանի որդին, որուն նախ կը հանդիպինք հիւիինները յիշեցնող խմբակի մը հետ, որ հետզհետէ զարգացում արձանագրող միակ տիպարը կը դառնայ. Սեղան՝ Ժաղի կինը, եւ Ալիսը՝ Սեդայի քոյրը, որ դժբախտ ամուսնութիւն մը կնքելէ ետք՝ ամուսինէն կը հեռանայ եւ որոշ զգացումներ կը տածէ նախկին ուսուցիչին՝ Գեղամ Տարօնեանին նկատմամբ, որուն հետ մտերմութիւն մը զգացած է դպրոցական տարիներէն սկսեալ։ Ցիշեալ անուններուն վրայ զէնք է աւելցնել տասնեակ մը տարբեր տարողութեամբ անձնաւորութիւններու անուններ, որոնք երեւան կու գան այս բաւական ծաւալուն վէպի տարածքին՝ փորձելով որոշ հաւաքականութեան մը դիմագիծը ներկայացնել։

Ընդհանուր գիծերու մէջ՝ կը ներկայացուի Լիբանանի նախապատերազմեան շրջանը, ապա՝ 1975-76ի քաղաքացիական պատերազմի մթնոլորտը, ուր տարբեր ճակատումի գիծերը կը կազմուին, Գէյրութը կը սկսի բաժնուիլ երկուքի եւ քաղաքի վանճառականական կեդրոնը կ'այրի, կը փճանայ, կը փճանայ Արամ Սարգիսեանի հաստատութիւնը նաեւ։ Մարդիկ քաղաքի արեւելեան կամ արեւմտեան կողմերուն մէջ կը բանտարկուին եւ յաճախ կը կորսուի հաղորդակցութիւնը անոնց միջեւ։

Եթէ մէկ կողմէ հասկնալի է Գէյրութի գիշերային դինեռուններու կեանքը, կամ Տարօնեանի եւ նման վայրի մը մէջ աշխատող դերմանուհի Հիլտայի յարաբերութիւնը, միւս կողմէ՝ քիչ մը տարօրինակ կը թուի Գեղամ Տարօնեանի եւ

digitised by A.R.A.R.@

Ալիսի յարաբերութիւնը։ Ինչո՞ւ խմբագիր-գրողին այդքան փայփայած առանձնութիւնը արգելք պիտի հանդիսանայ երկուքին միջև երկարող բնականոն կապի մը։

Մինչ այդ՝ Մուշեղ, որ «բնականոն» կեանքի մը սկսած էր վերադառնալ եւ կը խորհէր կրօնական ըլլալու մասին (էջ-ինածին երթալով), կը սկսի Գէյրութի արեւելեան կողմը մնալ, հայկական թաղերու պաշտպանութեան մաս կազմել, եւ ա՝ կը նուիրուի հայկական զինեալ պայքարին, որ սկսած է ձեւ առնել նոյն Դուսականներուն։

Զուգահեռաբար՝ շարունակ դեղերող ժագ Առաքելեան պիտի անցնի Միացեալ Նահանգներ՝ համոզուելու համար, որ հոն եւս իր տեղը չէ։ Իսկ Արամ Սարգիսեան, որ մեկնած էր Ճունաստան, աղջկան մօտ, պիտի վերադառնայ՝ «ազատագրելու» համար դաղթականներէն բռնադրաւուած տունը եւ իր զաւկին՝ Մուշեղի մասին տեղեկութիւններ ստանալու։

Մուշեղը չկայ եւ գործի աւարտին միայն հայրը կ'իմանայ, որ ան մաս կազմած է հայ զինեալ ազատագրական շարժումին, յարգոյղի ժառանգորդներէն մէկը դարձած է եւ նահատակուած այդ ճամբուն վրայ։ Արամ Սարգիսեանի մէջ աստիճանաբար կը կազմուի այն գիտակցութիւնը, որ Մուշեղի ընտրած ճամբան է միակ ելքը հայութիւնը յուզող ազգնապներուն եւ փնտռտուքներուն.

«Այս երիտասարդները իրմէ շատ աւելի իմաստուն էին, աւելի գիտակից եւ պատասխանատու։ Երջանիկ։ Եւ ուրեմն՝ իմաստնաստեղ, անվախ, որովհետեւ կորսնցնելիք ոչինչ ունէին։ Եւ բնականաբար յուսահատելու պատճառ չունէին։ Ընդհակառակն՝ լաւատես էին ու խանդավառ (...) Անոնց երազը հրաշքներ կը գործէր, կը վերստեղծէր կեանքը ու քայլ առ քայլ կը մօտեցնէր գիրենք ճշմարտութեան։ Մինչդեռ դրամը հեռացուցած էր զիրենք նոյն ճշմարտութենէն, ճնշմացնելով էականը, մարդկայինը, որ ապրելու արժանապատուութիւն էր նախ եւ առաջ։

Այլ մարդոց հաւասար ճկտուելու նախանձախնդրութիւն։

Երկիր եւ հայրենիք ունենալու իրաւունք։

Եւ մանաւանդ՝ այդ իրաւունքը պաշտպանելու գիտակցութիւն։ Կամք։ Հաւատք։

Ի՞նչ կ'ընէր այս աշխարհի օտար եւ անհիւրընկալ փողոցներուն մէջ, ուր որդ մը եղած էր, որդ մը ճկտուած էր միշտ ու մնացած մինչեւ այսօր։ Որդ՝ հոգեբանութեամբ, իրաւունքներով եւ արժանապատուութեամբ» (էջ 526-527)։

Հաւանաբար վէպի գլխաւոր հերոսները չարչրկող հարցն է այս մէկը։ Մուշեղ՝ երիտասարդ սերունդին ներկայացուցիչը, իր կեանքը զոհած է այս ճամբուն վրայ։ Իսկ ազուն արեան զոհաբերութիւնն է, որ տարբեր անդրադարձումի կը մղէ հայրը։ Միւս կողմէ՝ ժագ Առաքելեան Ամերիկայի մէջ հասած է նոյն եզրակացութեան։

Սակայն, գեղարուեստական մտահոգութեամբ, կ'ուզենք կարդ մը կէտեր նշել այստեղ։

Անմեռանի վէպին հիմնական ընթացքը երկար խորհրդածութիւններով եւ զրոյցներով կը զարգանայ, որուն դիմաց երբեմն կը սկսինք խորհիլ, թէ ո՞ւր կ'աւարտի հրապարակախօսութիւնն ու զաղափարախօսական դիրը եւ ո՞ւր կը սկսի ստեղծագործութիւնը։ Հիմնականօրէն որոշ զաղափար մըն է, որ զարգացում կ'արձանագրէ միայն (հայկական զինեալ պայքարի գիտակցումը, այդ ալ որոշ չափով սկզբունքային մակարդակի վրայ), ոչ թէ տիպարներու զարգացման առընթեր։ Հաւանաբար միակ «զարգացում» արձանագրող անձնաւորութիւնը Մուշեղն է, գլխաւորաբար վէպի պատգամին բերումով։

Անկախ իրենց զրաղումներէն՝ նոյն տիպարին տարբեր դրսեւորումները կարելի է նկատել ժագ Առաքելեանն ու Գեղամ Տարօնեանը՝ իրենց պարզած մտածումներէն եւ խառնուածքային որոշ դիծերէն մեկնած։ Իսկ այս վերջինին ու Ալիսի յարաբերութեան պարագային, ինչ-

digitised by A.R.A.R.@

պէս անգամ մը ակնարկեցինք, պիտի կրկնենք կարապենցի հերոսին եւ անոր «կնկան» կապակցութեամբ ուղղուած հարցումը՝ ինչո՞ւ պատահական դրնդակի մը զոհ կ'երթայ այդ կինը (ինչպէս արկանի մը զոհ կ'երթայ Ադամի «կինը»)։ Ի՞նչ յարաբերութիւն կարելի պիտի ըլլար պատկերացնել, եթէ հեղինակը թոյլատրէր, որ Ալիս ապրի եւ, զարմանալիօրէն, այս եւ վերոյիշեալ երկի պարագային, մտաւորականի տիպարն է, որ չի կրնար կենդանի կամ գոյատեւող յարաբերութիւն մը իրականացնել...

Աճեմեանի վէպին պարագային կը կարծենք նաեւ, որ թ'ւ մատնանշուած հրապարակագրական-խորհրդածական գիծը, թ'ւ տիպարներուն հետ կապուած դժուարութիւնները՝ գլխաւորաբար ծընունդ կ'առնեն նշեալ փորձառութիւններու, կացութիւններու «մօտիկութենէն»։ Հաւանաբար հեղինակը տակաւին հարկ եղած առարկայական հեռաւորութիւնը չէ ստեղծած առեւեալ մթնոլորտին ու կացութիւններուն հետ, ինչ որ պատճառ պիտի դառնար, որ ընդհանուրի պատկերացումը աւելի բիւրեղանար, որոշ առօրեայ, տեղեկատուական բնոյթի մանրամասնութիւններ դուրս մնային եւ, երկար զրոյցներու կամ բացատրութիւններու փոխարէն՝ թելադրական կեցուածքներ ճշդուէին առաւելաբար։

Ամէն պարագայի, նման «հեռաւորութիւն» մը իրագործելու համար, ըստ երեւոյթին, թէ՛ լիբանանեան (լիբանանահայ) փորձառութիւնը եւ թէ հայկական դինեալ պայքարը որոշ ժամանակաշրջան մը պիտի սպասեն, իրենց ամբողջական տարողութեամբ բիւրեղանալու եւ դրսեւորուելու համար։

Սակայն հայկական բարդ իրականութեան պատկերացման փորձն իսկ, ինքնին, գաղութէ գաղութ իր այլազանութեամբ եւ բազմամակարդակ հարցադրումներով ու հակասութիւններով՝ կը մնայ խոստմնալից եւ խրախուսող։

ՑԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Գ.— ՆԱՄԱԿՆԵՐ՝

ՍԻՄՈՆ ՅԱԿՈԲԵԱՆԻՆ

34

1 Մայիսի. 1922, Վենետիկ.

Սիրելի՛ Սիմօն,

Ուղարկում եմ այս առակը № 6-ի համար «Արեգի». հայկական առակները մէկ-մէկ պիտի յանգի տակ դնեմ, ապատ ժամերիս: Շա՜տ զբաղած եմ, տեսնենք ի՞նչ նիւթեր պիտի հայթայթեմ քեզ:

Աչքդ պահէ, երբ հայ թերթերում քննադատականներ կը գտնես «Միերի» համար, ինձ գրիր, կարդամ, ես միայն «Ճակատամարտ» եմ կարդում, երբեմն-երբեմն «Երկիր», եւայլն եւայլն: Իսկ դու կարծեմ ամեն թերթ նայում ես:

Լսեցի՝ որ մտադիր ես եղել հոս գալու, լա՛ւ միտք է, անպատճա՛ռ եկ, շա՜տ խօսելիք ունիմ քեզի հետ զանազան հարցերի մասին, գրական եւ հասարակական: Կը գաս եւ մօտս կ'իջնես, տեղ ունինք:

Մի՞թէ դեռ չստացար «Persischer Divan», եթէ չը գտար, Բերլին գրեմ, գուցէ գտնեն:

Մօտդ կարծեմ 2 բան ունիմ, արդեօք յարմա՞ր չես համարում, թո՞յլ են, ի՞նչ է:

Բարեւներով եւ համբոյրներով
ԱՒԵՏԻՔ.

35

14 Մայիսի. 1922, Վենետիկ

Սիրելի Սիմօն,

Ընդհակառակ ստացայ 220 ֆր. կարմանում եմ, որ կարող ես վճարել: Լա՛ւ արիր, որ «Արեգը» շարունակում ես, գոնէ մի տարի լինի, էլի մի բան է մեր ողբալի իրականութեան մէջ: Ես նորէն քեզի բաներ կուղարկեմ, թէեւ, ճշմարիտն եմ ասում, շա՜տ զբաղած եմ. 1. մինչեւ մայիսի վերջը պիտի հասցնեմ արձակ հին գրուածքներիցս մի հատոր որ Կ. Պոլիս պիտի տպի, «Հայկաշէնը» գրավաճառ. 2. Պատրաստում եմ «Երգեր ու վէրքերիս» նոր հրատարակութիւն սրբագրած. եւ ընտրած. պիտի Ղուկասեանը հրատարակէ: 3. Զեռքիս տակ շա՜տ նիւթեր ունիմ, որ մէկ-մէկ գրում եմ, մշակում եմ... եւայլն, եւայլն:

Հարցնում ես թէ «Ուստայ Կարօս» մինչեւ տարւայ վերջը «Արեգի» մէջ դնելով կ'սպառուի՞. տօ, տունդ չքանդուի, որ խեղճ ես. «Ուստայ Կարօն» 1000

digitised by A.R.A.R.@

երեսանոց մի բան է, որ սեղմելով, սեղմելով, նորից 700-800 էջ է դուրս գալու. թերեւ մի-երկու գլուխ տամ նմուշի համար, ինչպէս ժամանակին տուել էի «Գեղարուեստին» Լեւոնեանի (1). «Ուստայ Կարօն» իր ողջ ծանրութեամբ նստել է վրաս, չեմ վերջնականապէս ապատուում, որ նիւրեմ ուրիշ գրութիւնների: Հայկական Ֆաուստ պիտի գրեմ, կառուցուածքը ունիմ, եւ նիւթը, իրերը, պատկերները, միջավայրը հայկական են. լեգենդայի (2), առասպելը հայկական է, եւ հետաքրքրական, բայց ես շա՜տ մեծ բովանդակութիւն եմ դրել, փիլիսոփայական-տիեզերական: Եւ ուրիշ շա՜տ բաներ ունիմ, մանր ու խոշոր, արձակ եւ չափով. յոյս ունիմ, որ այս տարի «Ուստայ Կարօյիս» վրայ վերջնական կնիքը դնեմ:

Գրում ես «Միերի» տարածման մասին. ինչո՞ւ ես ինձնից խորհուրդ հարցնում. վարի՛ր ինչպէս քեզ դուզում է. իսկ իբրեւ խորհուրդ հետեւեալները կը տամ 100 օրինակ ուղարկել Հայաստան: Վաճառելու համար 25-30% զեղչ (3) լաւ է. եւ Կ. Պոլիս մի գրավաճառ բաւ է. Պալենցը լուրջ եւ անունով տուն է, փող չի ուտէ. առայժմ կուղարկես մօտ 100 հատ, կամ 200 հատ. եթէ վաճառեց, նորից կ'ուղարկես. մի 300 հատ էլ Ամերիկա, (մի՞թէ շա՜տ ասացի). ուրեմն եղաւ 500 օրինակ. կամ 600:

Ինձ ուղարկել ես միայն 15 հատ (ոչ թէ 20), եթէ մի 5 հատ էլ ուղարկես, գէշ չի լինի: Մի 40 օրինակ էլ դու կը ցրես թերթերին եւ սրան-նրան, ում որ կուզես. մնացած 300 հատը կարելի է տարածել Բալկաններում, Բերլին, Փարիզ: Եթէ ամէն մի օրինակից մնայ 2 ֆրանկ, նոյնիսկ 1,50, դարձեալ լաւ է, կը նշանակէ 800 օրինակից 1600 ֆր. կամ 1200, ծախսերից դուրս գալուց յետոյ, կը մնայ բ. տպագրութեան համար բաւարար գումար. կուզեմ, որ շուտով սպառի, որ բ. տիպն անեմ, որ շա՜տ եւ շատ մշակել եմ, ամէն օր ուղղում եմ գրէթէ եւ ոչ մի տեղ չեմ փչացրել. պիտի տեսնես, որ համաձայնես. շա՜տ յաջող բան եղաւ. որ ապատ ժամանակ ունենամ, կ'արտագրեմ, կը դրկեմ քեզի, միայն լաւ կը լինէր, որ գայիր մօտս եւ խօսէինք:

Սրանք են իմ խորհուրդներս, բայց դու արա, ինչպէս ուզում ես, ի՞նչ քանակով ուզում ես, որկիր: Ժընեւ էլ որ դրկես, գէշ չի լինի, իսկ Բերլին ընկերներ շա՜տ ունենք, հէնց Զարեանը՝ կը տարածէ. շա՜տ հայեր կան հոն: Փարիզ Միսակը կ'օգնէ:

Ս. Վրացեանից մի նամակ ստացայ, որ հիացած խօսքերով գովում է «Միերը», եւ համարում է անտիբոլշեւիկ գործ, այն մտքով, թէ Միերը դեռ դուրս չի եկել. ինչպէս ուզում են, մեկնեն. երեւի, բոլշեւիկներն էլ իրենցը պիտի համարեն, սակայն «Միերի» պրոբլէմը յաւէրժական է, մինչեւ որ իսկապէս ապատագրւի մարդը մարդու կողմէն շահագործելուց (4).— ե՞րբ է գալու, ե՞րբ է Միերը դուրս գալու. ե՞րբ պիտի իրականանայ... ո՞վ գիտէ, ե՞րբ. ե՞րբ պիտի Ռամիկը ուզենայ. (ուզենալ-կամենալ փիլիսոփայական-հոգեբանական իմաստով ասած, այսինքն՝ կամքը բանականութիւնն է ինքնին, կամքը գիտակցութիւնն է, Կանտ, Հէգել, Սպենսէր, Լոկ, Ֆիխտէ, Վունդ... եւայլն):

Գրում ես, որ երբեմն աշխատակցեմ «Բանւորին» (5)... ծանր խնդիր ես դնում առջեւս. ունենալով մեծ համակրանք այդ հոսանքի հանդէպ, բայց դեռ չեմ կարող նաւերս այդել. քեզ գրեցի, որ Քրիստ. Զաւարեան, Ռոստոմ, Վռամ իրականութիւն են հոգուս մէջ. միշտ խօսում եմ հետները, երապիս մէջ տեսնում, չեմ կարող նրանց ստուերի, յիշատակի դէմ դուրս գալ. դեռ քաշ կուգամ, տեսնենք. ո՛չ դաշնակցութեան հետ կը գործեմ, ո՛չ էլ նրանց դէմ կը գործեմ. գուցէ մի օր այս ներքին պայքարս վերջանայ մէջս, բայց դեռ կայ այդ պայքարը. եւ բոլշեւիկներից էլ բաւարար գոհ չեմ — Կարս, Իգդիր, Նախջե-

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

ւան... վերքեր են հոգուս մէջ. Անին քանդում են թիւրքերը, իսկ Ռուսիան մի ցուրտ խօսք չի ասում թիւրքերին. ինձ թւում է, որ Լենինը Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի պէս թքում է մեզ վրայ, իբրեւ թոյլերի վրայ, եւ արիւնարբու Էնվեր-Ռէմալին է ընկերակցում... Ես հիասթափւած եմ. եւ վերջապէս Ռուսիայում այլեւս սօցիալիզմ չկայ, ամէն բան կայ, բայց ո՛չ սօցիալիզմ. ցաւում եմ, որ սա ցաւ պիտի պատճառէ քեզ. ի՞նչ անեմ, ինձ էլ շա՜տ մեծ ցաւ է. վիժեց բոլշեւիզմը...

Համբոյրներով քո ԱՒԵՏԻՔ.

---

(1) Գարեգին Լեւոնեան (1872-1947), գրականագէտ, արուեստաբան. Գոմիտաս Վարդապետի հետ 1908ին Թիֆլիսում հիմնադրել է «Գեղարուեստ» հանդէսը (1908-1921).

(2) Այսպէս է. — Ի՞նչը նկատի ունէր արդեօք «Հայկական Ֆառուստ» ասելով.

(3) Այսպէս, փոխ. չ:

(4) Վարդգէս Աւետիսեանին «Զմոռանամ հարեւանցի ասել, որ «Մամայ Մահը» (որ ի դէպ լաւ եմ մշակել) երբեք բոլշեւիկեան տենդենց չունի, այլ ընդհանուր սոցիալական դեմոկրատիկ. Բոլշեւիզմի հաւատքով Մահը գուրս է եկել. իսկ իմ ասածով.— դուրս է գալու. ի՞նչ, ի՞նչ կերպ. Ասուած գիտէ». Տե՛ս Նամակ 4, է...իմ վարիանտի Մահը, որը բոլշեւիկ է».

(5) «Բանուոր», հասարակական, քաղաքական եւ գրական նախ հոգեւոր, ապա յաջորդաբար, Նիւ Եորք, խմբ. Յիմէոն Նարինեան կամ Ս. Մնարեան կամ Մնար, որ 1925ին ներդաղթել է Սով. Հայաստան. Թերթը լոյս է տեսել 1922-1924 թթ., հայ բանուորական հուսակցութեան պաշտօնական թերթ.

36

31 Մայիսի [1922], Վենետիկ.

Սիրելի Սիմօն,

Ստացայ գրքերի կապոցը եւ նամակդ:

Ամա՜ն, շուտով վերջացրու «Միերի» վաճառման այդ ձեւը. շա՜տ յաջող է, 1000 կամ 1100 ֆր.. իսկո՛յն համաձայնիր. ապատւենք այդ գլխացաւից. հարկաւ մինչեւ սպառելը, II տիպը չեմ անի, բայց ժամանակ որոշւէր լաւ կը լինէր. ապա թէ ոչ կարող է, տարիներով ձեռքերս կապւել. ամէն միջոց գործ կը դնեմ, որ ուրիշները չշահագործեն վերատպելու:

Դրամը 7-800 ֆր. շա՜տ յարմար ժամանակի եղաւ. բժիշկի խորհրդով թէ ես, եւ թէ Վիգէնը ծովի եւ արեւի լոգանք պիտի ընդունենք, մի ամսով, որ արժէ 5-600 ֆրանկ. եւ մոլորել էի, թէ որտեղից ձեռք բերեմ, ո՛չ մի այլ աղբիւր չունիմ. Ղուկասեանին (1) չեմ կարող դիմել. շա՜տ դիմելը կարող է եղածին էլ վնասել. Տիգրան Զաւէնը (2) այստեղ էր, խոստացաւ, որ Կ. Պոլիս Շահվերդեանին տեսնէր, եւ մի գումար ի հաշիւ իմ կենսաթոշակին ձեռք բերէր (3). բայց յոյս չունիմ, սովի շրջան է դեռ... հիմա լուծւեց խնդիրը. շա՜տ եւ շա՜տ շնորհակալ եմ:

«Միերի» մէջ, մի սխալ կայ, էջ 24. տպած է՝ «Եօթնաղի լար, Քաշած մի վար». պիտի լինի «Քաշած ի վար». կարող էք մատիտով «մ» ջնջել:

Կ'աշխատեմ քեզ մի լաւ եւ մեծ բան հասցնել. մօտ օրերս երկու փոքր բան կը դրկեմ յուլիսի համար. իսկ օգոստոսի համար՝ ընդարձակը:

Նորից կը խնդրեմ, որ մի 10 օրով գաս, ճամբու ծախսդ դուրս կը գանք այդ 800 ֆր-ից. իսկ այստեղ մօտս կ'ապրես, տեղ կայ. թող հանդէսը մի 10

digitised by A.R.A.R.@

օրով էլ յետաձգի, վնաս չունի, ամառայ համարները ամէնուրեք նիհար են լոյս տեսնում: Գաս շա՜տ բան ունինք խօսելու — գրական եւ քաղաքական: Դե՛հ, քեզ տեսնեմ:

Բարեւներով եւ համբոյրներով
Քո ԱՒԵՏԻՔ.

Ս. Վրացեանին մի լաւ, խիստ նամակ գրեցի. եղածների մէջ լաւը նա է. ինչպէս եւ Ն. Աղբալեանը:

Նոյն

---

(1) Տե՛ս նամակ 33, ծան. 9:

(2) Ցիգրան Զաւէն (Զուգասզեան) (1874-1938), *մշակութային գործիչ եւ խմբագիր, 20ոկ վարչութեան անդամ եւ ապա փոխնախագահ Ֆրանսիայում. 1933ին նեղդաղթել է Սով. Հայաստան:*

(3) *Երեւի Հայաստանի կառավարութեան կողմից նշանակուած կենսաթոշակից: Դեռ նուէր Շահվերդեանը «Միջագետքի եւ ընդհանրապէս սիբիրաքահայութեան հայրենադարձութեան կազմակերպման Սովետական Հայաստանի լիազօր ներկայացուցչի էր Թուրքիայում» («Սովետական Հայաստան» հանդէս, Երեւան, 1982, թ. 10, էջ 16). Դրա անունը չկայ «Հայկական սովետական հանրագիտարան»ում:*

37

12 յունիսի. [19]22. Վենետիկ.

Սիմօն ջան,

Շնորհակալութեամբ ստացայ 500 ֆրանկը: Պէտք է ջանալ «Մհերը» սպառել, նոր տպագրութեան համար, որ անհամեմատ գերազանց է լինելու: Ցաւում եմ, որ զարդ պիտի չյաջողի, բայց համոզիչ չէ, ի՞նչ արգելք կարող է լինել. մանաւանդ որ մի կարճ ժամանակի համար է, շա՜տ կուզենայի, որ գայիր, շա՜տ խօսելիք ունիմ, մանաւանդ գրութիւններիս համար, սկսած եւ նոր: Գոնէ մշակած «Մհերը» կարդայինք միասին:

Սրա հետ ուղարկում եմ այս մանր բաները. չինականը լաւ բան է, մանաւանդ մտածել, որ մեզնից 2700 տարի առաջ է զգացած ու իրականացած: Յուլիսի թի մէջ երեւի կը հասնի:

«Արեգի» մէջ անակընկալ (!) էր Արսէն - Երկաթի (2) ինձի ձօնը. Մետերլինկէն շունչ կամ գոյն ունէր. լաւն է: Եւ Մանաւանդ շա՜տ լաւն էր օր. Սաթեանի պօէպին (3):

Արդեօք այջիդ ընկա՞ն քննադատութիւններ «Մհերի» մասին. ես չեմ պատահել. յայտնիր ինձ, եթէ հանդիպել ես:

Տիկին Սիրվարդը թարգմանել է Թակորից (4) մի ամբողջ գիրք, կարծեմ Պարտիպպանը, մօտ 150 էջ. արդեօք կարո՞ղ ես դա մաս-մաս տպել, յետոյ գիրք շինել, եւ ի՞նչ պայմաններ ունիս. նա համաձայն է ամէն պայմանների: Թարգմանում է եւ նրա մի ուրիշ գիրքը, եւ Ադա-Նեգրիի (5) նոր գրքոյկը, որ աշխատաւորական չէ, այլ սիրոյ եւ վշտի: Տիկինը գիտէ ֆրանսերէն, իտալերէն եւ անգլիերէն. հարապատ թարգմանութիւն է, բայց լեզուն հին է:

Մ. Ռափայէլեան դպրոցի տեսուչը իմ միջոցով խնդրում է քեզ, կարո՞ղ ես մի գերմանացի գտնել, որ գայ դպրոցս հսկիչի պաշտօնով, վերակացու, որ գերմաներէն խօսի աշակերտների հետ եւ դիսցիպլին (6) մտցնէ. կ'ուտէ,

digitised by A.R.A.R.@

կը խմէ եւ կը պառկի դպրոցում, տարեկան ստանալով բացի այդ վարձ 3-4000 լիր. իտալական. թերեւս հարց ու փորձով գտնես:

Սպասում եմ թէ քեզ եւ թէ նամակիդ:

Մենք լաւ ենք, համբոյրներով քո՝

ԱՒԵՏԻՔ.

(1) *Բնագրում այսպէս է, փոխառեալ անակնկալ:*

(2) Արսէն Երկաթ (Շամլեան), 1893–1969, *բանաստեղծ:*

(3) *Ֆրանս.* poésie, *բանաստեղծութիւն, ոտանաւոր:*

(4) Rabindranâth Tagore (1861–1941), *հնդիկ հռչակաւոր բանաստեղծ:*

(5) Ada Negri (1870–1945), *իտալացի բանաստեղծուհի, որի սիրբնական ժողովածուները յեղափոխական շունչ ունեն: Ա.ս. Իսահակեանը գուցէ նկատի ունէր 1921ին լոյս տեսած* «Stella mattutina» *ժողովածուն՝* «Առաւօտեան աստղ»:

(6) *Կարգապահութիւն:*

38

21 յունիսի. [1923] (1), Վենետիկ.

Սիմոն ջան,

Ուղարկում եմ «Արեգիդ» այս երկու ոտանաւորը. որոշէսպի բացակայ չլինեմ սիրելի Արեգից, որ անհուն կոհաբերութեամբ քշում է դեռ իմ սիրելի Սիմոնը:

Վերջերս ամբողջապէս կլանուած եմ նիւթերս (կիսատ) աւարտելու. դըժբախտ Յովհաննէսի մահը (1) առջեւս է. պիտի շտապել...

«Ուստայ Կարօն» լեւական մեծ փոփոխութեան եմ ենթարկում, հերոսների խօսակցութիւնը վերածելով արարատեան բարբառին (2), որովհետեւ ըմբռնում եմ, որ Թրքա-Հայաստանի ոչնչացումով մեր բարբառն է ապագայ ունեցողը, եւ պետականը, եւ միացնողը, ուր պիտի ձուլեն միւսները. պատմական իրերի ընթացքն այս է. անյեղլի օրէնք... եւ վերջապէս մի լեզու պիտի ունենանք մի ազգ դառնալու համար: Շա՞տ զբաղուած եմ. որով թերթերին այսուհետեւ բան չեմ տալու. միայն հատ ու կտոր, պատահական բաներ:

Ի՞նչ ես անում, ո՞վ կայ Բերլին (3). Հայաստանը մի՞թէ իրօք տնտեսապէս ոտքի է կանգնում. եւ մի՞թէ պիտի այդ անձուկ սահմանների մէջ խեղդուի. դու մօտ ես այդ շրջաններին (բոլշեւիկ) եւ որոշ բան կը գիտնաս, խոստովանի՛ր ինձ:

Կ'խնդրէի, եթէ կարդացել ես, եթէ չես պսեհելու, եթէ կարող ես, տեխնիկապէս (4), ուղարկիր ինձ Շամտանճեանի (5) «Հայ մտքին հարկը եղեռնին» — ասում են լաւ գործ է. ձեռքս չի անցել. վանքն էլ չունի:

Բարեւներ եւ համբոյրներ մեր բոլորից:

Քո ԱՒԵՏԻՔ.

(Շար. 8 եւ վերջ)

(1) *Այս նամակը հաւանաբար 1931ից է, քանի որ ակնարկում է Յովհ. Թումանեանի մահուանը, որ տեղի է ունեցել 1923 թ. Մարտի 26ին:*

(2) *Էջմիածնի շրջան: Այս բարբառի կամ արեւելահայերէնի ապագայ դերի մասին ասածները մասամբ միայն ընդունելի կարող են լինել:*

(3) *Սիմոն Յակոբեանը մի ժամանակ Վիեննայից տեղափոխուել էր Բեռլին:*

(4) *Նիւթապէս:*

(5) Միհայէլ Շամտանճեան (1874–1928), *ռուսերէն է լայպցիգում, հրապարակախօս, խմբագիր:*

digitised by A.R.A.R.@

ՀԱՅՐԵՆԻ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ

Գ. ԽԱՆՋԵԱՆԻ ՀԵՏ

● Սիրելի Խանջեան, եթէ նշմարիտ արուեստագէտներուն համար մեծ նշանակութիւն ունին իրենց ստեղծումներուն ազգային բովանդակութիւնն ու նկարագիրը, կը կարծեմ, այս մակարդակի գեղանկարիչները նոյն տարողութեամբ տագնապած են աւանդներու արդիականացման հարցով, որ եղած է իրենց հիմնական խնդիրներէն մէկը: Բոլոր ժամանակներուն ալ, աւանդները նոր շունչով եւ կշռոյթով թարմացնելու պահանջը եղած է արուեստները զարգացուցած հիմնական հարցերէն մէկը: Այս խնդիրը շեշտակիօրէն արծարծուեցաւ մանաւանդ մեր դարուն, եւ իւրաքանչիւր արուեստագէտ բերաւ ի՛ր պատասխանը, ի՛ր լուծումը:

— *Այդ խնդիրը, իսկապէս, բոլոր ժամանակներում էլ գրոսած է եղել արուեստագէտների առջեւ. բայց ինձ համար դա երբեք խնդիր չէ եղած, որովհետեւ, ինչպէս ես քիչ առաջ ասացի, եթէ արուեստագէտը նպատակ ունի եւ մտածում է նպատակը իրագործելու շուրջը՝ ձեւերը ինքնաստինքեան են ստեղծւում: Շատ աւելի վատ է, երբ արուեստագէտը ձեւ ունի եւ ուզում է այդ ձեւին մէջ տեղաւորել իր նպատակներից այս կամ այն, որովհետեւ խօսքը, իմաստը, բովանդակութիւնը, որի շուրջը դուք ուզում էք խօսել, անպայման պահւում են բառերը, որոնք արտայայտում են ձեր միտքը: Բայց երբ դուք չգիտէք, թէ ինչ է ձեր ցանկացածը, ինչ է ձեր ասելիքը, այն բառերը, որ պիտի օգտագործէք, մնում են սոսկ ձեւ, եւ ոչ՝ իմաստաւոր խօսք: Դրանից զատ ես պիտի ասեմ, որ տարօրինակ կերպով ինձ թւում է, որ աշխարհի եւ ո՛չ մի ժամանակներում, ո՛չ մի արուեստագէտ չի կարողացել մնալ այնքան յետ կամ գնալ այն տրաստիցիոն ճանապարհով, որ նրա ապրած ժամանակը չկարողանանք ճշդել եւ ասենք, որ, դիտէ՞ք, սա տասնութերորդ դարի նկարիչ էր, բայց այնպէս՝ ինչպէս տասնըհինգերորդ դարում: Այդպիսին չկայ: Նոյնիսկ նկարիչներ, որոնք իրենց համար էտալոն են ունեցել, ասենք՝ այս կամ այն անցեալի նկարչին, եւ ցանկացել են նո՛յնիսկ*

digitised by A.R.A.R.@

կուրօրէն ընդօրինակել նրան, այնուամենայնիւ, հետագայ ժամանակներում, տեսաբաններն ու մասնագէտները նրա գործերի մէջ տեսնում են հին ժամանակի դէմը, հին ժամանակի հետքը: Ես չեմ ուզում զբաղեցնել ձեր ժամանակը եւ օրինակներ բերել, բայց այդ այդպէս է: Եւ այսօր, երբ որ ոմանք ասում են՝ «էջ՛, ինչ կարիք կար, սրանից հարիւր կամ երկու հարիւր տարի առաջ էլ այսպէս էին նկարում, մենք հիմա պիտի այնպէս նկարենք, որ արդիական հնչի, որ այնպէս հնչի, այսպէս հնչի», եւ փորձում են ինչ-որ ձեւեր, սպառած ինչ-որ ընդօրինակումներ, մոռանալով, որ այդ ձեւերի յաջորդականութիւնը ա՛յնքան արագ-արագ փոփոխուեց, որոշ ձեւեր արդէն այնպէ՛ս մոռացուեցին եւ դեռ պիտի մոռացուեն, որ նրանք կը մնան արուեստի պատմութեան մէջ իբրեւ էքսպերիմենտներ, բայց ո՛չ իբրեւ արուեստի երեւոյթ կամ, յա՛տկապէս՝ ստեղծագործ խօսքի, մտքի երեւոյթ:

Հոս է պատճառը, որ ես յատուկ մտատանջութիւնների եւ շարշարանքների մէջ չեմ եղել երբեք՝ մտածելով, որ ահաւասիկ այս նկարը, որ ես ուզում եմ հիմա նկարել, որը իւրատիպ Մայր Հայաստան է կամ հայկական մատոնոնա, ի՞նչ ձեւերով պիտի նկարեմ: Ինձ ամէնից առաջ հետաքրքրում է, թէ ի՞նչ է լինելու ասելիքս այստեղ. եւ եթէ կարողանում եմ իմ էսքիզների, պրպտումների մէջ գտնել ասելիքս՝ ձեւը ինքնուին՝քեան ստացւում է:

● Համաձայն եմ, որ իւրաքանչիւր նոր բովանդակութիւն իրեն հետ կը բերէ ի՛ր ձեւը, ստեղծագործական ի՛ր լեզուն, եթէ կարելի է այսպէս ասել. որովհետեւ առանց բովանդակութեան՝ ձեւը իմաստ չունի, իսկ անբովանդակ եւ ինքնանպատակ ձեւը, եւելի ճիշդ բնութագրումով՝ ինքնանպատակ ձեւապաշտութիւնը ոչ մէկ նշանակութիւն կը ներկայացնէ, որքան ալ հետաքրքրական ըլլան գեղարուեստական այդ փնտտտումները: Բայց նաեւ պէտք չէ մոռնալ, որ գեղագիտական նոր բազմայն արտայայտութիւններում արմատները, ստեղծագործ զսպանակները երբեմն կարելի է գտնել մշակութային հին արմատներէ: Այս պարագան ալ նոյնքան ճշմարիտ է, որքան ձեր արտայայտած ճշմարտութիւնը: Եւ մերժումներէ, բայց մա՛նաւանդ ոչ-ամբողջական սահմանումներէ խուսափելու համար, կը կարծենք, հարցը պէտք է դիտել իր ամբողջութեան մէջ, ամբողջական ճշմարտութիւնը ընդգրկող տեսանկիւնէ մը:

Օրինակ, ձեր այս մօտեցումով՝ մենք հիմնովին կը մերժենք Արշիլ Կորքիի արուեստին հայկական յատկանիշները, երբ նորարարութիւնը կը քննադատենք: Բայց երբ կը սկսինք Արշիլ Կորքիի գործերը ուսումնասիրել, կը տեսնենք, որ իր բոլոր գոյները, գիծերը կամ թափանցիկութիւնը սերտօրէն առընչուած են հայկական մանրանկարչութեան հետ:

— Իրաւացի էք: Բայց տեսէք, դուք ասացիք գոյները, գծերը: Բայց արուեստի արժանիքը չափւում է ո՛չ միայն գոյնով, գծով, նիւթով, այլեւ՝ ողջ այդ բոլորի հաւաքածով: Եւ այս է պատճառը, որ Արշիլ Կորքուն երբ որ մենք դիտում ենք, ասում ենք, որ նրա ներկապնակը յիշեցնում է մեզ մեր մանրանկարչութեան գոյները: Բայց միայն այդքան, միա՛յն այդքան: Մէկ ուրիշին ասելով ասում ենք, որ նրա կոնտուրները կամ գիծը յիշեցնում են մեր այսինչ ճարտարապետութեան կամ, չգիտեմ, այսինչ արձանագործութեան գծերին: Բայց իսկական արուեստը դիտւում է ընդհանուր, երբ գոյնով, գծով, բծով, տրամադրութեամբ՝ նա հաւասար բարձրութեան վրայ է կանգնած: Այլապէս, նա լինում է ուղղակի մասնատու արուեստի, գործի ստեղծման միջոցների ծնունդ: Չէ՞ որ գոյնը միջոց է, գիծը միջոց է, քրտածքը միջոց է, նիւթը միջոց է, որպէսզի մենք արտայայտենք այս կամ այն տրամադրութիւնն ու բովանդակութիւնը: Եւ երբ որ այդ միջոցներից մէկն ու մէկը գերակշռող է, նա դառնում է ուշադրութեան կենտրոն, նա դառնում է որոշողը,

digitised by A.R.A.R.@

«Վառ դարուն»

եւ ասում ենք՝ ա՛ռ դոյնո՛վ գեղեցիկ է, նա գծո՛վ գեղեցիկ է, միւսը փակտուրայո՛վ գեղեցիկ է։ Բայց երբ որ մենք խօսում ենք կատարեալ արուեստի գործի մասին, Լէոնարդոյի, Միքելանճելոյի արուեստի շուրջ, մենք չենք խօսում գոյնի, գծի, բծի մասին. մենք ասում ենք Միքելանճելոյի «Ահեղ դատաստան»ը, նրա «Գաւիթը», Պոթիչելլիի «Գարուն»ը կամ նրա «Տիրամայրը»։ Եւ երբեք արդէն չենք մանրանում. հետագայում, երբ որ տեսաբանին պէտք է խօսելու, ասելու, նա ասում է. տեսէ՛ք, ինչպէս ներդաշնակ գոյներ է գտել, ներդաշնակ գծեր ունի, որոնք այսպէս են, այնպէս են, եւայլն, եւայլն...

Ուրեմն, ուզում եմ ասել, որ արդիականութիւնը փնտռել միայն չի կարելի նրանով, որ արդիականութիւնը մերժում է, պէտք է մերժել հնից եկած ինչ-որ գծեր, կամ, ընդհակառակն, պէտք է տեսնել գծեր, որոնք չկային հնում, այսօր, եւ կը լինեն վաղը։ Չէ՛, դա բոլոր ժամանակներում էլ եղել է. դեռ Ֆրանց Հանսի գործերի մէջ, մարդիկ տեսնում էին այսօրուայ, քսաներորդ դարի քրտուածքը, որ իր ժամանակի համար մեծ համարձակութիւն էր։ Չէ՛, երբ որ այդ փայլուն, հարթ մակերեսը, այդ նուրբ անցումները, ներքին շիթերը, վրձնի հարուածները բոլորը նկատելի են Ֆրանց Հանսի գործի մէջ։ Եւ կարծես, թէ իմպրեսիոնիստներից ինչ-որ մի բան արդէն ֆնտեղ կար. մինչդեռ, իմպրեսիոնիստները շատ աւելի յետոյ եկան։

Ուզում եմ ասել, ի հարկէ, այդ չէ, որ որոշում է արուեստի արժէքը եւ նրա գնահատականը։ Յետոյ, ես չգիտեմ ինչու, ոմանք կարծում են, որ պէտք է առհասարակ անցեալի ժառանգութիւնը մերժել՝ արդիական հնչելու կամ ժամանակակից կոչուելու համար։ Այդ էլ իմ կարծիքով ճիշդ չէ, բոլորովին։ Ես միայն մի բան պիտի խնդրէի, յատկապէս երաշխաւորեցի՛ց, ովքեր արուեստը շատ են սիրում եւ մօտ են կանգնած մա՛նաւանդ կերպարուեստին. փորձեցէք ահաւասիկ իմ կատաներից մէկն ու մէկը կամ ձեր ուզած նը-կարիչների մէկն ու մէկին, որին դուք համարում էք հնուց եկող եւ միայն ու միայն հնով տարուած ու հնով հիացած նկարչի, վերցրէք նրա ձեր ուզած գործը

«Իրենկա»

ծը, տարէք Թանգարան եւ դրէք ձեր ուղածդ հին նկարչի գործի կողքին. դուք կը տեսնէք, որ տարբերի եւ ձորերի տարբերութիւն կայ, որ բացարձակ ո՛չ մի նմանութիւն չկայ եւ մեր մտապատկերում է, որ այս քառուածքը դալիս է հնուց, որ այս ներկի նման օգտագործումը դալիս է հնուց, որ այս երանգները դալիս են հնուց. ո՛չ, դրէ՛ք իրար քով եւ կը տեսնէք, որ նրանք բնաւ իրար նման չեն։

● Ըստ երեւոյթին, թիւրիմացութեան մը առիթ տուին, որովհետեւ մենք երբեմ այդպէս ըսել չուզեցինք, լաւ գիտնալով հանդերձ, որ կան անցեալի ծանօթ գործերու ծանր ազդեցութեան տակ խեղդուած աւանդապաշտ կամ արհեստագործ նկարիչներ։ Բայց գիտենք նաեւ, որ նրման ամբաստանութիւն մը կարելի չէ կատարել մա՛նաւանդ ձեր հասցէին, որովհետեւ դասական նկարչութեան աւանդներն ու ակադեմական հնարքները լաւագոյնս անհատականացուցած, հայ ժամանակակից գեղանկարչութեան պատմութեան մէջ իր ինքնուրոյն դպրոցը հիմնած արուեստագէտն էք դուք։ Պարզապէս կ'ուզէինք ըսել, որ կորքին կրցած է ամբողջ ժառանգութիւն մը օգտագործել եւ...

— *Մէկ մասը ժառանգութեան, մէկ մասը։ Որովհետեւ երբ որ մենք նայում ենք մեր միւս նկարիչներին, տեսնում ենք, որ նրանք ամուր կառչած են եւ օգտուում են մեր անցեալի ժառանգութիւնից։ Եւ անցեալի ժառանգութեան վրայ կարողանում են դնել նո՛ր հեւք, նո՛ր հընչիւն, նո՛ր պայծառութիւն են տալիս։ Եւ մի բոպէ պատկերացրէք, որ մենք դա չկարողանայինք անել եւ, ասենք, թէ արդիական երաժշտութեան կամ նկարչութեան նման՝ մենք միայն եւ միայն ձեւերով տարուէինք, եւ միայն եւ միայն փորձէինք գոյնով կամ գծով, կամ բծով, կամ ինչ-որ իրերով արտայայտել...։ Շատ տխուր ժամանակներ պիտի լինէին դրանք։*

Պատկերացրէք, որ ես տեսել եմ վերացական արուեստի միջազգային մի շարք ցուցահանդէսներ, երբ որ վերացական արուեստը համարւում էր աշխարհի ամենանորագոյն եւ ամենակատարեալ ու արդիականը, որ մե՛ծ ապագայ էին նրան խոստանում, չնայած այդ ապագան շատ շուտ կորուեց, երբ կինետիկ արուեստը, շատ ուրիշ-ուրիշ արուեստներ եկան եւ ծածկեցին վերացական արուեստին։ Մի բոպէ պատկերացրէք, որ այդպիսին լինէր, աշխարհը շատ տխուր պիտի լինէր։ Ինձ համար հետաքրքիր չէր լինի նոր արուեստը տեսնելու համար դընալ Փարիզ կամ Իտալիա, գնալ Ամերիկա կամ Հոլանդա, որովհետեւ չա՛տ իրար նման պիտի լինէինք, չա՛տ միատեսակ պիտի լինէինք, որովհետեւ հիմքում ընկած պիտի լինէր ձեւը եւ ո՛չ թէ բովանդակութիւնը, ո՛չ թէ էութիւնը։ Մի բոպէ պատկերացրէք, եթէ մենք չունենայինք Արամ Խաչատրեան եւ չունենայինք Մարտիրոս Սարեան։ Եթէ ասենք, թէ արդիական մեր նկարչութեան մի որիցէ ներկայացուցչի գործը վերցնէինք եւ տա-

digitised by A.R.A.R.@

Նէ՛ինք, դնէ՛ինք Փարիզում՝ փարիզեցին ի՞նչ գաղափար պիտի կազմէր մեր ազգի, նրա պատմութեան, նրա էութեան, նրա նկարագրի, նրա դէմքի մասին. էն դէպքում ինքը պիտի ասէր. «Այո՞, սրա նըման բան մը մենք էլ ունենք էստեղ, մեր այսինչն էլ այսպէս է նկարում, մեր այնինչն էլ այս է օգտագործում»։ Մինչդեռ, Արամ Խաչատրեանի երաժշտութիւնը երբ որ կատարուում է, ո՞վ չի ոգեւորուում, ո՞ւմ դէմքին ժպիտ չի գալիս, ո՛վ չի ուզում էդ ռիթմի հետ շարժուել. եւ դա հայկական է, դա հայերէն է եւ հետաքրքիր է դրանով, որ դա հայերէ՛ն է, մեր էութի՛ւնն է, մեր պատմութի՛ւնն է, մե՛ր խօսքն է...

*

● Ամբողջովին խոմածայն նոթ ձեզի հետ։ Գանի մեր զրոյցը կեդրոնացաւ հայ գեղանկարչութեան ազգային ուրոյն դիմագիծի զարգացման հրատապ հարցին վրայ, կը կարծենք, հետաքրքրական պիտի ըլլար լսել ձեզ՝ ձեր դատումներուն եւ մտահոգութիւններուն ասելի մանրամասնօրէն ծանօթանալու համար։ Սփիւռքահայ եւ հայրենի գեղանկարչութեան ներկայիս եւ հարցերուն գնահատումը կատարելով, իբրեւ հայ գեղանկարչութեան այս երկու թեւերու հոլովոյթին մասին ծանօթ եւ մեր կերպարուստին վրայ իր երախտաշատ դերը դրած եզակի արուեստագէտ՝ ի՞նչ զոյներով ձեզի կը ներկայացնայ հայ գեղանկարչութեան ապագան, ի՞նչ նոր խոստումներ կը ծլին ձեր աչքին առջեւ։

— *Այստեղ, ես անչուշտ որոշ մեղմացուցիչ հանգամանքներ պիտի առաջին պլան բերեմ։ Գիտէք, Սփիւռքի մասին խօսելիս, ճիշդ է, երբեմն շատ հիւանդագին վերաբերմունք ենք ցուցաբերում, ուզում ենք ամէն բան այնտեղ տեսնել հայերէն, ամէն բանի մէջ առաջին պլանը լինի մեր ժողովրդի էութիւնը, մեր ազգայինը, բայց բոլոր դէպքերում օտարութեան մէջ ապրող հայերի համար շատ դժուար խնդիրներ կան։ Ամէնից առաջ՝ օտարութեան մէջ ուշադրութիւն դրաւել,*

Վանդակաւոր շարքեր

լինել առաջին շարքերում, ունենալ հրոյակ, ինչպէս նաեւ՝ ապրուստի միջոցներ։ Սրանք դժուար խնդիրներ են։ Եւ եթէ ասենք, թէ մի որիցէ նկարիչ միայն եւ միայն իրեն նուիրէ մեր ազգի էութիւնը, նրա խմաստը երգելուն, եւ բացարձակ հաշուի չնստի տուեալ երկրի մէջ տեղի ունեցող երեւոյթների հետ՝ ե՛ւ արուեստի, ե՛ւ քաղաքական, ե՛ւ սոցիալական, կարող է շատ դժուար վիճակի մէջ ընկնել. նա կարող է ուղղակի մեկուսանալ եւ դառնալ մի արուեստագէտ, որը կարող է հետաքրքրութեան առարկայ լինել միա՛յն իր ազգակիցների եւ, ասենք, մեծ կամ փոքր խմբերի մէջ։

Այդպէս դորձել եւ ապրել՝ դա բաւականի դժուար իրավիճակ է։

Ուստի՝ երբ որ ես տեսնում եմ հայածնունդ արուեստագէտների, որոնք ակտիւօրէն մասնակցում են տուեալ երկրի եւ նրանում տեղի ունեցող երեւոյթներին, ես չեմ վրդովւում։ Ընդհակառակն, ես միայն փնտռում եմ՝ տեսնելու համար, թէ որքանով է նա կարողանում այդ ճակատամարտում յաղթանակներ տանել եւ արտեղ է, որ նա պարտւում է։ Եւ երբ, ասենք, թէ ինձ ցոյց են տալիս մի հե-

digitised by A.R.A.R.@

տաքրքիր հայ արուեստագէտի, որը բը-նաւ իր արուեստով հայ չէ, բայց ունի արդէն ձիրք, ճանաչում, վաստակ այդ երկրում՝ ես ուրախանում եմ, ուրախանում եմ իբրեւ մի մարդու, որ կարող է ասել, ահաւասիկ, հայածնունդ մի արուեստագէտ, որ իր լուսան է բերում ո՛չ թէ սոսկ իր ազգին միայն, այլ նաեւ կարողանում է իր գործը խառնել այդ ժողովրդի կեանքին կամ համընդհանուր արուեստի, քաղաքականութեան, սոցիալական ինդիրներին: Եւ դա հետաքրքիր է:

Բայց անշուշտ ես շատ աւելի յուզւում եւ ուրախանում եմ, երբ տեսնում եմ, որ նոյնիսկ օտարութեան մէջ, պոետ մը, գրող մը, նկարիչ մը, կիսոռեժիսոր մը, դերասան մը կարողանում է ճանաչուել, անուն եւ վաստակ ձեռք բերել նաեւ իր ա՛յն արուեստով, որը հայկական է, հայութեանն է նուիրուած, նորից նրա բախտին, ներկային եւ ապագային: Դա ինձ այնչափ ուրախացնում է: Օրինակ, այնպիսի մի արուեստագէտ, ինչպիսին Ժանսէմն է, ես շատ հաւանում եմ եւ սիրում. Ժանսէմի շօշափած թեմաները ինձ շատ հոգեհարազատ են, լինի դա հայկական, լինի դա խպանական կեանքից. նրանք շատ գրաւում են ինձ, յուզում են, եւ ես ուրախ եմ, որ Ֆրանսիայում ապրելով հանդերձ, կարողանում է իր արուեստը արժէքաւորել տալ, ճանաչել տալ՝ ունենալով մէջը հայկական թեմաներ, խպանական թեմաներ, ֆրանսիական թեմաներ, որոնք հետաքրքրում են ո՛չ միայն ֆրանսիացիներին, այլեւ՝ ճապոնացիներին, իտալացիներին, Մէջին Արեւելքի ժողովուրդներին, եւայլն, եւայլն: Ինձ դա շատ ուրախացնում է:

Երբ որ ես կարդում եմ մի պոետի, որը շօշափում է նաեւ հայկական թեմաներ, բայց այդ ամէնը կարողանում է դարձնել նաեւ օտարազգի սեփականութիւնը, մի վէպ, որը գրում է հայերէն կամ այնպէս՝ ինչպէս ասենք Ուիլեամ Սարոյեանը, որը գրում է անգլերէն, կամ ինչպէս ինքն ասում է՝ «Ոգիս հայկական է»: Այս առումով ես այն կարծիքին եմ, որ եթէ կայ մի արուեստագէտ, որը իր ողջ էութեամբ նուիրուել է եւ միայն ու միայն ուզում է տեսնել իր ազգային խնդիրները, նրա տեղը հայրենիքն է: Նա անպայման պիտի գայ, եթէ ո՛չ մշտապէս ապրելու, բայց ամէն տարի մէկ անգամ պիտի գայ հայրենիք եւ պիտի դընայ, որպէսզի կարողանայ կապել Սփիւռքի եւ Հայաստանի ժողովրդի ցանկութիւնը, նրա երազանքները միմեանց, եւ կարողանայ է՛նտեղ էլ հաղորդել ինչ-որ մի կրա՛կ, ոգի՛, է՛ստեղ էլ ոգեւորրել եւ տալ մի կրա՛կ եւ ոգի՛, որ խիստ անհրաժեշտ է, առանց որի հնարաւոր չէ: Որովհետեւ իսկական արուեստագէտը, ճշմարիտ արուեստագէտը ուրիշ կերպ լինել չի կարող եւ չպէտք է, որ լինի: Եւ, ի հարկէ, ես շատ բարձր ու քանկ եմ դնում այն գործը, որ կատարում են մեր արուեստագէտները Սփիւռքում, յա՛տկապէս հայապահպանութեան գործում, որը, երբեմն, մենք նոյնիսկ ի վիճակի չենք այդքան օգտակար լինելու, այդքան հասնելու, ինչքան տեղում ապրող մեր հայ արուեստագէտները կարողանում են անմիջապէս արձագանգել երեւոյթներին եւ օգնել, ուրեմն, հայապահպանման մեծ ու դժուարին գործին: Ես ուրախանում եմ, որ մեր արուեստագէտները, ում որ ես կարողացել եմ ճանաչել, տեսնել նրանց արուեստը հանդամանօրէն, մանրամասն, նրա՛նց՝ ում ես արդէն ճանաչում եմ իբրեւ մի արուեստագէտի, նրանք կանգնած են այնպիսի՛ մի մակարդակի վրայ, որ պատիւ է բերում իրենց, որ դա ո՛չ թէ սիրողական, ո՛չ թէ ամաթէօրների մի վիճակ է, որ ուրիշ բան հնար չունի անելու, այլ դրանք իսկապէս արուեստագէտներ են, որոնց արուեստը արժէք է, որոնք այնտեղ արդէն ընդունուած են, գտնուում են, ցուցադրուում են. բայց ես ա՛յն կարծիքին եմ, որ վերջ ի վերջոյ նրանց թողած ժառանգութեան իսկակա՛ն գնահատողները, իսկակա՛ն արժէքաւորողները եւ իսկակա՛ն պահպանողները լինելու է հայրենիքը եւ հայրենի ժողովուրդը:

Դրա օրինակները մենք ունենք: Ա-

digitised by A.R.A.R.@

սենք՝ Երուանդ Փոչարի կամ Յակոբ Կիւրջեանի նման հետաքրքիր քանդակագործը, որ երկար տարիներ գործեց Ֆրանսիայում եւ ոչ-պակաս յաջողութեամբ եւ շատ հետաքրքիր արուեստագէտ էր, այնուամենայնիւ, նրա արժէքը, ա բերած լուման ճանաչւում է, գնահատւում է մեզ մօտ, մեր հայրենի ժողովրդի մօտ։

● Հայրենի ժամանակակից կերպարուեստի մէջ իրենց յատակ եւ ինքնուրոյն դէմքը արդէն հաստատած գեղանկարիչներու կողքին, կայ նաեւ նոր սերունդ մը, որ կը յատկանշուի նոր արտայայտչամիջոցներ որոնողի յանդգնութեամբ։ Իրենց լինելութեան շրջանը ապրող այս նորագոյն գեղանկարիչներուն մէջ, ըստ ձեզի, ո՞վ է ամէնէն աւելի հայկական դիմագիծ ունեցող խոստմնալից անունը, միտի պահուելու արժանի արուեստագէտը։

— Ես չգիտեմ, ճիշդն ասած, հասակային կարգով որը պիտի նոր սերունդ համարենք։ Նրա՞նք՝ ովքեր գալիս են իմ ուերնդակիցներից յետոյ։ Ինձ համար նրանք բոլորն էլ նոր են, մեծ մասամբ։ Կան նաեւ նոր կամ երիտասարդ արուեստագէտներ, որոնք վերջին տասն տարիների ընթացքում են ասպարէզ իջել եւ ակտիւօրէն մասնակցում են մեր մշակութային եւ հասարակական կեանքին։ Ես թաքցնելու ոչինչ չունեմ, ինչպէս նաեւ վախենալու ոչինչ չունեմ. անկեղծօրէն պիտի ասեմ ձեզ, որ դէպքեր են լինում, երբ հիասթափութեան այսպէս տրամադրութիւն է իմ մօտ առաջ գալիս։ Ես կարծում եմ, որ ա՛յն սերունդը, որ եկել է մեզնից յետոյ, պէտք է չա՛տ աւելի ուժեղ, չա՛տ աւելի բարձր մակարդակով, չա՛տ աւելի համարձակ խօսքերով մեր մշակոյթը առաջ մղէր։ Եւ ինչպէս մենք խօսեցինք՝ իմաստաւորուա՛ծ արուեստով, բովանդակալի՛ց արուեստով։ Եւ ես շատ ափսոսում եմ, որ այդ սերնդի ներկայացուցիչների մեծ մասը մի քիչ չափից աւելի տարուեցին ձեւական արուեստով, այսինքն՝ արդիական կոչուելու արուեստով եւ իրենց խնդիրները արհեստականօրէն թեթեւացրին, հեշտացրին։ Այսինքն՝ նրանց համար մի փոքրիկ ծաղկամանը՝ ծաղիկներով, մի փոքրիկ պորտրետը՝ այս կամ այն աղջկայ, մի փոքրիկ բնանկարը երբեմն լրիւ բաւարարում են իրենց. մինչդեռ, ես այն կարծիքին եմ, որ նրանք պիտի ձեռք նեռէին բազմաճիւղ կոմպոզիցիաների, մունեմենտալ ստեղծագործութիւնների, այնպիսի՛ գործերի, որոնց մասշտապը շատ աւելի մեծ է, քան թէ մենք մեր ժամանակին ունէինք հնարաւորութիւն՝ գրաւելու կամ ստեղծելու այսպիսի մեծածաւալ գործեր։

Իտալական շարքէն՝ «Ճաւերժները»

Բայց ես կարծում եմ, որ դա ունի ժամանակաւոր բնոյթ, ոչ շատ երկար, որովհետեւ ես չեմ կարծում, որ կը գայ մի ժամանակ, երբ որ արուեստագէտների խնդիրները չա՛տ կը փոքրիկեան, կը

digitised by A.R.A.R.@

մանատուեն եւ նրանք կը գան-կը հատնեն այնպիսի՛ մի իրավիճակի, որ այլեւս նոյնիսկ ցանկութիւն չեն ունենայ ստեղծագործելու, աշխատելու։ Չէ՛, ընդհակառակն, ես գտնում եմ, որ խնդիրները շատ աւելի բարդանալու են, շատ աւելի պիտի ծանրանան, եւ այդ երիտասարդները այսօր մի մեծ սխալ են կատարում։ Նրանք կորցնում են ժամանակ. ժամանա՛կ՝ որը գործի մէջ պէտք է իրենց բերէր նաեւ վարպետութիւն, որովհետեւ առանց այդ վարպետութեան՝ մեծ խնդիրներ հնարաւոր չէ լուծել. որովհետեւ ամենահանճարեղ վարպետներն անգամ ամենաչատ ջանք ու քրտինք թափել են իրենց վարպետութեան վրայ, թէ ի՞նչ վարպետութեան ատաստանով նրանք կարող են այդ խոշոր եւ հետաքրքիր մրցքերը տեղ հասցնել։ Մենք դիտենք արուեստի պատմութիւնից, թէ Վանկոգը եւ մեր արուեստագէտները ի՞նչ հոգեվիճակների մէջ են եղել, երբ նրանք տեսել են մի վարպետ կատարողի, որի վարպետութեանը դեռ իրենք չեն հասել իրենց կատարումով։

(Շար. 2 եւ վերջ)

Այս իմաստով՝ մեր երիտասարդները — նորից եմ կրկնում — հիմա ժամանակ են կորցնում։ Բայց դրա հետ մէկտեղ՝ ես ուրախութեամբ պիտի ասեմ, որ Հայաստանում կան երիտասարդ վարպետներ, որոնք արդէն ստեղծագործել են եւ ստեղծում են այնպիսի՛ գործեր, որոնք խօսում են այն մասին, որ նրանք կարող են ապագայում հետաքրքիր ժառանգութիւն թողնել։ Ճա՛կատագրէս քանդակագործութեան մէջ ունենք մի շարք հետաքրքիր երիտասարդ արուեստագէտներ։ Ես հիմա նրանց անունները չեմ ուզում տալ, որովհետեւ դրանք բոլորն էլ, իմ կարծիքով, լինելութեան ճանապարհի վրայ են. եւ կախուած է նրանցից, թէ ո՛վ որքանով իրեն կը նուիրի արուեստին. լաւվի՞ն, թէ մասամբ, ո՞ղջ էութեամբ, թէ ինչ-որ մի փոքրիկ չափով։

Ա՛յս է պահանջում արուեստը նրանցից, — ամբողջակա՛ն նուիրում։ Եւ այդ երիտասարդները սխալուելու իրաւունք չունեն։

Հարցազրոյցը վարեց՝

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Նվիրներ

ՄԱՔՐԱՋՐՈՒՄՆԵՐ

«...ՀԻՆ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՅ»-Բ.

> «Հագքնի Ցուլիսի թիւին մէջ, կարճ ցշմարի մը կազմին՝ մատնանշած էինք Վահան Թոքուվնցի «Կեանքը հին հռովմէական ճանապարհի վրայ» գործին տարբեր էջերուն նոր ցշմարտուած նիւթը, տալով նոյն տեղն երեւանեան տնօր երեք հրատարակութիւններին յարգուած որոշ հատուածներ:
>
> Ետքեւ՝ մանրացրուած պարբերութիւնները, բոլորն ալ անհարկի, հետեւանքի՝ ընդհանրապէս տիրացուական մոլեռնութեան:
>
> Կրկին յիշեցնեմ, որ հաշուի առնուած է երեւանեան երեք հրատարակութիւններէն առաջինը («Երկիր», 1957), որուն ուղղակի պատճէններն են յետոյդ երկուքը...
>
> Ցաւոքով կը ձերկայացնեմ Հրայ Զարգարեանի «Մեր կեանքը», որ երեւանի հրատարակիչներուն ձեռքին տակ տալի թախտաւոր չէ եղած, քանի հին հռովմէական ճանապարհներուն վրայ ապրած Թոքուվնցի «Կեանքը»:

Հայրս պահանջում էր, որ մայրս դառնայ խանում, նստի դահլիճի վերի կողմը, տիկնոջերի պէս ուռած բարձերով շրջապատուած:

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 19)

Հայրս պահանջում էր, որ մայրս դառնայ խանում, նստի դահլիճի վերեւի կողմը, բարձերով շրջապատուած:

(*Երեւանեան հրատարակութիւն*, էջ 21)

Երկու կանայք լաց էին լինում մի տղամարդու համար, այն տղամարդու, որ այդ երկու կնոջ հոգին էլ լցրել էր սարսուռով, ծծել էր երկուքի շրթերից էլ սիրոյ արիւնը:

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 21)

Երկու կանայք լաց էին լինում մի տղամարդու համար, այն տղամարդու, որ այդ երկու կնոջ հոգին էլ լցրել էր սարսուռով եւ սիրով:

(*Երեւանեան հրատարակութիւն*, էջ 22)

digitised by A.R.A.R.@

Նա մի կին էր, որ երբեք չէր սիրել։

Նրա արտայայտությունը նման էր այն էգ կատուին, որ Մայիսն առանց արու կատուի անցկացնելուց յետոյ, ման էր գալիս կտուրներն ու տան անկիւնները քաղցած վագրի հայեացքով, փալփլուն աչքերով եւ ամէն մի առիթից պատրաստ փշտացնելու եւ ցցելու ականները։

Հօրաքոյրս *անց էր կացրել ոչ թէ մի Մայիս այլ 65 Մայիս առանց* արուի, *եւ ման էր գալիս մեր տանը եւ փողոցներում դառնացած, օրերի, իրերի եւ մարդկանց դէմ չարացած։*

Պարտուած այս էգը թշնամի էր ընտանեկան խաղաղութեան։

Մարմնի բոլոր մասերը նշում էին դառնութիւն։

— *Ինչպէ՞ս է, մայրիկ, որ...*

(*Պէյրութի հրատարակութիւն*, *էջ* 34)

Նա մի կին էր, որ երբեք չէր սիրել եւ այդպէս անց էր կացրել ոչ թէ մէկ, այլ 65 Մայիս առանց ամուսնու։

Նա ման էր գալիս մեր տանը եւ փողոցներում, դառնացած, օրերի, իրերի եւ մարդկանց դէմ չարացած։

Պարտուած այս կինը թշնամի էր ընտանեկան խաղաղութեան։

Նա ձմեռները կազ էր, ամառները՝ առոյգ։

— Ինչպէ՞ս է, մայրիկ, որ...

(*Երեւանեան հրատարակութիւն*, *էջ* 33)

Վերջին ճիգով հօրաքոյրս նետեց աթոռը, ճեղքեց Օղաբերի ծծերից մէկը *եւ ինքն էլ ուշաթափուեց։*

(*Պէյրութի հրատարակութիւն*, *էջ* 40)

Վերջին ճիգով հօրաքոյրս նետեց աթոռը Օղաբերի վրայ եւ ինքն էլ ուշաթափուեց։

(*Երեւանեան հրատարակութիւն*, *էջ* 38)

Ցակոբի ընկերները, նրա հասակակիցներն էլ տանը չէին մնում, նը-բանց մէջ զարթնել էր արուն...

(*Պէյրութի հրատարակութիւն*, *էջ* 52)

Ցակոբի ընկերները, նրա հասակակիցներն էլ տանը չէին մնում, նը-բանց մէջ զարթնել էր տղամարդը...

(*Երեւանեան հրատարակութիւն*, *էջ* 48)

digitised by A.R.A.R.@

...Ոմանք նշանուած էին, ոմանք էլ արդէն վաղուց խայտառակուած ապօրինի կենակցութիւնների համար, *մի քանիսը բռնուեցին Մարիցայի տանը...*

(*Գէյրութի հրատարակութիւն*, *էջ* 53)

...Ոմանք նշանուած էին, մի քանիսը բռնուեցին Մարիցայի տանը...

(*Երևանեան հրատարակութիւն*, *էջ* 48)

— Թող ըլլի, դու տասներեք տարեկան էիր ծոցս մտար, — պատասխանեց հայրս։

(*Գէյրութի հրատարակութիւն*, *էջ* 61)

— Թող ըլլի, դուն տասներեք տարեկան էիր, — պատասխանեց հայրս։

(*Երևանեան հրատարակութիւն*, *էջ* 57)

...Եւ վսեմ զայրոյթը փոխուում էր նսեմ տափակութեան։

(*Գէյրութի հրատարակութիւն*, *էջ* 63)

...Եւ նսեմ զայրոյթը փոխուում էր վսեմ հանգստութեան։

(*Երևանեան հրատարակութիւն*, *էջ* 58)

Մի օր՝ միլիոններ, միւս օր՝ սենտերի կարօտ, բայց խելայեղօրէն տոնական...

(*Գէյրութի հրատարակութիւն*, *էջ* 65)

Մի օր՝ միլիոններ, միւս օր՝ սենտերի կարօտ, բայց խելայեղօրէն տոնական...

(*Երևանեան հրատարակութիւն*, *էջ* 60)

Նախ եւ առաջ բոլորի պոչերը կտրել էի, երբ նրանք տակաւին կախ էին ընկնում իրենց մօր ծծերից։ Կտրում էի նրանց պոչերը, *այդպէս նրանք աւելի գողտրիկ եւ...*

(*Գէյրութի հրատարակութիւն*, *էջ* 81)

Նախ եւ առաջ բոլորի պոչերը կտրել էի. այդպէս նրանք աւելի գողտրիկ եւ...

(*Երևանեան հրատարակութիւն*, *էջ* 73)

digitised by A.R.A.R.@

Բայց նա մեծացաւ, հասակ առաւ, սկսեց զգալ էգի կրակը։

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 87)

Նա մեծացաւ, հասակ առաւ, սկսեց զգալ սիրոյ կրակը։

(*Երեւանեան հրատարակութիւն*, էջ 79)

— Վա՜յ էշի՛ գլուխ, չկրցաւ սապը ընել, ծօ ի՞նչ ես գուրս եկեր, մո՛ւտ կնկանդ ծոցը, — ասում էին շատերը։

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 101)

— Վա՛յ էշի գլուխ, չկրցաւ սապը ընել, ծօ ի՞նչ ես դուրս եկեր, — ասում էին շատերը։

(*Երեւանեան հրատարակութիւն*, էջ 91)

— *Նշան աղան սեփէթով* բոզ *կը տանէ՞...*

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 104)

— Նշան աղան սեփէթով կնիկ կը տանէ՞...

(*Երեւանեան հրատարակութիւն*, էջ 94)

— *Վա՜յ, խայտառակ հէրիֆ,* բոզը *սեփէթին մէջ է դրեր...*

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 104)

— Վա՜յ, խայտառակ հէրիֆ, կնիկը սեփէթին մէջ է դրեր...

(*Երեւանեան հրատարակութիւն*, էջ 94)

Նշան աղան փախչում է. բազմութիւնը հետեւից աղաղակում.
— *Սեփէթով* բոզ *կը տանէր, բռնեցի՛ն...*

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 105)

— Սեփէթով կնիկ կը տանէր, բռնեցի՛ն...

(*Երեւանեան հրատարակութիւն*, էջ 94)

digitised by A.R.A.R.@

...Նայում են մեր քաղաքի լուսամուտներին, կտուրներին, տղամարդկանց, կանանց, ընկողմանած գոյնզգոյն, վառող գոյներով փոքրիկ, ստինքների պես ուռած բարձիկներին։

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 107)

...Նայում են մեր քաղաքի լուսամուտներին, կտուրներին, տղամարդկանց, կանանց, ընկողմանած գոյնզգոյն, վառող գոյներով փոքրիկ բարձիկներին։

(*Երեւանեան հրատարակութիւն*, էջ 96)

Մայրս հանգստանում *էր, քանի որ մահ չկար, միայն մահն էր, որ մօրս մտահոգութիւն էր պատճառում։*

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 112)

Մայրս անհանգստանում էր, քանի որ մահ կար, միայն մահն էր, որ մօրս մտահոգութիւն էր պատճառում։

(*Երեւանեան հրատարակութիւն*, էջ 101)

Կանգ էր առնում իւրաքանչիւր անցորդի առաջ, անճառնի եւ դիւային ծիծաղում եւ փէշերն ուելի վեր քաշելով՝ ցինիկօրէն ցոյց էր տալիս...

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 119)

Կանգ էր առնում իւրաքանչիւր անցորդի առաջ, անճառնի եւ դիւային ծիծաղում։

(*Երեւանեան հրատարակութիւն*, էջ 107)

— *Հը՞, ուրբ հոգին քանիս նմա՞ն էր...*

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 126)

— Հը՞, սուրբ հոգին ինչո՞ւ նման էր...

(*Երեւանեան հրատարակութիւն*, էջ 113)

Նրանց պարտիզում կար մի մեծ աքասիայի ծառ։ Ես նրան շատ էի նմանեցնում աքասիայի սպիտակ ծաղիկին։

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 143)

Նրանց պարտէզում կար մի մեծ ակացիայի ծառ։ Ես նրան շատ էի նըմանեցնում ակացիայի սպիտակ ծառին։

(*Երեւանեան հրատարակութիւն*, էջ 127)

digitised by A.R.A.R.@

...Ինձ անծանօթ մնացին անհունօրէն թաքուն ծալքեր, գծեր, թաւշեայ տարածութիւններ, ես չկարողացայ տիրել ամբողջ մարգարտեայ դաշտին,

(*Պէյրութի հրատարակութիւն*, *էջ* 146)

... Ինձ անծանօթ մնացին անհունօրէն թաքուն ծալքեր, գծեր, թաւշեայ տարածութիւններ, ես չկարողացայ տիրել ամբողջ մարմարեայ դաշտին:

(*Երեւանեան հրատարակութիւն*, *էջ* 128)

Վախը եւ առաջին ուրախութիւնը պաշարեցին ինձ, շղթայեցին եւ ընկղմուեցի առաջին յանցանքի խաղցրութեան մէջ...

(*Պէյրութի հրատարակութիւն*, *էջ* 148)

Վախը եւ առաջին ուրախութիւնը պաշարեցին ինձ:

(*Երեւանեան հրատարակութիւն*, *էջ* 130)

Վերոնիկան երկնուղէշ աղջիկ էր...

(*Պէյրութի հրատարակութիւն*, *էջ* 149)

Վերոնիկան երկրային աղջիկ էր...

(*Երեւանեան հրատարակութիւն*, *էջ* 131)

...Մի կին, մի ծաղկատի կին, բաց է արել իր մարմնի թաքուն գանձերը իմ առաջ ո՛չ միայն առանց ամաչելու, այլ բարբոսալից կարօտով, կարօտով գիշերը բացուող եւ լուսաթաց շոգերին սպասող ծաղիկին:

(*Պէյրութի հրատարակութիւն*, *էջ* 149)

...Մի կին, մի ծաղկատի կին, բաց է արել իր մարմնի թաքուն գանձերը իմ առաջ առանց ամաչելու:

(*Երեւանեան հրատարակութիւն*, *էջ* 131)

— Թո՛ղ գայ, — ասում է Վերոնիկան եւ թեւերը վեր բարձրացնելով, միրգ է քաղում: Նրա ստինքները կարծես ուզում են երկինք թռչել:

(*Պէյրութի հրատարակութիւն*, *էջ* 150)

— Թող գայ, — ասում է Վերոնիկան եւ թեւերը վեր բարձրացնելով միրգ է քաղում: Նրա կուրծքը յուզմունքից կարծես ուզում էր երկինք թռչել:

(*Երեւանեան հրատարակութիւն*, *էջ* 131)

digitised by A.R.A.R.@

Տեսնում եմ մարդիկ քայլում են արագ, լո՛ւռ, սեաթեկուած աչքերով։

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 150)

Տեսնում եմ մարդիկ քայլում են արագ, լուռ, տարուած աչքերով։

(*Երևանեան հրատարակութիւն*, էջ 132)

...Ես նրան անմիջապէս պատկերացրի մերկ... սիս նա լողանում է աւազանում եւ աւազանի սառը ջուրը...

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 161)

...Ես նրան անմիջապէս պատկերացրի աւազանում լողանալիս, եւ աւազանի սառը ջուրը...

(*Երևանեան հրատարակութիւն*, էջ 143)

Իր խալամ կրօնակիցներից շատ քչերը ոգջերթ մաղթեցին նրան։

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 170)

...Իր խալամ կրօնակիցներից շատերը ողջերթ մաղթեցին նրան։

(*Երևանեան հրատարակութիւն*, էջ 150)

Նա քաց է արել նաեւ իր քիւը, որի վրայ, մարգարէի հաճուքեամբ դրոշմուած է հաջին...

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 171)

Նա քաց է արել նաեւ իր արուքիւնը, որի վրայ, մարգարէի հաճուքեամբ, դրոշմուած է հաջին։

(*Երևանեան հրատարակութիւն*, էջ 152)

Նրանք սրտատրոփ ոպասում էին վախճանին...

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 181)

Նրանք սրտատրոփ ոպասում էին վախճանին...

(*Երևանեան հրատարակութիւն*, էջ 154)

Նրա համար աւելի նախընտրելի էր, որ կնոջը բռնէին բռզուքեան մէջ, խայտառակուէր ամբողջ քաղաքում, քան թէ պարտուէր ադամնիների պայքարում։

(*Պէյրութի հրատարակութիւն*, էջ 181)

Նրա համար աւելի նախընտրելի էր, որ ինքը խայտառակուէր ամբողջ քաղաքում, քան թէ իր ադամնին պարտուէր պայքարում։

(*Երևանեան հրատարակութիւն*, էջ 154)

digitised by A.R.A.R.@

Նոր Գիրքեր

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ ՌՈՒՄԱՆԻՈՅ ՀԱՒԱՔԱԾՈՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Manuscrits Arméniens Illustrés dans les Collections de Roumanie

(Հեղինակ՝ ՍԻԼՎԻԱ ԱՃԵՄԵԱՆ)

Գիրքը գրուած է ֆրանսերէն լեզուով, հրատարակութիւն՝ Նիլիկիոյ Կաթողիկոսարանին, հանձնարարութեամբ՝ ֆրանսերէն բնագրին, «Մերիտեան» հրատարակչութիւն, Գուքրէշ, 1982, Քղթակազմ, ծաւալ՝ 25×20 սմ., 92 էջ, 30 գունաւոր արտատպումներ։

Բովանդակութիւն էջ

— *Յառաջաբան* [Ս. Տէր Ներսէսեանի կողմէ] 5
— *Նեթոնական Նիւթեր* 7
— *Ձեռագիրներու Նկարագրութիւն* . . . 17
— *Ծանոթագրութիւններ* 28
— *Աղբիւրներու ցանկ* 31
— *Արտատպումներ* 33

Գիրքը նուիրուած է Ռումանիոյ հաւաքածոներուն մէջ պահպանուած հայկական հինգ ձեռագիրներու ուսումնասիրութեան, բոլորն ալ արտագրուած ԺԴ. դարուն, զանազան վայրերու մէջ.—

— *Տարօնի Աւետարան*, 1306 [*Գլիւժ-Նարոգայի հաւաք. պետ. արխ. Թիւ* 12.]
— *Ցամախուեթայի հաւաքածոյ*, 1310 – 1312 [*Գլիւժ-Նարոգայի հաւաք. պետ. արխ. Թիւ* 15.]
— *Մուրխաթի Աւետարան*, 1346 [*Գլիւժ-Նարոգայի հաւաք. պետ. արխ. Թիւ* 13.]
— *Դաֆիայի Աւետարան*, 1351 [*Գուքրէշի Հայոց Առաքորդարան*]

Ներածականին մէջ, Աճեմեան ընդհանուր եւ ամփոփ գիծերով կը ներկայացնէ ԺԴ. դարուն յատուկ քաղաքական-ընկերային պայմանները, մանկոլական արշաւանքներուն անմիջականօրէն ենթակայ եւ անոնցմէ յորբորբաբար վերի մնացած շրջաններուն մշակութային գործունէութեան պատկերը, այդ ժամանակներէն ետեւ տրուած գաղթը, Մոլտաւիոյ գաղութին առաջացումը, ապա՝ ԺԵ. դարէն եւեթ այդ հայերուն գաղթը դէպի Թրանսիլվանիա [նաեւ՝ ձեռագիրներուն ալ փոխագրումը իրենց հետ] եւ հոն նոր գաղութի մը կազմաւորումը Ղերլայի մէջ, վերջապէս, անոր ալ ասիմիլեանական լուծումը մինչեւ ԺԹ. դարուն վերջաւորութիւնը՝ տեղուոյն մշակութային եւ լեզուական գետնի վրայ։ Այս ուղիներէն կը փրկուին ձեռագիրները։

Երկրորդ մասին մէջ, հեղինակը կը ձեռնարկէ ձեռագիրներուն մանրամասն նկարագրութեան, իւրաքանչիւրին յատկացնելով երկու էջ. կը ջանայ երկուին գործին տարնչուած կենսական հարցերը, այսինքն՝ անոր ստեղծագործութեան ժամանակը, պատուիրողը, տեղը, ծաւալը, բովանդակութիւնը, գծագրիչին ինքնութիւնը, օգտագործուած նիւթերը, ոճը, տիպարներուն ներկայացման կերպը, կենցաղային եւ զարդանկարչական իւրայատկութիւնները, համադրումին ձեւը, գոյները, գեղարուեստական հաւանական ազդեցութիւններ, ձեռագրին ներկայ վիճակը, ժամանակի ընթացքին կատարուած նորոգութիւնները եւ ուրիշ խնդիրներ։

Բացի Դաֆիայի ձեռագրէն, որ 1451ին նուիրուած է Եասիի Հայոց Ս. Աստուածածին եկեղեցիին, եւ հոն ալ մնացած մինչեւ 1944, միւս չորսին առաջին փոխագրութեան եւ հետագայ տեղա-

digitised by A.R.A.R.@

փոխութեանց թուականները անյայտ են։ Մոլոտաւիայէն Թրանսիլվանիա անցնող հայերու խումբ՝ անոնք, ուրիշ ձեռագիրներու հետ, բերուած են, եւ մինչեւ ԺԹ. դարուն վերջաւորութիւնը հաւաքուած են Զէյթունի մէջ, հաւանաբար ցուցադրուած 1904ին, քաղաքին Ս. Երրորդութեան Եկեղեցիին մէջ։ 1960ին, անոնք վերայայտնուած են Պատմութեան Թանգարանին մէջ, 97 ձեռագիրներ բաղկացած հաւաքածոյի մը մէջ։ 1975ին, բոլոր ձեռագիրները վերկանգնեցան կ'անցնին Գլիւտ-Նարոգա նահանգին, Զէյթուն քաղաքին Պատմութեան Թանգարանին արխիւներուն։

Ինամուած եւ նիւթին հանգէպ հեղինակին խանդավառութեամբ կենտրոնակ այս սերտագրութիւնը, նոյն ժարդին մէջ արդէն ասկուաթիւ իր նմանները պէս՝ սառ լեզուով մը գրուած ըլլալուն համար, կրնայ անմատչելի մնալ ընթերցող հասարակութեան կարեւոր մէկ մասին։ Այս թերութիւնը դժուարութեան, նոյն ժարդին մէջ աշխատողներու ջան փոքր թիւին, ինչպէս նաեւ արուեստի պատմութեամբ զբաղողներու նեղ-մասնագիտական մասնագիտութիւնները պատճառով, մասնագիտական արուեստը գործնականապէս մնացած է վերացական ժարդ, գուշակական արուեստներու սահմաններէն ներս, եւ կարծեք վերածուած մշակութային պերճանքի երեւոյթի մը։ Բացայայտ է, որ ժամանակաւորապէս մեր մշակոյթի պարագային, ուր գոյութիւն չունի գրաւոր պատմութիւն ունեցող նկարչական արուեստ մը, մանրանկարչական արուեստը կը հանդիսանայ ժողովուրդի դիմադիմին արտայայտութեան ինքնուրոյն արտայայտութիւններէն մէկը, եւ իբրեւ այդպիսին՝ անիկա կը դառնայ անհրաժեշտ տարր՝ մշակութային լայն համայնապատկերի մը վերականգնումին համար։

Անմեծանի այս գործը, եւ նման ուսումնասիրութիւններ բոլոր ժարդերուն մէջ, կարեւոր մեկնակէտեր են, նախանձելիք՝ հետագայ համաշրջական աշխատանքներու ուղղութեամբ։

Ս. Գ. Տ.

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆԻ «ԲԱՌԸ»

Պետրոս Հերեանի բանաստեղծական նոր հատորը, «Բառը...» (Գէյրութ, 1983), կը զարդարեալ երեք բաժիններով՝ «Նարծուումներ», «Ալլտահին բեռը» եւ «Օղակին մէջ»։ Հերեանի բոլոր տողերուն մէջ հասարակաց գիծ է մարդկային մտահոգումը, ներքնայական ցնորմութեամբ լեցուն, ազդային լեղափոխական պայքարի երկայնքով հրկէջ։

Երիտասարդ բանաստեղծը այնքա՞ն խիզաւորեն նեան է իր «Զինեալ Որդին Աստուծոյին», ուր կը կարդան Լիբանանի ազատագրակաց հայ մարդուն դիմագիծի նոյնացումը Աստուծոյ Որդիին բազմախորհուրդ ու թափանցիկ պատկերին հետ («Մինչեւ տարուբեր ու ժպտուն»)։ Երիտասարդ հայ մարդը այլեւս կը լեցուի Մեռնիլ Մահաբեր հաւատքով ու կը դիմեալ այլօրէն տարբեր իրաւակիցներ մը, իր տարուբեր գոյութեամբ, որ կը պարփակէ խանդը ուեւտարանական բոլոր գրգռանքի հատիկներուն ու, մա՛նաւանդ՝ այլոց երկունքը «Հայաստանի սահմաններուն»։

Մինչեւ մեռնիմ ես,
Լիբանանցոց վերջինը հետ՝
Իր պատկերով գծագրուած
Հայաստանի սահմանները մնացին։

Զարդեղ է բանաստեղծին հաւատքը դալիքին նկատմամբ, քանի որ ան կանխապէս ժպիտով մը դ'ուսնէ, թէ հին Անատոլուն

կը պայթի յանկարծ...

(ԱՆԱՏՈԼՈՒ)

ու կ'ակնարկի Անգարան։ Ահա ինչու

Ցայնժամ Ինոն,
Եղբայրութեան եւ հաշտութեան
Դարտ Ինոն,
Փամփուշտակալը խոցեր Եմաս խաչկալ կապած,
Ջէն ի ձեռին
Պիտի նրկիր ա՛լ ժամանակ վերստին...

(ԱԽՕ)

*
**

Հերեանի տաքը լաւագոյն ձեւով կը դրսեւորէ վիճակ-արամադրութիւններու ալիքաւոր կշռոյթը կամ բիւրեղացած պարզութեան մը մէջ նեկտարանացած հոգեվիճակներու ծնունդ ֆանթազմագորիք ու կենդանի կացութիւն մը։ Ներքին փնտրտուք, փլուզումի եւ անպայման պայծառացող կերտումի մը բիմադրութիւն, ուր խորը կը ծնի, ի՛նքնայնի («Ծաւալապաշտ», «Ճանճարձակ»), բազմապատուած տեսիլներով եւ տեղատարափով ինքնատիպ պատկերներու, որոնք կեանքի շարժումն իսկ են, զոր ու ծիծաղ, գեղարուեստական եւ իրական զոզոնջ կամ քմայք։ Բառը՝

Որ թուղաւոր ճեմի պէս
Կ'նրբերեկէր մարմնիս մէջ...։

(ԲԱՌԸ)

Պ. Հերեան իր պատկերներուն մէջ ինքզինք կը ճանչնայ՝ անկեղծ ու բարի։ Պատկերները հո՛ս պայծառուցիկ առաձգականութիւն մը կը կրեն, որ կարենա բանաստեղծի իւրայատուկ խառնուածքին բխումն է իր տողերու ընթացքին։ Զեն ամփոփ։ Ի՛տզմկեն, կը գուան։ Անոնք կ'բանն «Թուզմեր» բայրն պզլիչ, որ անկասելի պահանջատենկութիւն է, էջերու երկայնքին աշխատող Հերեանի քերթուածները կը յուցուբերեն նաեւ հայկէն բառին նկատմամբ լայն հոգածութիւն եւ ըղարձակ սէր, ուր վաւերականորէն կ'ապրեա վաղեմի լեզուին, մարմնի, մտքի ու հոգիի մասնիկներով ըմբոշխնուած։ Գերազոյն ըղձանք մըն է լեզուն, ցանկութեան առարկայ, որ կարծես մէնա կը յուխանեալանցանէ կեանքերու խորքերուն։

digitised by A.R.A.R.@

դանի երգը, այլեւայլ ապրումներու եւ փորձառկումներու անհաստատ ու անիդամ վայրը։ Արդարեւ, Հերեանի ամէն մէկ քերթուածը գոյութենական ապգնաստի մը լեզուականացումն է, ուր երիտասարդ մը կ'ըսէ իր տրամը, որ սերունդի մը տրամն է անկասկած։ Տրամին բեմադրումը կը յատկանշուի իր անխարդախութեամբ ու խօսքի հարազատ թափանցիկութեամբ։

***

Բիւրեղացման սիրոյն թեւարկող սեղլապաշտ եւ ուժական առք է «Բառը...», որ ընթերցողը կը մղէ անակնկալ յանձնառութեան եւ զգացական դիրքորոշման։ Կարելի չէ անտարբեր դիտել երիտասարդ բանաստեղծին սոդերուն հոսքը։ Երգի ու կարօտախտի սիրոյ իրականութեամբ լեցող արտադրութիւն, ուր բանաստեղծականը, որպէս մթնոլորտ զգացողութեան ներգործութեամբ, կը պեղէ հոգին ու բանաստեղծը կը վերահաստատէ իր տեսանողի դերին մէջ։ Բանաստեղծութիւնը բնութիւն է ու խորհուրդ եւ արուեստագէտը կարելիին եւ իրականին միջեւ դեգերող սիպար մարդկային։

ԵՌԻՇԻԿ ՏԱՄՆԱԳԵՏԵԱՆ

ԳԱԼՈՒՍՏ ՊԱՊԵԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԸ»

Տուեալ պահին պիտի գիտնալ ցամաքի ու երկնքի յարակցութիւնը, լոյսի թեքման ասոխանը, ասուերի խուութեան չափը, թեքուս ոպանալ լոյսի պղտորմանը, երբ սովորաբար լուսանկարչական գործիքը սիրում է ուժեղ լոյսի քաղակայութիւնը, որքան թիպոտ՝ ամբողջ լաւ, այդպիսով իրերը իրենց բնականն վիճակին են վերադառնում, ապա հարիւրդրական երկվայրկեանի որոշում, վերադարձ չկայ, եթէ նախորդ բազմիցս փորձերը մի բան են ուսուցել։ Տուեալ պահին արուեստագէտը այլեւս չի մտածում, մըտածումը այլեւս դարձել է բնազդ, աչքն ու ապակեայ ոսպնեակը նոյնացել են, մէկը միւսի անբաժան մասը։ Ինչ-որ բնազանցական բան է կատարւում, կանգ է առել շնչառութիւնը, միակ իրականութիւնը ոսպնեակի մէջ արտացոլուած իրականութիւնն է, պիտի ստացուի՞, թէ ոչ։

Գալուստ Պապեանի «Ազգայ Հայաստանը» նրբանաքանով լուսանկարների հաւաքածոն մինչ այժմ ցուցադրուած թորոնթոյում, Մոնրէալում եւ Նիւ Եորքում, նման բազմահարիւր փորձերի արդիւնք է՝ պատկերելով Հայաստանը, ա՛չ այն Հայաստանը, որ գրաստրէլիներն են տեսնում, այլ այն միւս, մնայա՛ւն Հայաստանը, որ միշտ այնտեղ է, ոսկայն շատերը չեն տեսնում։ Այդ այդպէս է, որովհետեւ լուսանկարչական գործիքի բոնած իրականութիւնից առաւել տարբեր է Պապեանի ընկալած իրականութիւնը, որը երբեմն թաւլում վիպերգութիւն է, մերթ ապրող դիմագծերի քարէտագրութիւն, իսկ յաճախ կեանքի արտիսուն մի բեկոր՝ լերկ ու անսնթեւեթ, չէ՞ որ շատ ուժեղ է Հայաստանի արեւը։

Մարդն է Պապեանի արուեստի կորիզը, հայ մարդը իր հողի վրայ, ոսկայն հայ մարդու մի ընդհանուր նորմ մարդն է իր մտաւեւեռումը, մարդը իր հարանիքի պահին, մարդը իր մենութեան պահին, մանուկների ոսնահանդէսը, որը փաստորէն ոսնահանդէս չէ, այլ՝ մանկութեան երջանկութեան խոյտանքը, ապա՝ դիմանկարները յայտնի ու անյայտ մարդկանց, սեւի ու սպիտակի հաղորդութիւնից ստեղծուած մոխրագոյնը, ուր նոսան է կեանքերի պատմութիւնը, յետոյ՝ բազմութիւնը իր ասուրեայ ամենդին երթի մէջ, ապա՝ արձանացած մեկուսի արտայայտութիւնը կնոջ, մի պահ նաեւ գտնելով մի ազնիւ, մարդը ալեսատանքի պահին, ինքն ու հողը, ամբողջ առաս է ցերեկը, որ հորիզոն չկայ, փոխարէն՝ զդում ես նրա մտածումները։ Պապեանի խոյանքների մէջ անգամ ներկայ է մարդը, հինաւուրց եկեղեցիները լոկ նիւթ ու ձեւ չեն, գիտես, որ Ս. Հռիփսիմէի միջոցով արուեստագէտը պատմութիւնն է արձանագրել։

Իր ֆորքէն ոսկայն դիմանկարներն են, որոնց մէջ Պապեանը յափշտակել է ներքին մարդը, ներքին դիմագիծը, որը լուսանկարի միջից պատմում է իր կեանքի պատմութիւնը։ Աչք դէպքում նիւթական մթնոլորտն ու առարկանները մնում են պղտոր ենթախաւի վրայ չխանգարելու էականը՝ միամամանակ ստեղծելով այն խորհրդաւոր ներդաշնակութիւնը, որը անհրաժեշտ է մթ ու արիւն եւ ներկայութիւն պարդեւելու ենթակային։ Այդ դէպքում սեւը յագեցած է, նոյնիսկ խիստ, կան սեւի շերտերը, որոնց համադրումից կերպարանք է առնում պատկերը, իր տարիները ուսած մարդը, ամբողջական նկարագիրը, քարացած պահը իր կեանքի, որը ոսկայն խոսում է, շարունակում, չդիտես ի՞նչ է ապասում յաջորդ պահը։ Այստեղ լուսանկարչական գործիքը լոկ միջոց է, երկրորդական ենթահողի վրայ։ Փաստօրէն, Պապեանի գործերը գրոյցներ են մարդկանց հետ, այդպէս ասած՝ ներաշխարհային հաղորդակցութիւն, որը թարգմանուելով գտնում է արուեստ։ Ինքնանք չկայ, չկան միտումնաւոր ճիգեր կամ թէ մտացածին արուեստանքի խաղեր, եթէ ժամանակին կային, ապա այլեւս դարձել են բնազդ՝ ինքնաբերաբար ներգործելով պատասի վրայ որպէս կրաւորական տարրեր։ Կենտրոնում մնում է մարդը։

«Ազգայ Հայաստանը» հաւաքածոն, ուրիմն, ձգն է Հայաստանին, ա՛չ թէ վիպականացնելու Հայաստանը, այլ ներկայացնելու Հայաստանը այնպէս՝ ինչպէս որ է՝ իր կեանքով ու կենցաղով, իր սերունդներով ու դերասանաբներով, իր անցեալով ու ներկայով, իր նիւթական առարկայութեամբ ու, մա՛նաւանդ՝ իր հոգեկան դիմագծերով, որը, աւելի լայն առումով, հոգին է Գալուստ Պապեանի։

ՅԱԿՈԲ ԿԱՐԱԳԵՆՑ

digitised by A.R.A.R.@

ՍԱՑԱԹ - ՆՈՎԱՅԻ ՄԷԿ ՁԵՌԱԳՐԻՆ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ

Նորհրդային «Նովոսթի» մամլոյ գործակալութիւնը, Մեծամեծերի վերջին օրերուն, լիբանանեան արաբատառ մամուլին հաղորդեցած իր մշակութային լուրերուն մէջ, սեղ առած էր «Սայաթ-Նովայի մէկ ձեռագրին յայտնաբերումը» խորագրեալ հետեւեալ թղթակցութեան, որ լոյս տեսաւ «Մաֆիր» օրաթերթի (նախ այլ թերթերու) Ուրբաթ, 30 Սեպտեմբեր 1983ի թիւի մշակութային էջին մէջ:

Սառնու թարգմանաբար կու տանք վերոյիշեալ լուրը, պահելով բնագրին հարազատութիւնը։

«Հրազդան քաղաքի (Հայաստան) բնակիչներէն եւ գիրհարու սիրահար Պետրոսեան չէր ակնկալեր, որ ընտանիին գանձը՝ Գրիգոր Նարեկացիի «Մատեան ողբերգութեան» ձեռագիր հատորը, որուն գրչագրումը կատարուած է 18րդ դարուն, պիտի օժանդակէ գիտնականներուն մեծաձայակ հայ այլ բանաստեղծի մը կեանքի նոր տուեալներուն վրայ յայտնի սփռելու գծով։

«Այս հատորի էջերէն մէկուն մէջ, ձեռագրագէտները գտան գեղեցիկ եւ յստակ տառերով գրչագրուած արժանագրութիւն մը, որ կը պարզէ նայկական միջնադարեան բանաստեղծութեան այս կարկառուն ստեղծումը ընդօրինակող անձին ինքնութիւնը։ Ձեռագրին էջերէն մէկուն վրայ գրուած է. «Գրչագրուած Ստեփանոս Վարդապետի ձեռամբ, կոչեցեալ Սայաթ-Նովայ»։ Բայց, իրականութիւն, հետաքրքրականը այս նոյն հատորին մէջ արձանագրուած այլ գրութիւն մըն էր, որ կը մատնանշէր, թէ անոր գրչագրումը կատարուած է Կիլան քաղաքի (Իրան) Էնզելի եկեղեցւոյ մէջ, 1761ին։

«Երեք լեզուներով՝ հայերէնով, վրացերէնով եւ ազրպէյճանաբէնով ստեղծագործած Սայաթ-Նովայի կենսագրավէպին մէկ մասն են անոր կապուած առասպելները, ուր կան ոչ քիչ թիւով անծանօթ ճշմարտութիւններ։ «Աշուղներու թագաւորի (այսինքն՝ ժողովրդային բանաստեղծներու թագաւոր) կեանքին վերջին տարիները կ'արծարձուած ուռումնասիրողներու յստակ շահագրգռութիւնն, որովհետեւ այս տարիներուն է, որ իսկ ատելութիւնն թիրախ դարձած զրպարտուած բանաստեղծը Թանգայ ձեռնադրուեցաւ։ Գրականագէտները ցարդ կը կարծէին, որ այս դէպքը տեղի ունեցած է 1766ին եւ, տեսասիկ, ցոյնիցին Սայաթ-Նովան որքացրեց այս պնդը, իր գրչագրած Գրիգոր Նարեկացիի հատորի էջերուն գտնելով այլ թուական մը։

«Նմանապէս, այս ձեռագիրը լոյսը սփռեց բանաստեղծի կեանքին մէկ այլ իրականութիւնն վրայ։ Իր երեք գործերուն մէջ, Սայաթ-Նովան կը յիշատակէ իրեն՝ մինչդեռ, գրականագէտները ո՛չ մէկ ապացոյց ունին, որ ան հոն գտնուած է։ Գրականագէտները իրեն յիշատակումը պարզապէս կը նկատէին գրական ընկալեալ սովորութիւն մը եւ արդիւնք՝ անոր բանաստեղծական երեւակայութիւնին։ Սակայն, Մատենադարանին ցուցակուած Պետրոսեանի այս ձեռագիրը եկաւ հիմնովին բնջնալ այս հարցին հետ կապուած բոլոր կասկածները։

«ՀԱՑՖԻԼՄ»Ի ՆՈՐ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐԸ

«Հայֆիլմի» շարժապատկերի շենքերուն առարատ է շարք մը նոր ժապաւէններ։ Այս ժապաւէններուն շարքին կը պատկանի Հայրենի աբեմակերը Ազատ Այվազեանի վարուած լապտերը» անուն ժապաւէնը, որ նուիրուած է Թիֆլիսի հայ գեղանկարիչներու ներկայացուցիչներէն մէկուն՝ Վանս Յովսեփեանի ստեղծագործական եւ կենսագրական բարդ հոլովոյթին։

Մարդու եւ բնութեան փոխյարաբերութիւնները բարդ եւ արդիական հարցերը լուսաբծակի առակ կ'ստանէ Հ. Մաթեւոսեանի բեմագիրով (սենարիօ) պատրաստուած «Տէրը» ժապաւէնը, որուն նկարահանումը վերջերս աւարտած է բեմագրիչ Բագրատ Յովհաննիսեան։ Իր այս գործով, հայրենի անուանի արձակագիրը հատու գիծերով ուսանելի կը դարձնէ անտառապահի մը ներքին յուզաշխարհը։ Այսպէսով, հանդիսատեսը կը ծանօթանայ Մաթեւոսեանի կերտած ա՛յն անտառապահին, որուն համար հայրենի ծառը, դաշտը, գետը, հողը եւ այդ հողին վրայ ապրող անցեալի, ներկայի ու ապագայի սերունդները կը կազմեն անխոցելի ամբողջութիւն մը՝ ինչպէս կեանքի չդիմացին անքակտելի օղակները։

*Բեմագրիչը՝ Գրիգոր Մելիք-Ասլանեան, իր կարգին նկարահանած է «Վերադարձի գինը» ժապաւէնը։ Հանդիսատեսին կը ներկայացնէ ողբերգական դրուագներ, որոնք տեղի ունեցան Երկրորդ աշխարհամարտի տարիներուն։ Ֆաշիստական գրաւումի ենթարկուած Ռուսիոյ մէջ, գերեվարուած հայ զինուորներ, ինչպէս նաեւ ռուս զինուորներ, ինչպէս նաեւ ռուս զինուորներ, ինչպէս նաեւ ռուս

գական պատմութիւն մը, թէ Երկրորդ Աշխարհամարտի տարիներուն, Երբեմն Թէոդոսիա քաղաքին մէջ ինչպէ՛ս կարելի եղած է փրկել Յովանը-կարիչ Յովհաննէս Այվազովսկիի պատասխաններէն մէկը։

Հայ մշակոյթի արժէքաւոր այլ դէմքի մը՝ Միքայէլ Նալբանդեանին նուիրուած է Հեսնարի՛ Նրան անուն ժապաւէնը, որ երիտասարդ բեմադրիչներ Թուրէն եւ Գրիգոր Գէորգեանցները ներկայիս կը նկարահանեն Մոսկուայի, Լենինգրատի եւ Ռիգայի մէջ։

Բեմադրիչ Ներսէս Յովհաննիսեան ներկայիս կ'աշխատի «Հրդեհ» կատակերգական ժապաւէնին վրայ, որ կը ներկայացնէ ժամանակակից հայ գիւղի կեանքը։ Ընթացքի մէջ է նկարահանումը նոյն սեռի այլ ժապաւէնի մը՝ «Անոյշ մայրիկը»։

«Հայֆիլմի» յառաջիկայ ծրագիրները կ'ընդգրկեն անզուգական մանրանկարիչ Թորոս Թոսլինի եւ նշանաւոր Արովեանի նուիրուած շարժապատկերները, ինչպէս նաեւ՝ Բաֆֆիի, Գերմ Գոչիանի եւ ժամանակակից կարգ մը հեղինակներու որոշ գործերուն նկատմամբ։

ՍՐԱՄ ՂԱՐԱԲԵԳԵԱՆԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Ամերիկահայ երիտասարդ երաժիշտ-խմբավար Սրամ Ղարաբեգեանի դիկավարութեամբ, Մեպտեմբեր ամսուան ընթացքին, Միքիգանի Սենեկայիին նուագախումբը Գոսթրնի մէջ տուած է երկու ելոյթներ, երկրորդը՝ կիրակի, 18 Մեպտեմբերին, «Մանորդ Թատրոնի սրահին մէջ, երաժշտասէր հոկիկ հասարակութեան մը ներկայութեան։

Որակաւոր 20 նուագածուներէ բաղկացած նուագախումբը, ամերիկահայ այս խմբավարի ճիգերուն շնորհիւ անգամ մը եւս արդարացուցած է իր վրայ դրուած յոյսերը, ցուցաբերելով երաժշտական բծախնդիր ժամեցում մը։ Գաթի, Մոցարթի, Քոփլանի, Գրիմբրնի եւ անուտի այլ երաժշտահանելու գործերէն ընտրուած կտորներուն մեկնաբանութիւնը արժանացած է արուեստասէր եւ ժամանակակ լրջանակներու քարմ դնահատանքին։

«Պոսթրն կլոպի 21 Մեպտեմբերի թիւին մէջ, երաժշտական քննադատ Ճերիք Հէնրի, իր վերլուծումները եզրակացուցած է հետեւեալ տողերով. «Սիմֆոնեամ տաղանդաւոր համայր մըն է, որ կրնայ հպարտանալ մինչեւ հիմա իր արձանագրած յաջողութեամբ։ Յարատեւ աշխատանքով՝ հոմոյրը կրնայ հրաշալի ուսուցչուհի մը դալ»։

ՓԻՐԱՆՏԵԼԼՈՅԻ «ՎԵՑ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Մանաւանդ պաղափար մը կամ խորհրդանիշ դարձած ստեղծագործութիւն մը պատկերով ցայտունցնելու արուեստէն նեղոյլ մըն է Ֆրանսական թերթ մը ասնուած վերի նկարը, ուր ակնարկ համադրութեան մը մէջ կ'ուրուագծուին քաղաքի տարբեր հասարակութիւնները՝ «վեց անձնաւորութիւններ, որոնք հեղինակ մը կը փնտռեն»։

Թատերական աշխարհին մէջ յայտնութեան մը արդար համբաւը եր վայելէ «վեց անձնաւորութիւններ», որ նախանձը շարժեց ժամանակակից թատերագիրներուն եւ անոնցմէ հրեռանք մը պատճառեց թատերասէր հասարակութեան՝ իր հայրենիքին եւ եւրոպական մեծ ոստաններուն մէջ։

«Վեց անձնաւորութիւններ» զգալի գէր կատարեց նաեւ թատերական յղացքներու յիշատակման մէջ, բայց եզակի իրագործում մը, ինչպէս կը պատահի առհասարակ բոլոր գլուխգործոցներուն։

Լուրեր Փիրանտելլոյի այս գործին թարգմանութեան առաջին էջերը ներկայացուցին մեր նախորդ համարով։ Մնացեալը պիտի ասնի առելի լայն ծաւալի մը վրայ, երկու թիւով, հոկտեմբերին ու նոյեմբերին։

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀՈՂ, ՄԱՐԴ ԵՒ ԳԻՐ

— Տպաւորապաշտ էջեր —

● Հրատարակութիւն Հայկ Սէրէնկիւլեան գրական մրցանակի, թիւ 8, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարան, Անթիլիաս, 1983, 273 էջ:

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆ

ՁԱՓԱԾՈՅ ԵՐԿԵՐ

● Հրատարակութիւն Գէորգ Մելիտինեցի գրական մրցանակի, թիւ 17, վերիրատարակութիւններու ֆոնտ, Անթիլիաս, 1982, 512 էջ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

Մ. ԻՇԽԱՆ

ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՍ

(Ցուշեր եւ տպաւորութիւններ)

- ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ
- ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ
- ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ
- ԼԵՒՈՆ ՇԱՆԹ
- ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ
- ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ
- ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

digitised by A.R.A.R.@

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

PAKINE

REVUE MENSUELLE

LITERAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամներ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու

ՎԱՀԷ ԲՐՈՒՏԵԱՆ

B. P. 11-8404 - Beyrouth - LIBAN

Tel. 296898

ايلول ١٩٨٣

digitised by A.R.A.R.@